



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6570

28
L-66

Գ. Հովհաննես
1 OCT 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ՀՀ ԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Հ. Հ. Հ.

10 APR 2013
2005 TSO

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱԽԱՆՈՑԻ

200
251-61

200
251-61

28
5-66

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ


ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

10
13
00
06
11



ԳՐԻԳՈՐԻԱՆ ՔԱՀԱՆԱՑ ԵՐՁՆԿԵԱՆՑ

(Կրօնուսուց Տիեզիսի նորին կայսերական Բարձրութեան Մեծ Խշան Միհամէ^հ
Նիկոլայէիչի արական Երկրորդ գիմնազիոնի):



S. Փ Խ Ի Ս
Տպարան S. Մ. Ռոտինեանցի
1906

«Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու վարդապետութեան դէմ ոչինչ չէ գտնուած սորա մէջ»:

Գրութիւն Գիւանի Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց՝ 16-ից փետրուարի 1906 թ. № 140. Ս. էջմիածին»



Ա Բ Շ Ք
Տպագրութիւն Ա. Յ. Խ. Խ. 1906
3081

Ա Զ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

1. «Ասու ածառւնչ» ս. Գիրք Հին և Նոր Կտակարանների.
2. «Թուղթ լնդիանցական» ս. Ներուկ Շնորհալու.
3. Ս. Գրիգոր Աստուածաբանի և Բարսեղ Մեծի բարոյականութեան և կրթութեան վերաբերեալ երկասիրութիւնները.
4. «Դպրոց բարուց» Պլանշար գաղղիացու, թարգմանութիւն
- Հ. Մանուկ վ. Քաջունու.
5. «Քրիստոնէական ուսումն» բարոյականութեան մասին» Մարտենպէն եպիսկոպոսի,
6. «Գծեր Քրիստոնէական բարոյագիտութիւնից» Ա. Պօկրովսկու, որի ուղղութիւնը և ոճը ամենից աւելի եմ աչքի առաջ ունեցել և օգտուել. այս աշխատութիւնը Ուսուաստանի պետական գիմնազիոնների վերջին դասատան երկսեռ ուսանողների համար լինիր գործածական դասագիրք և ընդունուած, որի մեջնութիւնը ճիշտ է և պարզ, դատողութիւնները կանոնաւոր և կատարեալ, իսկ բովանդակութիւնը գովանի կերպով «Ընդարձակ Քրիստոնէական վարդապետութեանը» մօտիկ»:

Գրիգորիս քահ. Երգնկեանց:
1906 թ. Տիվիս:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՑՈՒԹԵԱՆ ԿԱՊԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱ-
ԽԱՏԻ ՈՒՍՄԱՆ ՀԵՏ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՑՈՒԹԻՒՆԸ շատ սերտ կապ ունի
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ հաւատի ուսման հետ, որը մեղ բացատրում է ՔՐԻ-
ՍՏՈՆԵԱԿՈՒԹԵԱՆ ամբողջ բովանդակութիւնը և պարզում, թէ՝ 1) Աս-
տուած Բնչ յարաբերութիւն ունի աշխարհի և մարդու հետ, 2) մար-
դուս նպատակը և կոչումն Բնչումն է կայանում և 3) ալդ նպատա-
կին հասնելու համար Բնչ միջոցներ պէտք է զործածել. Բացի գո-
րանից, պահանջում է, որ մեր խրացրած հաւատի ճշմարտութիւն-
ները արտալայտուին մեր կեանքի և զործունեութեան մէջ, որպիսի
ցանկութիւն առաջ է զալիս նոյն իսկ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ հաւատի
լատկութիւնից, որովհետեւ, Առաքեալի ասելով, նա՝ բնականաբար՝
պէտք է տողորոտած լինի սիրով և թէ նորան համապատշաճ բարի
զործերով (Գաղ. 5-6). Հաւատը, եթէ սէր և բարի զործեր չ'ունի,
մեռած է և անզօր, որը և մեր փրկութեան համար երբէք չի կա-
րող նպատաւոր լինել. — «Յիսուս-Քրիստոսի մօտ ոչ թլպատու-
թիւնը կարող է բանի տեղ անցնել, ոչ էլ անթլպատութիւնը, այլ
միան հաւատը, որ սիրով զործ կ'զրուի» (Գաղ. 5-6) և թէ՝ «տա-
ղանդը, որ հաւատն է, և տաղանդների շահը, որ ընտիր զործերն
են» (Թուղթ ընդհանր. Ներս. Ծնորհալու): Աւեմ, թէ՝ Բնչպէտ
պէտք է մենք հաւատի համատ ապրինք և զործ կատարենք,
ալդ մեղ կ'պարզէ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ բարոյագիտութիւնը. Նա մեր
առաջ բաց է անում Աստծու բարոյական օբէնքը և նորանից ըըդ-
խող ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ մարդու բարոյական պարտականութիւնները. Ալդ-
ովիսով՝ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ հաւատի ուսութը և բարոյագիտութիւնը մէկ
ամբողջի միաբն երկու կէսն են կազմում և մէկը միւսին պարզում: Եւ
Բնչպէտ որ հաւատը չի կարող առանց սիրով և բարի զործերի զոլու-
թիւն ունենալ, այնպէս էլ սէրը և բարի զործերը չեն կարող առանց
հաւատի մնալ, որովհետեւ անկարելի է, որ Աստծուն չ'հաւատացող
մարդը նորան ճշմարիտ կերպով սիրէ. — «Առանց հաւատի անկա-
րելի է Աստծուն հաճոլանալ» (Եբր. 11-6):

¶

ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՕՐԵՆՔԻ.

Աստուած մեզ բարի գործեր անելու համար է ստեղծել (Եփ. 2-10) և այնպիսի միջոցներ տուել որ մանք նոցանով կարողանանք բարի գործերը չար գործերից ջոկել։ Այդ միջոցները երկու տեսակ են— մէկն է Աստուածալին ներքին օրէնքը, կամ խղճմտանքի վկալութիւնը, իսկ միւսը՝ Աստուածալին արտաքին օրէնքը, կամ Աստծու պատուիրանները։ Որովհետև այդ օրէնքով է բարուապէս բանական և ազատ արարածների կեանքը և գործունէտիւնը որոշուում, այդ պատճառով՝ դա բարուական օրէնք էլ է կոչւում։ Աստուածալին ներքին օրէնքը ուրիշ կերպ կոչւում՝՝ բնական—բարոյական, իսկ արտաքինը—զերբնական կամ Յայտնութեան օրէնք։

ԲՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ.

«Բնական բարուական» օրէնք ասելով՝ պէտք է հասկանանք մին օրէնքը, որ մեր հոգու մէջն է գտնուում և մարդուն պարզում, թէ՛ ինչն է բարի և ինչը՝ չար, և կամ՝ այդպիսի դէպքերում՝ նա ինչպէս պէտք է վարուի և ինչից խուսափի։ Աստծու վկալութեան համաձայն ալդ օրէնքը մեր սրտերի մէջ է գրուած, այնպէս որ Յայտնութեան օրէնք չ'ունեցողները այդ բնական օրէնքով են հրահանդում—[«Օրէնք չ'ունեցող հեթանոսները՝ բնականաբար՝ օրէնքի գործեր են անում. օրէնք չ'ունենալով՝ իրանց համար օրէնքը իրանք են դառնում և այնպիսի օրինաւոր գործ ցոլց տալիս, որը գրուած է իրանց սրտերի մէջ» (Հոռվմ. 2 14-15)]։ Բնական բարուական օրէնք կրողը և արտալաւողը խղճմտանքն է, որ մեզ բարուական օրէնքի գործութիւնն է լայտնում և դրդում՝ անխափան կատարել նորան և երբէք չ'զրժիլ. նա էլ մեր առաջ մեր բարուական կեանքը և գործունէտիւնն է բաց անում և ապա, բարուական կեանքի պահանջները աչքի առաջ ունենալով, վերջինների միմանց հետ ունեցած համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը վկալում։ Ալպէս ուրիմն՝ նա իւր գործերով և ազդեցութիւններով մեր կեանքի զեկավարը, վկան և դատաւորն է հանդիսանում։ Այդ դէպքում մարդուս խղճմտանքին ամենավսեմ լատկութիւնն է տրում։ Զուր չէ, որ հնուց խղճմտանքը «Աստծու ծայն» են անուանում։ Նև ով որ ամեն

դանում նորա հրահանգներին կ'հնազանդուի, նա էլ խակապէս իւր մէջ կ'ունենայ թէ բաղդաւորութեան և թէ երջանկութեան աղբիւր։ Հոդիպէս կ'միսիթարուի և կ'հանգստանայ մինչեւ անգամ այն սարսափելի բոպէներին, երբ մահը կ'մօտենալի Միայն ալու մարդու հոգու մէջ, որը նորա արամաղրութիւններին հակառակ է գնում, այնպիսի վրդովմունք և այնպիսի շփոթմունք կ'բարձրացնէ, որ նա, խղճի խալթից հալածուած, չի կարող կամ փախչելու և կամ թադշելու տեղ գտնել։ Դորա օրինակը մենք տեսնում ենք կալէնի մէջ, որն իւր եղբակը Արէլին սպանեց։

Բայց որովհետև խղճմտանքը մեր հոգու զօրութիւններից մէկն է, ուստի՝ նա սերտ կապ ունի նորա հետ և կախումն նորա զարգացումից և կատարելութիւնից։ Այդ պատճառով՝ խղճմտանքը զանազան մարդոց մէջ զանազան է լինում՝ և մինչեւ անգամ միմանց հակառակ, որի համար և՛ Ս. Գրքումն նա, մի կողմից, կոչւում է «բարի, մաքուր և անարատ», իսկ՝ միս կողմից—«չար, արատաւոր, պիղծ և խանձուած»։

Մարդուս մեղքի՝ մէջ ընկնելուց իւտ, հոգին վնասուելով, խղճմտանքն էլ նսեմացաւ։ Այդ պատճառով՝ բնական բարուական օրէնքը, մեր խղճմտանքով հրահանգուած, թէ և ինքն ըստ ինքն կարևոր է և բաւական արարածներով Որարչի լաւիտեննականութիւնը, զօրութիւնը և աստուածութիւնը ձանաչել, միայն սրտերում զրուած մարդոց վերաբերեալ, որոնք «իրանց խորհուրդների մէջ ունախացան, մեղքի մէջ ընկնելուց իւտ, սրտերն էլ անմոռութիւնով նսեմացըրին և բարուապէս ապականուեցան» (Հոռվմ. 1 19-21)։ —բաւարար չի համարում նորա համար, որ մարդու, նորա զեկավարութեամբ, կարողանայ բարուական կատարելութեանն և իւր կոչմանը հասնիլ։ Այդ անբաւարարութիւնը նորանից է երեսում, որ ապականուած մարդը, նորա միջոցով, իրան պարզ չէ պատկերացնում Աստծու կամքը, ուստի և՛ չի կարողանում ոչ բարուական կեանքը և ոչ էլ զործունէութիւնը գնահատել, թէ՝ արդեօք նա բարուական օրէնքին համաձայն է, թէ՝ ոչ։ Այդ պատճառով՝ մարդու, թէ և բարութիւն է զանկանում և նորան ձգուում, բայց և այնպէս նորան չ'ձանաչելով, անում է ոչ թէ այն, ինչ որ ցանկանում է՝ այս ինքն—բարութիւն, որը և՛ կատարում է։ [Հոռվմ. 7 14-15, 18-19]—«Դիտենք, որ օրէնքը հոգնոր է, բայց ես մարմնաւոր եմ, մեղքի տակ վաճառուած, որովհետեւ ինչ որ անում եմ, չեմ հասկանում, չէ թէ ինչ որ կամննում եմ, այն եմ անում, այլ ինչ որ ատում եմ։

ալն եմ անում», Գիտեմ, որ իմ ներսի կողմը, ալսինքն՝ իմ մարմնիս մէջ, ոչ մի բարի բան չ'կալ, ինչու որ՝ ես կամք ունիմ, բայց բարին գործ դնել չ'զիտեմ»։ Բայցի գորանից՝ բնական բարովական օրէնքը չի կարող մեղ խսկական միջոցներ ցոյց տալ մեր մեղքերը ոչնչացնելու և Աստծու հետ հաշտուելու համար, ուստի և՛ մարդոց թողնում է, որ Աստուածային բարկու ենան որդիք» մնան (Երբ. 10₄₋₁₁ Եփ. 2₂₋₃)։

Եթէ ալդպիսով բնական բարովական օրէնքը անբաւարար է համարում ընկած մարդու համար՝ բարովապէս կատարելազործուելու և փրկուելու գործում ղեկավարուելու նպատակով՝ եթէ նորա բանականութիւնը և խղճմտանքը նսեմացած է, ալն ժամանակ՝ հարկաւոր է լրսի մի ուրիշ աղքիւր գտնելու որ կարողանալ լուսաւորել, պարզել լրացնել և զօրացնել ալդ ներքին օրէնքը։ Ընկած մարդու ալդ պահանջին բաւարարութիւն տուեց Ամենաբարի Աստուածը՝ ներքին, բնական օրէնքին իբրև օգնական շնորհելով Յալտնութեան օրէնքը։ «Հասկա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանքների պատճառով վերան աւելացաւ» (Փաղ. 3₁₉)։ Հին—Ուխտի մէջ ալդ օրէնքը Մոլսիսի միջոցով տուեց Աստուած, իսկ նոր-Կտակարանի մէջ—ինքը՝ Յիսուս-Քրիստոսը։

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԱՅՑՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻ ՄԱՍԻՆ:

I. Հին-Ուխտի Մոլսիսական օրէնք:

Լրիւ, պարզ ե կատարեալ կիրապով Աստծու համքը մեղ յալտնեց ինքը՝ Յիսուս-Քրիստոսը՝ իւր Աւետարանական օրէնքով։ Բայց՝ որպէսզի մարդիկ կարողանափին թէ ընդունել և թէ իւրացնել Քրիստոսի ալդ ամենակատարեալ օրէնքը, պէտք էր՝ որ ներքան նախապէս դոցա համար պատրաստուէին։ Ալդ պատճառով՝ Ամենաբարի Աստուած, մարդոց թուլութեանը զիջանելով, ամենից առաջ նոցա Մովսէս մարգարէի մրջոցով տալիս է Հին-Ուխտի օրէնքը, որը, Առաքեալի ասելով, «մեր դաստիարակը եղաւ՝ մեղ Քրիստոսի կողմը դարձնելու» (Փաղ. 3₂₄)։ Հին-Ուխտի մէջ էլ Յալտնութեան ձշմարտութիւնները մարդոց միանգամից չեն հազորդուել, ալ՝ աստիճանաբար, նոցա հասկացողութեան համեմատ։ Պօղոս Առաքեալն ասում է—«Նատ մասերով և շատ եղանակներով՝ Աստուած խօսեց մարդարէներով մեր հալքերի հետ, իսկ վերջին օրերս էլ մեզ հետ խօ-

սեց իւր Որդու միջոցով» (Երբ. 1₁)։ Աստուած մարդարէներով իւր ձշմարտութիւնը պարզեց ոչ թէ միանգամից, և կամ լրիւ, ալ մասերով, այն էլ ոչ թէ ուղղակի, կամ անմիջապէս, ալ շատ օրինակներով։ յալտնածն էլ ոչ թէ մի ուրիշ ձշմարտութիւն էր, ու ան անփոփոխելին, որ ինքն՝ Աստծու Որդին՝ մեղ յալտնեց։ Բայց այդ ինչո՞ւ համար եղաւ։ «Մեր փրկութեան Տնտեսը», ասում է ս. Բարսեղ Մեծը, «իսաւարի մէջ մնուած մարդու աչքի նման, մեղ դէպի ձըշմարտութեան մեծ լրիսն է տանում՝ աստիճանաբար վարժուելուց ինտք որովհետեւ մեր թուլութիւնն է խնայում։ Նա իւր առաջ իմաստութեամբ.., մեղ համար ալդ թեթեւ և յարմարաւոր ձեռնարկը զծագրեց, սովորցնելով սմենից առաջ առարկաների ստուերները տեսնել և ջրի մէջ արեգակին նայելու որպէսզի լանկարծ, մաքուր լուսին նայելով, մեր աչքերը չ'մթնանան։ Հէնց ալդ պատճառով էլ սահմանուած է օրէնքը, որովհետեւ նա եկող բարիքների ստուերն է» (Երբ. 10₁₀₋₁₁) և մարգարէների նախապատկերը...։ որպէս զի մենք նոցանից հեշտութեամբ ան ցկենանք և իմաստութեան զադանիքը ըմբռնենք»։

Հին-Ուխտի ալդ օրէնքը իսկապէս ոչնչով չի զանազանուում մարդոց սրտերի մէջ զրուած ներքին բնական օրէնքից։ զա միննոյն ներքին օրէնքն է, միան զրաւոր բացատրուած։ Ալդ օրէնքում Աստծու կամքի պահանջները շատ պարզ և զրական կերպով են առաջարկւում, ալդ պատճառով՝ նորանում, ինչպէս լաւ հայելու մէջ, շատ պարզ բացւում է և մեր ներքին զրութիւնը, մեր ներքին կեանքը՝ բարովական օրէնքի հետ իւր համաձանութիւնը կամ անհամաձանութիւնը արտալաւելով։ նորա բովանդակութիւնը պարունակւում է տասն պատուիրանների մէջ (Ելից 20₁₋₁₇)։ Ընդուածութեամբ նա իւր մէջ ամփոփում է մարդուս ամբողջ էութիւնը՝ նորա կեանքի և գործունէութեան բոլոր յատկութիւններով միասին։ Առաջին չորս պատուիրանի մէջ բացատրուած են մարդուս ունենալիք պարտականութիւնները և լարաբերութիւն ները՝ Աստծո, իսկ վերջին վեցի մէջ՝ մերձաւորների վերաբերեալու հէնց ալդ վերջին պատուիրանների մէջ ցոյց են արւում մարդու ալն բոլոր պատականութիւնները, որոնց ինքը պէտք է ունենալ զէպի իւր անձը, որովհետեւ նա մերձաւորներին պարտաւոր է այնպէս սիրել, ինչպէս իւր անձը։ Իւր հիմքում դէպի Աստուած ալդպիսի սէր ունենալով, որը արմատացած է մարդուս ներքին էութեան մէջ, ալդ օրէնքի պահանջները զործադրուում էին աւելի մարդուս կեանքը արտաքին կողմը վերաբի արտաքին կողմը վերաբի քան թէ՝ ներքին, որով-

Հետեւ Երրակեցոց ժողովուրդը, ինչպէս բիրտ և զարգացած ժողովուրդ, միանգամից չ'կարողացաւ վեր սլանալ և օրէնքի հոգեոր նշանակութիւնը ըմբռնել: Սկսելով և Աստուածոյ խօսքեցով, օրէնքը Աստծու օրհնութիւնը լայտնում է կատարողին, իսկ անէծքը՝ նորան դրժողին: Օրէնքի ամբողջ զօրութիւնը և վեհութիւնը հասկանալով, մարդս մինորն ժամանակ հասկացաւ, որ չի կարող նոռ բա պահանջները կատարել, քանի որ իւր բնութիւնը մեղքով փչացած է և վնասուած: Իսկ այդ, բնականաբար, նորան դրդեց, որ իւր մեղքերը զղջայ և Աստծու օգնութիւնը խնդրէ՝ իրան այդ թշուառ գրութիւնից հանելու գործում: Օրէնքի այդ խիստ պահանջների և հրահանգների հետ միասին, նորա մէջ երեւում են ապագայ բարիքների խոստումները և Յիսուս-Քրիստոսի, աշխարհի Փրկչի, նորն իսկ պատկերի ստուերը: Այդ դէպքում Հին-Ռւխտի օրէնքը մեզ համար դաստիարակ հանդիսացաւ՝ մեզ Քրիստոսի կողմը զարձնելու գործում (Պատ. 3-²⁴ *):

Ա. Քրիստոսի կամ Աւետարանի օրէնքը: Նորա առաւելութիւնը Հին-Ռւխտի Մովսիսական եւ ամեն տեսակ դրական օրէնքի առաջ:

Յիսուս-Քրիստոսը, նոր օրէնք տալով, հին բարուական Մովսիսական օրէնք չ'փոխեց: Ընդհակառակն, Նա ալսպէս ասաց—«Բանդելու համար չեմ եկել, աւ լրացնելու» (Մատթ. 5-₁₇): Իւր հետեւողներին պատուիրելով՝ Աստծուն և մերձաւորներին սիրել ինչպէս քրիստոնէական զիխաւոր պատուիրան, Յիսուս-Քրիստոսը աւելացնում է, որ այդ երկու պատուիրանի վերակ են հաստատուած ինչպէս ամբողջ օրէնքը, այնպէս էլ մարզարէութիւնները: «Այս երկու պատուիրանից կախումն ունին բոլոր օրէնքերը և Մարդարէները» (Մատթ. 22-₄₀): Պարզ է, որ Յիսուս-Քրիստոսի ուսումը, իսկապէս, մինորնն է, ինչ որ Հին-Ռւխտի բարուական օրէնքի ուսումը՝ Այդ պատճառով, երբ գործը մարդոց բարուական կեանքին էր վերաբերում, Յիսուս-Քրիստո-

*) Մովսիսի օրէնքի մէջ, բացի բարոյականից, պէտք է որոշել և ծխանդական ու քաղաքացիական օրէնք: Միաւան օրէնքը իւր մէջ պարունակում է արտաքին Աստուածապատճեան բոլոր յատկութիւնները և գործողութիւնները, իսկ քաղաքացիականը հրէից ազգի ինչպէս քաղաքային կազմակերպութեան, այնպէս էլ բարօրութեան վերաբերեալ որոշումները: Միայն թէ սա, և թէ միւսը՝ ժամանակաւոր նշանակութիւն են ունեցել:

առաջ լորդորում էր Հին-Ռւխտի պատուիրաններով հրահանգուիլ և օգտուիլ ինչպէս այնտեղ լիշած փրկութեան, այնպէս էլ լավտենական կեանքը ժառանգելու պալմանի համաձայն՝ «եթէ կամենում ես յաւիտենական կեանք մտնել, պատուիրանները պահիր...որոնք են՝ սպանութիւն, շնութիւն և գողութիւն մի անիր» (Մատթ. 19-₁₇₋₁₉): Ս. առաքեալները Հին-Ռւխտի օրէնքը անուանում էին «սուրբ», իսկ նորա պատուիրանները՝ «սուրբ, արդար և բարի» (Հոգմ. 7-₁₂)

Բայց, մեծ կարևորութիւն և նշանակութիւն տալով Հին-Ռւխտի բարուական օրէնքին և լորդորելով նորան անձեռնմխելի պահել, Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը՝ ոչ թէ միայն գորանով նոր Աւետարանական օրէնքին հին օրէնքի առաջ ներքին առաւելութիւն է տալիս, այլ և գրականապէս ամեն մի քրիստոնէի պարտաւորեցնում է իւր իեանքով՝ Աւետարանական օրէնքով հրահանգուիլ, իսկ Հին Ռւխտի պատուիրաններն էլ Քրիստոսի օրէնքի հոգով գործադրել (Մատթ. գլ. 5-8), Այդ նորա համար է, որ Աւետարանի օրէնքը աւելի լրիւ է, վսեմ և կատարեալ, քան թէ՝ Մովսիսականը: Օրինակ թէ և Մովսիսի և Աւետարանի օրէնքներում բարուականութեան գլխաւոր հիմքը սէլն է համարւում, իսկ Հին-Ռւխտի գլխաւոր նըպատակի համեմատ էլ պահանջնում էր իսրայէլական ժողովուրդը դաստիարակել և պատրաստել այդ վեհ լայտնութիւնը ընդունելու, բայց և այնպէս՝ նորա բարուական օրէնքը իսրայէլացիներին հարկադրում էր միմեանց աւելի սիրել, քան թէ ամբողջ մարդկութիւնը *):

Մովսիսի օրէնքը, որ արուել է միայն իսրայէլի ժողովրդին, զերջինիս բարուական գրութեանն և խստարատութեանն աւելի է

*) Թէ և այդպէս էր պահանջնում աստիճանաբար առաջ գնացող գաստիարակութիւնը, որովհետեւ մարդոց նախ քան յայտնելը, թէ միմեանց պէտքը է ալեւել, եղբայրութիւն և հաւասարութեան կազմելը աւելի հապատակայարմաքիլնէր այդ կանոնները արմատացնել, զարգացնել և զօրացնել հրէաների մէջ երբեւ եղբայրակիցներ, որոնք միմեանց հետ շաղկապուած են ինչպէս ազգութեան, այնպէս և կրօնի ու կեանքի պատմական ճակատագրերի կապերով: Անկասկած՝ Հին-Ռւխտի յայտնութեան նովատակը նեղ ազգային կամ բացառական նպատակ չէ եղել, որովհետեւ իսրայէլացոց ժողովրդի միջոցով ուրիշ ազգերն էլ կարող էին բարոյականութեան վաեմ ոկզեռնքը ընդունել և իրանց բարոյական կենցագափարութեան մէջ կատարագործուել: Բայց և այնպէս՝ ամբողջ մարդկութիւնը սիրով միացնելու զաղափարը Հին-Ռւխտի յայտնութեան գլխաւոր ինդիքների շաքը չի մտել: Այդ ինդիքը նորա մէջ միայն զննուում էր՝ ինչպէս նոր-Ռւխտի յայտնութեան մի մեծ գործ:

յարմարեցրած — (Մատթ. 19⁸) — «Մովսէսը ձեր խստասրտութեան պատճառով ձեզ հրամակեց ձեր կանանցը արձակել», Վսեմ կատարելութեան համանելու համար աշխարհիս բոլոր ազգերը պէտքէ Աւետարանական օրէնքով հրահանգուին, որոնք աստիճաննաբար Քրիստոսի չնորհաբաշխ թագաւորութեան մէջ են մտնելու [Մատթ. 28-19-20] — «Գնացէք, ալսուհետեւ սովորեցրէք բոլոր հեթանոսներին, մը-կրտեցէք նոցա՝ Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով, Սովորեցրէք նոցա պահել այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրել եմ: Եւ ահա՝ Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչեւ աշխարհի վերջը»]. ալդ օրէնքը ամեն ժամանակուալ համար է և յաւիտենական (Եբր. 10^{3 12 14}, 13-20): Մովսիսի օրէնքը մարդուս ուղղելու համար անզօր էր. նա մարդու առաջ բաց էր անում իւր մեղաւորութիւնը, բացց ովք չէր տալիս նորա հրահանգները կատարելու գործում, և թէ մեղաւորներին էլ չէր կարողանում արդարացնել (Հռովմ. 3-20, Գաղ. 3^{11 21}), Աւետարանական օրէնքը «ամեն մի հաւատացողի համար Աստուածային ովք է համարւում» (Հռովմ. 1-16, Գործք առ. 4-12): Նա՝ մեղքերի թողութիւն քարողելով՝ հին նզովքը վերցնում է (Ղուկ. 24^{4 7} Գործք առ. 13^{38 39}, Գաղ. 3¹⁰⁻¹³), նա մեղ ալդ օրէնքը կատարելու մէջ թեթևութիւն է տալիս թէ լաւանուած չնորհքով (Յով. 15⁴⁻⁵, Բ. Պետր. 1-3), թէ Քրիստոսի ամենակատարեալ կեանքի օրինակով (Եբր. 7-26) և թէ Եկեղեցու (Մատթ. 16¹⁸, Գործք առ. 20²⁸, Եբր. 4¹¹⁻¹³) և նորա փրկարար Խորհուրդների հաստատութեամբ (Գործք առ. 22-29, Տիտ. 3⁵⁻⁷): Մովսիսի օրէնքը, որին ոչոք չ'կարողացաւ քնական ոլիերով կատարել, բոլորին անիծում էր (Գաղ. 3¹⁰) և յաւիտենական կեանք մտնելու համար ամեն մի լուսից զրկում, որի պատճառով նա իրեն ասպանող գիր» մնաց (Բ. Կորնթ. 3⁶), Աւետարանական օրէնքը, որ աւելի լարմարութեամբ և հեշտութեամբ կարելի է Աստուածային չնորհքով իրագործել, բոլոր հաւատացողներին լաւիտենական կեանքի և երկնալին թագաւորութեան լուս է տալիս, ուստի ե՛ զա «կեանքի հոգու օրէնք» է կոչում (Հռովմ. 8²), Վերջապէս, մարդուն պատուիրանները իրագործել տալու համար թէ ժամանակաւոր բարիք խոստանալով և թէ պատժի բարկութեան և անէծքի երկիւղ տալով (Ելից 20^{5 6 12}, Երկրորդ 27-26 և գլ.-28), Մովսիսի օրէնքը իւր հետեղներին երկչոր և խարզախ սարուկներ էր զարձնում, ուստի ե՛ նա կոչում էր «ծառալութեան հոգի» (Հռովմ. 8-15) և «ծառայութեան լուծուածուածական օրէնքը, որ մարդոց զրդում է իւր պահանջները կատարել՝ թէ հոգեոր վսեմ բարիք խոստանալով» (Մատթ. 5^{3-12 19}, 19²⁸, 25³⁴) և թէ աւելի՝ սիրով — (Յով. 14-

15 21 23. 15⁹ 12⁻¹⁷). 3^{16-17.} 4^{11),} նոցանից երկնալին Հօր աղաւ
որդիք կաղմելով, կոչվում է «աղաւութեան» (Յակ. 1²⁵) և առզեզրու-
թեան» օրէնք (Հռովմ. 8^{15.} Գաղ. 4^{7.} Յով. 1¹²):
Որպէս զի աւելի պարզ կարողանանք նկատել, թէ Բ' չպէս
Աւետարանական օրէնքով խստացած Յիսուս-Քրիստոսի բարուա-
կան ուսումը վսիմ է և խորխմաստ, պէտքէ ուշղրութիւն դարձնել
Նորա երանութեան մասին արտապատած ուսման վերալ, որը ամբողջ
Աւետարանական բարովագիտութեան ծուծը և հիմքն է կաղմում
(Մատթ. 5³⁻¹²), Նորա մէջ ցոյց է տրուած մարդուս բարովական
կատարելութեան տիպ սրը և թէ զորան հանելու ճանապահը: Եթէ
Հին-Ռւստի օրէնքը աւելի ուշգրութիւն էր դարձնում մարդուս կե-
անքի արտաքին կողմ, վերալ և որոշում էր, համարեալ թէ, նորա
կեանքը և զործունէութեան ամեն մի քալլը, Յիսուս-Քրիստոսը երա-
նութեան մասին արտասանած մտքերով այնպիսի բարովական կե-
անքի տիպար է դազրում և այնպիսի բարովական կանոններ
առաջարկում, որոնցով առաւելապէս կանոնաւորւում է մարդուս
ներքին կեանքը, իսկ նորա արտաքին կեանքը և զործունէու-
թիւնն էլ ներքին կեանքի իրրե անհրաժեշտ հետեանք հանգիստ-
կում: Մարդուս բարովական զարգացման և կատարելագործութեան
աստիճանի համեմատ Յիսուս-Քրիստոսը բարովական պահանջները
խիստ հետեղղական աստիճանով է առաջ տանում, հեշտից դէպի
դժուարը, ցածրից դէպի աւելի վսիմ բարովական քաջազրութիւն-
ները անցնելով, այնպէս որ ամեն մի հետեանք քաջազրութիւն-
իրրե բնական հետեանք և արտապատութիւն է համարւում նախ-
ընթաց քաջազրութեան *):

*.) Ծ անօթ, Այլէ աւելի կ'պարզուի, իթէ մինք գելունձ ենք նոյն խսկ արտասահմածնելը:

Սկզբնական ստաքնութիւնը, որ այս արտասանածների մէջ պահպակ-
ւում է, հոգով աղքատութիւնն է: Հոգով աղքատը միշտ իւր մէջ զգում է
բարի գործերի պակասութիւն, ուստի և, բնականալրա, ձգում է, որ այդպիսի
հարստութիւն ձեռք բերէ և բարցյական գործ կատարէ: Ասածու շնորհըով
նա, արդուրի, այդ հարստութիւնը ստնում է. (Բ. Կոբնթ. 9-8):

Բարի գործերուն պահաստթիւն զգալը մարդուն զբում է, որ ինքն ևս
բարի գործերուն պահաստթիւն զգալը մարդուն զբում է, որ ինքն ևս
լրանից դժոն լինի: Այդ պատճառով, իւր մեղքեր ողբալը աղքատութեան բը-
նական հետեանքն է համարւում: Հենց աղքպիսի լացն էլ ճշմարիտ գրաւականն
է մարդուն թէ ուղղուելու և թէ բարոյապէս հարստանալու համար: Այդ պատ-
ճառով՝ Փրկիչը նոցա մխիթարութիւն է խոստանուում:
Եթէ մարդուն իւր անձնական պահաստթիւնները զգում է և զջում-

Ինչ չափով որ յարդս բարուական կատարելութեան ամենաքարձր աստիճանների է հասնում, նոյն չափով էլ աւելի և աւելի են զարգանում և կատարելագործում ստորին աստիճանները: Բոլոր պատգամների միմեանց մէջ եղած սերտ կապից և որոշ քաջագործութիւններից կախումն ունի այն, որ իսկ՝ քրիստոնէական առաքինութիւնը չի կարող պատահական երեսով, թուոցիկ տրամադրութեան արտապատութիւն համարուիլ, այլ թէ դա է հոգու ամբողջ կեանքի արտացոլումն: Պատգամների և զոյց տուած քաջագործութիւնների մէջ եղած միենոյն սերտ կապը մարդուն այնպիսի պալմանների մէջ է դուռմ, որ երբ նա Աստծուց ցոյց տուած ճանապարհի վերաէ է կանգնում, այն ժամանակ իւր մէջ զգում է մի

հազար նա պէտք է հասկանայ և այն, որ այդպիսի պակասութիւններ կարող են ունենալ և ուրիշները, որոնց հետ զիջողաբար պէտք է վարուել: Այստեղից հեղութիւնը մարդուս երկու առաջին առաքինութիւնների բնական հետեանքն է երկում:

Աղքատութեան հետ սերտ կապ ունի սովը և ծարաւը: Այդ պահանջի զգալը արդէն վկայում է, որ մարդուս հոգին փշացած չէ և թէ կարող է կերակուրը ընդունել և իւրացնել, երբ նորան կ'առաջարկեն. զորա հետ միասին՝ այդ զգացմունքը մարդուն գրգում է միջոցներ գտնել թէ իւր սովածութեանը բաւականութիւն տարու և թէ իւր հոգու գործունէութիւնը պահպանելու համար: Այդպիսներին Աստուած խոստանում է յագեցնել:

Սոված և ծարաւած մարդը լաւ է հասկանում միենոյն զրութիւնը և ուրիշ մարդոց մէջ, ուստի՝ նոցա միշտ կարեցում է և ուրախութեամբ ցանկանում, որ նոցա զրութիւնը թէ եւանայ: Այստեղից ուրիշներին ողորմութիւն անելը՝ այդպիսի մարդուս ամենամօտիկ գործը պէտք է համարուի: Երբ մարդս անց է կացըել, և թէ իւր վերաց է փորձել հոգեկան այն զրութիւնները, որոնք հետազնած քրոգների մէջ երանութեան արժանանում են, նոցանով նա սրտի մարդութիւն, և թէ այնպիսի մի զրութիւն է ստանում, որի երանութիւնը մեզ արտայալում է վեցերորդ խրատը:

Անձնական սրտի մաքրութիւնը մարդուս ստիպում է հէնց այդպիսի մաքրութիւն որոնել և ուրիշ մարդոց սրտակից յարաբերութիւնների մէջ: Այդ պատճառով՝ երբ մարդոց միջի անկեղծ սրտակից յարաբերութիւնները ոչնչանում են և թշնամութիւնը արմատանում, այն ժամանակ մաքուր սիրոտ ունեցողը աշխատում է նոցա առաջուայ խաղաղասիրական յարաբերութիւնները վերանորոգել և թշնամութիւնը հեռացնել: Այսպէս ուրիշներին խաղաղացնելու իրեն հետական հետեւանք է սրտի մաքրութեան, սրբութեան:

Որովհետեւ անհաշտ յարաբերութիւնների գլաւաւոր պատճառն այն է, որ մարդիկ՝ մէծ մասամբ՝ ճշմարտութեան պահանջները ոտնատակ են անում, այդ պատճառով՝ իսկական խաղաղասէր մարդը հոգս է քաշում ոչ թէ միայն խաղաղաներու տյլ և այդ յարաբերութիւնը ճշմարտութեան սկզբունքների վեցայ ամրապնդելու մասին: Այդ առաքինութիւնը, որ սերտ կապուած է նախընթացի հետ, երանութեան ութերորդ պատգամն է պահանջում:

այնպիսի չնորհաբաշխ զօրութիւն, որը նորան առաջ է տանում՝ «Ես վստահ եմ, որ՝ ով ճեր մէջ բարի գործեր սկսեց, ասում է Առաքեալը, նա էլ պէտք է նոյնը մինչև Յիսուս-Քրիստոսի օրը կատարէ» (Փիլ. 1-6): Բայց մարդուն վսեմ բարովական կատարելութեան հասնելու համար ալդպիսի Աստուածալին չնորհք տալը նորա աղատութիւնը չի սահմանափակում, որովհետեւ ամեն մի քրիստոնէական բարովականութեան որոյ խատկութիւնն է՝ ազատութիւնը և անընդհատ գործունէութիւնը: Այս երեսով քրիստոնէի բարովական կեանքի և գործունէութիւնը պարզ գրութիւնն է արտավայտում և թէ քրիստոնէական բարովականութեան տիպարի այն զծագրութեան անխուսափելի հետեւանքը կազմում, որը նկարազրուած է երանութիւններում:

Ուշադրութիւն դարձնելով Յիսուս-Քրիստոսի երանութիւնների արտաքին ձեփ վերաէ, չի կարելի չ'նկատել, որ ալդ զէպւմ ես Յիսուս-Քրիստոսի ուսումը Մովսէսի Հին-Ռւխտի ուսումից գերազանցում է: Վթէ Հին-Ռւխտի մէջ Աստուած, Խւր կամքը յատնելով, ամենայն խստութեամբ հրայալում է նորան կատարել և նզովքի ւպառնալիք տալով մի որ և է պատուիրան ոչնչացնելու համար, Նոր-Ռւխտի մէջ Յիսուս-Քրիստոսը, լարմարուելով ան մարդու զրութեանը, որ արդէն զարգացման որոշ աստիճանի է հասել, սրբկական զրութիւնից գուրս եկել և ազատութիւն ստացել: Իւր բարովական պահանջները առաջարկում է ոչ թէ կտրական, այլ պալմանական ձեռվ՝ մարդուն զորդողութիւնների կատարեալ աղատութիւն չնորհելով: Բայց բարովական պահանջների արտավայտութեան ալդ ձեռ երբէք չի նսեմացնում մարդու համար նոցա պարտարեցուցիլ լինելու նշանակութիւնը, այլ՝ ընդհակառակը՝ սորան աւելի է բարձրացնում.՝ երբ մարդս աւելի ազատ է իւր համար անհրաժեշտ բարովական հրահանգները կատարելու մէջ, այնքան նա աւելի կ'մեղասորուի և կ'զարտապարտուի, եթէ չ'ցանկանալ ալդ պահանջները կատարել և ընդունել: «Այնպէս խօսեցէք և

Միայն ուրիշներին ճշմարտութեան սկզբունքներով խաղաղացնելու գործը աւելի ամուր և լուսալի կ'լինի այն ժամանակ, երբ նա կ'հաստատուի Յաւիտենական ճշմարտութեան, այսինքն Յիսուս-Քրիստոսի վերաց: Այդ պատճառով՝ ուրիշներին խաղաղացնող և իրանց կեանքը Քրիստոսի-Յաւիտենական ճշմարտութեան—վերաց հաստատող մարդկին պէտք է իրանք իրանց մէջ Քրիստոսի կեանքի բարախումն զգան և այդ կեանքով հրահանգուին նորա համար ուրախութեամբ հալածանքներ և չարչարանքներ կրելու: Այստեղից էլ վերջին առաքենութեան հետ:

այնպէս արէք, որպէս թէ՝ ազատութեան օրէնքով էք դատուելու»
(Յակովը. 2₁₂):

ևթէ Քրիստոսի օրէնքը, ինչպէս տեսանք, իսկապէս Հին-Ռւխտի
Մովսիսական օրէնքին նման լինելով՝ նորանից բարձր է կանգնած,
հապա թնջ կարելի է առել միւս մարդկալին հին օրէնքների մասին։
Վերջիները նորա հետ ոչ մի կերպ չեն կարող համեմատուիլ։ Քրիստո-
սի օրէնքի վեհագոյն որոշ լատկութիւնն է սէրը, որ կրօնական-ըա-
քուական կեանքի խորիմաստ հրմքը և ամենավսեմ արմատն է
համարւում, իսկ հեթանոսական աշխարհում կեանքի դլիսաւոր և
հրահանգիչ սկզբունքը կազմում էր եսականութիւնը, որով տողօ-
րուած էր հնութեան ամբողջ հասարակական բարուականութիւնը։
Եսականութեան պահանջներից վերև հեթանոսները չին կարող
քարցրանալ և թէ նոցա բարուականութիւնը, որ միան իրանց սի-
րել տալու սիրով վերաէ էր հիմնուած, ուրիշ մարդոց վերաբերեալ ոչ
մի պատականութիւն չէր ընդունում. նա արհամարհում էր
թովերին և ատում թշնամիներին, այնպէս որ նոքս բոկ—ձշար-
տութեան մասին մտածել անգամ չէին կարող։ Լիկուրգոսի օրէն-
քով՝ թուլակազմ երեխաները պէտք է անդունը ծգուէին, կամ
թէ անտառը տանուէին զաղաններին կերակուր դառնալու։ Հնդ-
կաստանի հին օրէքով՝ կանալք կենդանի պէտք է թաղուէին
իրանց մեռած այր—ամուսինների հետ։ Առ հասարակ՝ մարդկալին
անձնաւորութիւնը հեթանոսութեան ժամանակ զնահատում էր
իւր կենցաղավարութեան արտաքին պայմաններով, որոնք էին—
ազգութիւնը, սեռը, հասակը, նշանաւոր կամ աննշան ծագումը,
հարստութիւնը, աղքատութիւնը, և այլն։ Մինչև անգամ հեթանո-
սութեան այն ընտիր իմաստուն անձերը, որոնք են՝ Պլատոնը,
Արիստոտէլը և Կիկերոնը, չ'կարողացան հասկանալ, որ բոլոր մար-
դիկ բարուապէս պէտք է միմեանց հաւասար լինին, Նոքա ընդու-
նում էին, օրինակ, որ ստրկութիւնը անհրաժեշտ է և բնական ե-
քանոթ, և բացի դորանից՝ կարծում էլ էին, որ աշխարհիս բոլոր
ազգերը, բացի լոյներից և հոռվմակեցիներից, ստրկութեան համար են
նշանակուած,—որ բաղդաւորութիւնը միան լոյներին և հոռվմակեցի-
ներին է վիճակուած, որովհետեւ մըւս ազգերը, որ բարբարուներ
էին կոչում, մարդկալին ընութիւնից ստոր էին. մարդիկ միան
լոյներն էին և հոռվմակեցիք։

Այդպիսի հակեացքը, բնականաբար՝ ամեն տեսակ մոլութիւնների
և կրքերի քաօս առաջ բերեց, որոնք մտան ինչպէս հեթանոսական
հասարակական, այնպէս և ընտանեկան կեանքի մէջ և մարդկութեան

քարուական կաղմը քա: քակեցին, Բայց եթէ հեթանոսութեան մէջ եր-
բեմն և՝ այնպիսի մարդիկ էին դուրս գալիս, որոնք, համեմատա-
բար, բարուականութեան աւելի վսեմ սկզբունքներ էին սուաջար-
կում, օգտաէտ խորհուրդներ և խրատներ տալիս, օրինակ—Սոկ-
րատէսի խորհուրդը — «Ինքո քիզ անալիք»—նոքա, կեանքի մէջ ոչ
մի իրականութիւն չ'ստանալով և ոչ մի էլ նշանակութիւն չ'ունե-
նալով, իբրև լոկ զաղափարներ էին հանդիսանում։ Միթէ սորա-
նից լետոյ հարկաւոր կ'լինի հին հեթանոսական բարուագիտու-
թիւնը համեմատել Յիսուս-Քրիստոսի ուսման հետ։ Բայց՝ առանց
համեմատելու էլ՝ ամեն մարդ պարզ կարող է նկատել, որ դոցա-
մէջ ոչ մի համեմատութիւն չի լինիլ, որովհետեւ նոքա ոչ թէ միայն
զանազան են, ալլ և տրամագծօրէն միմեանց հակառակ՝ ինչպէս
իրանց բարուականութեան զլխաւոր սկզբունքներով, որոնք են՝
«անձնուրաց սէրը» և «եսականութիւնը», այնպէս էլ կեանքի և
զործունէութեան մէջ ալդ սկզբունքների արտագալութիւնով։ Շատ
քան, ինչ որ հին հեթանոսական աշխարհում ստոր, անվայել էր
համարւում և ստրուկների ու աշխարհիս ուրիշ ատելի մարդոց վե-
րաբերում,—քրիստոնէական աշխարհում, բարուականութեան, նոք
սկզբունքով, ամենավսեմը դարձաւ (Մատթ. 5-₁₈-₂₀, 11-₁₂-₁₃ Յոհ. 13-₁₄). Ուստի և՝ նոցա բարուական ուսման արգամիքները ստորուն
անդամ բոլորովին զանազան են և միմեանց հակառակ։

ԲԱՐՈՒՑԱԿԱՆ ՕՐԻՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՋԱԿԱՐՈՒՅԹ, ԽԱՆԱԿԱՆ ԱՎԱՐ

Բարուական օրէնքը կատարելու համար Աստծու Խօսքը մար-
դուն զանազան շարժառիթներ է առաջարկում։ Իբրև ամենավսեմ
շարժառիթներ՝ Նա մեղ մատնացոց է անում — ա) Աստծու անսահ-
ման մեծութիւնը և կատարելութիւնը, մարդկալին սեռին ցոյց
տուած Նորա անսահման սէրը և բարութիւնը. Օրինակ, «Իւր արել
ծագեցնում է թէ չար և թէ բարի մարդոց վերաէ, իսկ անձրեն էլ
ուղարկում ինչպէս արդարներին, այնպէս և մեղաւորներին։ Դուք
կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր Երկնաւոր Հայրը կատարեալ է»
(Մատթ. 5-₄₅-₄₆). «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրաններն էլ
պէտք է պահէք» (Յոհ. 14-₁₅). «Որովհետեւ դուք ծախու գնով էք
առնուել, ուստի՝ Աստծուն փառաւորեցէք ձեր մարմինների և հո-
գիների մէջ, որոնք Նորան են պատկանում» (Ա. Կորնթ 6-₂₀)։

Աստծուն սիրելով և Նորան շնորհակալութիւն անելով, ինչ-
պէս մեր բարերար, մենք պարտաւոր ենք Նորա օրէնքը ճշուու-

թեամբ կատարել: Այդ ուրախութեամբ պէտք է իրագործենք աւելի՝ ան պատճառով, որ այս բանում մեզ օգնում է Աստծու շնորհքը որ մեզ պարզեւած է մեր Փրկչի կատարած գործերի առիթով: Մեր քնութեան վերածնութեան և վերանորոգութեան համար մեզ են շնորհած թէ Ակեանք ստանալու և թէ առաջինի լինելու համար բոլոր զօրութիւնները»: Դորանից իտոյ մեզ Բնչ է մնում անելու եթէ ոչ՝ «Բոլոր ջանքերը ալս բանի համար գործ դնելով՝ հաւատի վերալ աւելացնել առաջինութիւն, առաջինութեան վերալ գիտութիւն, գիտութեան վերալ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեան վերալ՝ համբերութիւն, համբերութեան վերալ՝ բարեպաշտութիւն, բարեպաշտութեան վերալ՝ եղբարսիրութիւն և եղբարսիրութեան վերալ սէր» (Պետր. Բ. 1 5-7):

Նոյն իսկ օրէնքի վերալ ուշադրութիւն դարձնելով, մենք նորան կատարելու համար նոր շարժառիթներ ևս ենք զոտնում: Աստծու օրէնքը սորբ է և կատարեալ, մեր բնութեանն էլ համապատասխան, ուստի և՛ նորա բեռը մեզ համար թեթև է և օգտաէտ, ինչպէս որ ինքը՝ Փրկիչն է այս մասին վկալում, ասելով՝ «Իմ լուծը քաղցր է և բեռս՝ թեթե» (Մատթ. 11. 30): Աստծու օրէնքը սրբութեամբ կատարելով՝ մարդս իւր բարուական կատարելութեան մէջ «աստուածանմանութեան» է ձգտում, իսկ եթէ նորան իրագործելուց շեղում է, այն ժամանակ նա ստորանումէ և անասնակերպութեան հասնում: (Սաղմ. 48. 15. «Նոյա օգնութիւնները դժոխքում կ'սպառուին և իրանց փառքից կ'զրկուին»):

Վաեմ շարժառիթներին միանում են և՛ ստորին, երկրորդական՝ շարժառիթները, որոնք են՝ վարձատրութիւնները և ժամանակաւոր ու լաւիտենական պատիմները: Դոցանից վաեմ շարժառիթներին աւելի մօտիկն այն է, որ քրիստոնեան՝ Աստծու հետ միանալով՝ լաւիտենական՝ երանութեան լոլս ունի, որովհետեւ արդ ցանկութիւնը Աստծուն սիրելու բնական հետեանքն է: Բարուական օրէնքը կատարելու արդ շարժառիթը իւր հետևողներին ցոլց է տալիս և՛ ինքը՝ Յիսուս Քրիստոսը՝ իւր երանութեան մասին լալտուած ստաման մէջ (Մատթ. 5. 3-13), Առաքեալներին տուած խրատներում (—19. 7. 30), առակներում (—13. 43) և իւր երկրորդ գալուտեան և ահեղ զատաստանի նկարագրութեան մէջ (Մատթ. 25. 34):

Աստծու Խօսքը լակտնում է, «ր ժամանակաւոր, երկրալին կեանքի բարիքը կախումն ունի և՛ Աստծու օրէնքը ճիշտ կատարելուց: Պատուիր քո հօրը և քո մօրը, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրես աշխարհիս վերալ»—(Ելից 20. 12): «Բարեպաշտու-

թիւնը ամսն բանի համար օգտակար է, որովհետեւ թէ ներկալ և թէ ապագալ կեանքի խոստումն է պարունակում իւր մէջը (Տիմ. Ա. 4-8): Եթէ արդարը, Աստծու կամքով, զանազան փորձանքներ և անբաղդութիւններ է կրում, Աստծու օրէնքը նորան սովորեցնում է, որ դոցա մէջ էլ իւր համար ուրախութեան աղբիւր գտնէ [Հոռիմ. 5-3] «Ոչ թէ միայն սորանով, ալլ և՛ նեղութիւններով պէտք է պարծենանք, որովհետեւ գիտենք, որ նեղութիւնը համբերութիւն կ'ստեղծէ»]: Աստծու օրէնքը ճշտութեամբ կատարելով՝ մենք երկրան բաղդաւորութիւն ենք ստանում, այն է՝ ներքին խաղաղութիւն—«խաղաղութիւնը առատ է նոյա համար, որոնք Քո օրէնքը միրեցըն» (Սաղմ. 118. 165):

Իսկ ինչ վերաբերում է առաջինութեան շարժառիթներին, որոնք պարունակում են ժամանակաւոր և լաւիտենական պատիմների երկիւղի մէջ, նոքա միայն վերև լիշած շարժառիթների (Երկրորդական) մի ուրիշ կողմն են կազմում, ալդ պատճառով՝ դոքա ևս պէտք է զնահատուին, ի նկատի ունենալով, թէ՝ Բնչ լարաբերութիւն ունին զլիասոր շարժառիթների հետ, իրկիւղը կարող է ստրկական լինել, երբ մարդս ընդունում է, որ ինքը խիստ պատիժ է ստանալու իւր մեղքի համար: Ալղափիսի զգացմունք և հասկացողութիւն, 'ի հարկէ, չեն կարող բարուական նշանակութիւն տալ այն գործողութիւններին, որոնք նորա աղղեցութեան տակ են կատարուել: Բայց երբ պատժելու երկիւղը որդիւական երկիւղի բնաւորութիւն կ'ունենալ, - երբ մարդս, զլիասորապէս, երկիւղի մէջ կ'հրահանգուի այն մտքով, թէ՝ ինքն իւր վարմունքով անպատճում է Աստծուն, իրան սիրող Հօրը, իրան էլ նորանից հեռացնումէ, այն ժամանակ երկիւղը ոչ թէ մարդուց պահանջող առաջիթներութեան նշանակութիւնը կ'նսեմացնէ, ալլ ընդհակառակն, նորան կ'բարձրացնէ, որովհետեւ դորանով նա իսկ որդիւական միրուբնաւորութիւն կ'ստանալ: Բայց և այնպէս՝ երկիւղը մարդուս անհրաժեշտ է և՛ արդ զգացմունքի ստորին աստիճանի վերալ, ալսինքն, երբ նա զգալականութեան մէջ թթանում է և բարուական քնից շարժառիթ պահանջում, միայն թէ դա ինքն ըստ ինքեան բարուական շարժառիթներից ստոր է և մինչեւ որ բարի գործ անելու սիրով չ'շաղախուի, չի կարող ոչ մի բարուական գործ ցոլց տալ, կամ առաջինութիւն անել: Աստծու Խօսքի մէջ, առաջինութեան ուրիշ շատ շարժառիթների շարքում կաէ և՛ ժամանակաւոր պատճի երկիւղը: «Ահա դու քժկուեցար, ալլ ևս մեղք չ'գործես, որ քեզ հետ ուրիշ չար բան չ'պատահի» (Յովհ. 5. 14): Ս. Պօղոս առաքեալը

ասումէ, որ ակտեղ երկրիս վերալ էլ«Աստծու բարկութիւնը թափումէ երկնքից ան մարդոց ամբարշութեան և անիրաւութեան վերալ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ են գրկել» (Հռովմ. 1-18): Մեղսալի կեանքի սովորական հետեանքները սոքա են հիւանդութիւններ (Յ-1), կանխաժամ ման (Կորնթ. Ա. 11-30), մարմնաւոր իշխանութեամբ որոշուած պատիժներ (Հռովմ. 13-4), և անպատութիւն (Պուկ. 14-9), Բայց նա աւելի լաւիտենական պատիժներն է առաջ բերում, որպէսզի դոցանով կարողանալ մեզ մեղծ հեռացնել: «Մի վախենաք նոցանից, ասում է Փրկիչը առաքեալներին, որոնք մարմինը սպանում են, իսկ իւտով ոչինչ չ'ունին անելու, ևս ձեզ ցոյց կ'տամ, թէ՝ ո՞ւմից պէտք է վախենաք. վախեցէք նորանից, որը սպանելուց իւտով կարող է կրակի մէջ ձգել. ար, ասում եմ ձեզ, նորանից վախեցէք» (Պուկ. 12-5). համեմ. Մատթ. 10-15. 11-20-24. 23-33. 25-41), Ա. Պօղոս առաքեալը ասում է՝ «Սարսափելի բան է կենդանի Աստծու ձեռք ընկնելը» (Եբր. 10-31). «Նեղութիւն և տառապանք պիտի թափուի ամեն մարդու վերալ, ով որ չար գործ կ'կատարէ» (Հռովմ. 2-9):

ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ:

Մարդուս գործողութիւնները բարուական օրէնքի հետ կամ համաձայն են լինում, կամ հակառակ,—ալդ պատճառով՝ նոքա արժանանում են քաջալերութեան կամ դատապարտութեան, պարզեի կամ պատժի: Այն դատողութիւնը, որի միջոցով մարդուս բարուական գործողութիւնները գնահատում են և նոցա վերալ քաջալերող կամ դատապարտող վճիռ զրում, կոչում է բարոյական վարձատութիւն: Բարուական վարձատութեան իրաւունքը և իշխանութիւնը իսկապէս կարող է միայն Աստծուն պատկանիլ, որովհետե նա է միայն Օրէնսդիրը և Դատաւորը (Յակ. 4-11): Նա է միայն իրաքանչիւր մարդու սիրու քննողը (Մատթ. 7-10), հետեապէս՝ նա միայն կարող է բոլորովին արդարութեամբ մեր գործողութիւնները գնահատել (Հռովմ. 2-6): Այդ վարձատութիւնը, կամ Աստծու դատաստանը, մասամբ, ալս կեանքում էլ է կատարում մարդուս խղճմտանքի մէջ, ամեն մի արած գործողութիւնից իւտ, իսկ վերջնականը կ'լինի ապագալ կեանքում ընդհանուր դատաստանի ժամանակ, երբ Աստուած ամեն մէկին իւր գործերի համեմատ կ'վարձատրէ (Հռովմ. 2-6):

Այս կեանքումն էլ բարուական վարձատութեան իշխանու-

թիւնը, Փրկչի պատուիրանով, Քրիստոսի եկեղեցուն է պատկանում, որի պաշտօնեաներն են հոգեոր հովիւները և ուսուցիչները (վարդապետները): Յարութիւն առնելուց լուս՝ Խր աշակերտներին երեալով՝ Յիսուս Քրիստոսը ցիցց նոցա վերալ և ասաց—սուրբ Հոգին առէք. որոնց մեղքերը ներէք՝ ներուած լինի, և որոնցը կապէք, կապուած լինի» (Յովհ. 30 ա-2): Մեղք գործող և լանդիմանութեան արժանացող ընկերոջ մասին էլ ասաց—«ասա եկեղեցու մէջ. եթէ եկեղեցուն էլ չ'լսէ, նա քեզ համար իբրև հեթանոս և մաքսաւոր կ'ճանաչուի» (Մատթ. 18-17):

Որովհետե մարդուն Աստծուած որոշել է ապրել հասարակութեան մէջ՝ ուրիշ մարդոց հետ, դորա համար էլ՝ նա պէտք է հնագանդուի և՝ այն հասարակութեան քաղաքացիական օրէնքներին, որոնք Յիսուս-Քրիստոսի տաման որուն հակառակ չեն: Այդ պատճառով՝ քաղաքացիական իշխանութիւնը իրաւունք ունի հասարակութեան անդամների գործերը քննոել և նոցա արժանաւորութեան համեմատ պարզե տալ կամ պատժել: Այդ իրաւունքը քաղաքացիական իշխանութիւնը նոյն իսկ Աստծուց է ստացել, ինչպէս այդ երսում է Պիղատոսին Փրկչի ասած խօսքերից—« Խնձ վերալ և ոչ մի իշխանութիւն չէիր ունենալ, եթէ ալդ քեզ վերեկից չ'լինէք տրուած» (Յովհ. 19-11), նոյնպէս և՝ Պօղոս առաքեալի ասածներից—«ամեն մարդ թնդ իւր վերալ եղած իշխանութիւններին հնագանդուի, որովհետե իշխանութիւն չ'կայ, որ Աստծուց չ'լինի, և նոքա էլ, որոնք կան, Աստծուց են նշանակուած. ուրեմն՝ ով իշխանութեանը հակառակ կ'լինի, Աստծու հրամանին էլ հակառակ է» (Հռովմ. 13-1-2):

Բարոյական վարձատութեան առարկան կարող էն լինել ոչ թէ միայն մարդու գործերը և վարժունքները, որոնք համաձայն են կամ հակառակ բարոյական օրէնքին, ալլ և՛ բոլոր մտածութիւնները, զգացմունքը, խօսքերը և ուրիշ արտաքին նշանները, մէկ խօսքով—մարդուս կեանքի ամբողջ ներքին ընթացքը: Յիսուս-Քրիստոսը ասում է՝ «եթէ մէկը իւր եղբօր վերալ զուր տեղը բարկանալ, նա մեղաւոր կ'համարուի դատաստանի առաջ» (Մատթ. 5-22). «Ասում եմ ձեզ, որ ամեն մի դատարկ բանի համար, որ մարդիկ կ'խօսնեն—դատաստանի օրը պէտք է հաշիւ տան: Որովհետե քո խօսքերով կ'արդարանաս և քո խօսքերով էլ կ'մեղաւորուի» (Մատթ. 12-36-37):

Բացի անձնական գործերից՝ մեզ կ'վերաբերին և՝ ուրիշների գործերը, եթէ մենք ենք եղել առիթ տւողը նոցա գործողութիւն-

ների և ներքին ու արտաքին կեանքի ամբողջ ընթացքի թէ իբրև զլխաւոր և թէ իբրև կողմանակի պատճառ։ Իբրև զլխաւոր պատճառ կ'երեանք այն դէպքում, երբ կամ մեր հրամանով և կամ մեր խորհրդով ուրիշի գործողութեան պատճառ ենք դարձել, այնպէս որ, եթէ դա չ'լինէր, ալդ գործը չեր կատարուիլ, Ալդպիսի պատճառ է հանդիսանում, օր. Դաւիթ թագաւորը, որ իւր զօրավար Յովաբին հրամայից Ուրիալին կոռու ժամանակ այնպիսի տեղ ուղարկել, որ նա սպանուի (Թագ. Բ. 11₁₅): Հերովդիաղան, իւր դստերը խորհուրդ տալով, Հերովդէսից Յովաննէս Մկրտչի գլուխն է խնդրում, իբրև կողմանակի պատճառ այն ժամանակ կ'երեանք, երբ մեր խորհրդով, խօսքով և կամ մեր օդութեամբ՝ արդէն վաղուց որոշուած վճիռ՝ կ'հաստատենք, կամ թէ՝ մենք, որ կարող էինք, բայց չ'կամեցանք ալդպիսի գործ կատարելուն արգելք հանդիսանալ, Ալդպիսի պատճառ դարձող մարդիկ երեւում են նոքա, որոնք իրանց երեխանց ոչ թէ միայն արգելք չեն լինում վատ զործեր անելու, այլ և իրանք մինչեւ անդամ մասնակցում են և զորանով զոցա զործունչութիւնը աւելի գրգռում։ Նոյնը, հակառակ մտքով, կարելի է ասել և՛ ուրիշների արած բարի զործերի վերաբերմամբ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ զլխաւոր պատճառ եղողներին աւելի զովասանք և լանդիմանութիւն է հարկաւոր տալ, քան թէ կողմանակիներին—(Յովի. 19₁₁). Յիսուս—Քրիստոսը ասումէ—«Եթէ մէկը այս փոքր պատուիրաններից մինը քանդէ և այնպէս մարդոց սովորցնէ, նա երկնքի թագաւորութեան մէջ փոքր կ'կայուի. իսկ ով կը կատարէ և կ'սովորցնէ, երկնքի թագաւորութեան մէջ մեծ կ'կոչուի» (Մատթ. 5₁₉)։ «Ով որ ինձ հաւատացած փոքրներից մէկին կ'գալթակցեցնէ, լաւ կ'լինի, որ իշի երկանաքարը իւր պարանոցից կախէ և ծովը ընկնի. վակ աշխարհին՝ գալթակղութիւնը պէտք է դայ, բայց վակ նորան, թէ ունձեռքով կ'գալ գալթակղութիւնը» (Մատթ. 18₈₋₇)։

Սարդուս արած զործերը պէտք է բարովապէս վարձատրուին, եթէ նոքա կատարուած են—ա) գիտակցաբար, հասկանալով նոցա ինչպէս օրինականութիւնը, այնպէս և՛ ապօրինութիւնը, և բ)՝ ազատ, բայց ոչ թէ հարկադրուած։ «Այս եթէ իմ կամքով անեմ, վարձատրութիւն կ'ունենամ», գրում է Առաքեալը—(Կորնթ. Ա. 9₁₇). համեմ. Առունթ. Բ. 9₁₇): Բայց որովհետեւ մեր զիտակցութիւնը և ազատութիւնը կարող են զանգան աստիճանի զարգացած և կատարելազործուած լինել, ալդ պատճառով՝ ալդ բարովական վարձատրութիւնը պէտք է համապատասխանի նորան, թէ՝ ալդ զօրութիւնները բնչ

աստիճանի զօրեղ կամ թոլլ կերպով են արտավայտուել Աբացուել։ Ալդ պատճառով՝ Պիղատոսը, որ Աստծուն դատաստանի ենթարկեց, Յիսուս-Քրիստոսի ասելով, աւելի քիչ մեղք ունի, քան թէ նա, ով որ նորան Պիղատոսի ձեռքն է մատնել (Յովի. 19₁₁)։

Բացի գորանից՝ բարովական գործողութիւնները գնահատելու ժամանակ՝ պէտք է ուշադրութիւն դարձնել ինչպէս նպատակի և գործողութիւնների շարժառիթների, այնպէս էլ միջոցների և նոյն իսկ առարկալի վերաց։ Ով որ բարի գործ է անում միայն բարութիւն անելու սիրուց դրդուած, նա իւր առաքինութեան համար ամենամեծ պարզեց է արժան, քան թէ նա, ով որ բարութիւն կ'անէ ուրիշ շարժառիթներից հարկադրուած։ Իսկ եթէ բարութեան հիմքում մեղալի շարժառիթներ կան, այն ժամանակ նոյն իսկ բարութիւնը առաքինութեան նշանակութիւնը կորցնում է և Աստծու առաջ անընդունելի համարում—(Մատթ. 6₁₈): Սորա նման էլ՝ ով մեղքը իւր ներքին տրամադրութեամբ է գործում, նա աւելի մեծ պատժի է արժան, քան թէ նա, ով որ մեղքը ուրիշ շարժառիթներից դրդուած է անում։ Ինչքան շարժառիթները քիչ լանցանք ունենան, այնքան քիչ զատապարտութեան կ'ենթարկուի և նոյն իսկ մեղքը, Բայց և այնպէս ալդ կանոնը չ'պէտք է այն կետի հասցնենք, որ բարի շարժառիթներով կամ նպատակներով վատ գործողութիւնները արգարացնենք։ Միջոցները չեն կարող արդարանալ նպատակով—ալլապէս՝ մենք մի այսպիսի անտեղի միտք թուլ կ'տակինք ասելու, թէ՝ Աստծու կամքը կարելի է կատարել միան ալդ միենուն կամքը ոչնչացնելով։

Վերջապէս, որքան գործողութեան առարկան վեհ է և նորա վերաբերեալ օրէնքի պարտաւորութիւնը միծ, այնքան վեհ կ'լինի առաքինութիւնը և պարզել, եթէ մարդս օրէնքի պահանջն է կատարում։ և, ընդ հակառակն, որքան մեղքը մեծ լինի, այնքան էլ մեծ կ'լինի և՛ պատիքը, եթէ նա օրէնքի հրամանները զանցառութեան է տալիս (Մարկ. 11₂₉₋₃₁). Մատթ. 12₃₁₋₃₂):

Բարովական պատասխանաւութեան չեն կարող ենթարկուել—
1) անդիտակցաբար կատարուած զործողութիւնները, օրինակ, երեխաններինը—մինչեւ նոցա զիտակցութեան հասնիլը,—հասակաւոր խելազարներինը, նոյնպէս և՛ այն մարդոց արածները, որոնք զոցա ակամայ են կատարել՝ օրէնք չ'զիտենալով։ Պօղոս առաքեալը ասում է—«մինչեւ օրէնքի հաստատուիլը աշխարհիս մէջ մեղք կար։ Բայց մ' մեղք չի համարում, ուր որ օրէնք չ'կար» (Հռովմ. 5₁₃): Միան օրէնք չ'իմանալն էլ մարդուն չի կարելի ներել, եթէ ալդ իւր

պատճառով է եղել, երբ նա թէ կարող էր և թէ պէտք է օրէնքը իմանար, միայն թէ ալդ չի կամեցել (Յովհ. 16-2, համեմ, Հոռվմ. 1¹⁹⁻²⁰ 10. 18-21): 2) Ստրկորէն կատարուած գործերն ևս չ'պէտք է պատախանաւութեան ենթարկուին (Կորնթ. Ա. 9¹⁷, Կորնթ. Բ. 9-7): Մարդս մնզագրում չէ և այն դէպօռմ, երբ օրէնքով պահանջուած գործողութիւնները չեն կատարուել ուրիշ պատճառներից հարկադրուած, որոնք են՝ հիւանդութիւնը և ուրիշ անակնկալ պատահարները, և ալլու Միայն ալդ դէպօռմ ալս ես պէտք է մըտքում ունենալ, որ բարոյական պատախանաւութիւնը ներկայ ժամանակովս չի կարող սահմանափակուիլ. նա իւր մէջ պարունակում է ե՛ անցեալը, ակնպէս որ, եթէ մի որ ե՛ է յալանի բարոյական գործ կալ, որը ներկայ ժամանակու մարդու համար անհնարին է դարձել, ալդ վերագրում է նորա թուրութեանը, որ նա դորան իւր առաջուակ անքնական կեանքով ալդ դրութեան և հասցրել:

Սանօթութիւն: Մեր բոլոր գործերը բարոյական օրէնքի հետ կամ համաձայն են, կամ հակառակ. նորա կամ բարոյապէս բարի են լինում, կամ բարոյապէս չար: Բարոյական տեսակետից նակելով—անտարբեր գործեր չեն եղել և չեն ել կարող լինել, Եթէ մարդս երբեմն անորոշ կամ անվճռական դրութեան մէջ է լինում, կամ՝ ինչպէս ասում են, բարոյապէս ոչ սառն է եղել և ոչ տաք, ալդ դէպօռմ նորա անվճռականութիւնը ևս մի տեսակ չարութիւն կամ անբարոյականութիւն պէտք է համարել: Բարութեան և չարութեան աստիճանները կարող են զանազան լինել, բայց երբէք չի կարող ակնպիսի գործ պատահել, որ ոչ բարի լինի և ոչ՝ չար:

ՔԻՒՍՑՈՆՀԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՅՈՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ—ԿԱՐՍԻՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՃՐԱՋԵՇՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ՆՈՐԱ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՅ ԱՆՈՍԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Քրիստոնէական առաքինութիւն ասելով՝ պէտք է հասկանալ ինչպէս մարդուս առանձին բարոյական ընտիր գործողութիւնը, քրիստոնէական հաւատիր համաձայն, Աստուածաբին չնորբէքի աջակցութեամբ, ակնպէս ել նորա հոգու նոյն-իսկ ձլտումը իւր ներքին և արտաքին կեանքը Աստծու կեանքին բարմարացնելու:

Այս բացատրութիւնից այն է առաջ զալիս, որ առաքինութիւնը պէտք է մարդուս անկիղդ ցանկութիւնից բղխի՝ աշխատելով ամեն բանում անպալման կերպով Աստծու կամքը կատարելով բարութիւն է անում ուրիշ շարժառիթներից դրզուած և չի-

կամնում Աստծու կամքը անկեղծութեամբ կատարել, նա չի կարող բարոյապէս բարի մարդ համարուիլ: Ալզպիսի դործողութիւնները մ.այն առաքինութեան կերպարանք ունին, առանց նորա դօրութիւնը ունենալու (Տիմ. Բ. 3-5), որոնք փարիսէական առաքինութիւնները են համարուել և միշտ Փրկչից խիստ հալածուել (Մատթ. 23): Միւս կողմից՝ քրիստոնէական առաքինութիւնը պէտք է ամբողջ բարոյական օրէնքի ճիշտ կատարելու հետևանք լինի (Մատթ. 5-10, Յակ. 2-10): Կասկած չ'կալ, որ ալզպիսի առաքինութիւնը, արզարութիւնը և կամ սրբութիւնը մեր ներկայ դրութեամբ մեզ համար անմատչելի է (Յովհ. Ա. 1⁸⁻¹⁰): Բայց եթէ մենք չենք կարող մեր ոգերով լիակատար արդարութեան հասնել, այն ժամանակ մեզ մնում է միայն բարութիւն սիրել, նորան հետևել և միշտ աւելի և աւելի աշխատել Աստծու պատուիրանները կատարել: Իսկ Աստուածալին անսահման զթութիւնը՝ բարութեան մասին ունեցած մեր ալդ եռանդն անզամ՝ մեզ համար առաքինութեան տեղ է ընդունում: «Լաւ է», ասում է Պօղոս առաքեալը՝ և թէ ամեն ժամանակ բարութեան նախանձաւոր լինիք» (Պաղ. 4-18), Քրիստոնէական առաքինութեան վերոլիշեալ յատկութիւններին պէտք է աւելացնել հաստատամութիւնը եւ անդրդութիւնը: Հոգութիւնութիւն անելու փութեանցիկ ձգտումները իսկական առաքինութիւն չեն կազմում, որովհետեւ դոքա կարող են արտավագութեամբ մարդոց մէջ, ինչպէս նորա շուտ ծաղում են, ակնպէս էլ շուտ անկատանում: Պատահում է, որ մալզիկ մի ժամանակ հաւատում են, իսկ փորձանքի միջոցին հեռանում» (Պուկ. 8-12): Թէ և բարոյական կեանքի մէջ ակնպիսի անհաստատամութիւնը մարդուս բարի գործերի բարոյական արժեքը չի խլում, բայց և այնպէս իսկական առաքինութեան իրաւունք ել չի տալիս: «Ով որ մաճը կ'ըռնէ և իստ կ'նալէ, ասում է Փրկչիը, նա Աստծու թագաւորութեան համար անդարմար է» (Պուկ. 9-12): «Երկմիտ մարդը իւր ձանապարհներում անհաստատ է» (Յակ. 1-8): Իսկապէս՝ առաքինի մարդը նա է, որ, սովոր լինելով Աստծու օրէնքի համեմատ ապրել, նորա զեկավարութեամբ, միշտ «կատարեալ», և ամեն բարի գործերի համար պատրաստ, մարդ է» հանդիսանում (Տիմ. 23-17): Աստծու Խօսքը առաքինութիւնը ալդ մտքով է հասկանում, երբ զրական կերպով է հրամագում—«Հաստատ եղէք, անշարժ կացէք, և ամեն ժամանակ Տիրոջ համելի շատ գործեր արէք, զիտենալով, որ ձեր աշխատառութիւնը Տիրոջ առաջ պարապ տեղ չի անցկենալ» (Կորնթ. Ա. 15-38): Միայն թէ արագիսի գէպքերում պէտք է այն-

պէս անել, որ կատարուելու գործերի վերայ ժամանակը արդար չափով բաժանուի: Եթէ վատ բան է անում նա, որ, միայն հասարակական գործերի լեռնելով, իւր ընտանեկան պարտքերը բոլորովին մոռանում է, աւելի վատ կ'անէ նա, որ՝ այս բանը պատճառ բռնելով՝ ինքն իրան քրիստոնէական ամեն տեսակ օգտաւէտ. գործերից լետ կ'կանգնեցնէ. կամ՝ ինչպէս ե՛ նոքա, որոնք բարեկալառութեան մասին խօսք եղած ժամանակ շուտով իրանց հասարակական և տնալին գործերը մէջ կ'բերեն, թէ և պատրաստ են դոցաէլ մոռանալ, երբ իրանց առաջ երես-երեսի կ'կանգնեն թէ իրանց զրուանքները և թէ զուարձութիւնները: Ով որ կամենում է իսկապէս սրտով գործ կատարել, նա էլ կարող է աման բանի համար ժամանակ դոնել, բարեզործութեան ընդհանուր պարտքերը խոհեմութեամբ կատարելով, առանց իւր անձնական պարտականութիւններին մնաս տալու:

Վերջապէս՝ քրիստոնէական առաքինութիւնը պէտք է հիմնուած լինի քրիստոնէական հաւատի վերայ և միշտ էլ հաստատ զոյս ունենալ: Աստուածալին Ամենազօր չնորհքի օգնութեան վերայ, հասկանալով, որ՝ առանց զորա օգնութեան, առաքինութիւնը կատարեալ չի կարող լինել: Աստծու Խօսքը պարզ ասում է, որ նորա (առաքինութեան) ցանողը—Հակը Աստուածն է (Մատթ. 15¹³. Յով.¹, 15²), «սերմը»—Աստծու Խօսքը (Պետր. Ա. 1²³), «արմասը և հիմքը»—Քրիստոս (Յով. 15⁴⁵. Կորնթ. Ա. 3¹¹. Եփ. 2¹⁰) «կենսատու և ըրացուցիչ զօրութիւնը»—Սուրբ Հոգին (Հովովմ. 8¹⁴⁻¹⁹. Կորնթ. Ա. 12³⁻¹¹. Տիտ. 2¹¹⁻¹². Յ զլ. 4⁷. Գաղ. 5²²⁻²³):

Առաքինութիւնը մեզ համար շատ կարենու է և անհրաժեշտ: Աստուած մարդուն նորա համար ստեղծեց, որ նա առաքինութեան և կատարելութեան մէջ յառաջադիմութիւն ցոյց տալ: Ալդ պատճառով՝ նորան իւր Պատկերի նման ստեղծեց, իւր դաշը կապեց և օրէնք տուեց—ամեն տեսակ անարդարութիւնից զրուշացնելու նպատակով: Երբ մարդս շեղւում էր Աստծուց, Աստուածալին Նախախնամութեան բոլոր կարգազրութիւնների զլխաւոր նպատակը ալն էր լինում, որ նորան կրկին առաքինութեան ձանապարհը բերէ և դէպի լաւիտենական երտնութիւնը տանի: Դորա համար են խոստումները և լաւտնութիւնները, զորա համար են օրէնքը և մարզարէնները, զորա համար Աստծու Որդին աշխարհ եկաւ, զորա համար են Ս. Հոգու չնորհքը և Ս. Եկեղեցին իւր փրկ սրար հաստատութիւններով: Ամեն կողմից երախտապարտ քրիստոնեան իւր սէրը և չնորհակալութիւնը Աստծուն ինչպէս

պէտք է յատնէ, եթէ ոչ՝ միայն նորանով, որ կարողանալ Նորա կամքը սրբութեամբ կատարել, իսկ առաքինութեամ մէջ էլ լառաջազիմութիւն ցոյց տալ: «Եթէ ինձ սիրում էք, հապա իմ պատուիրան-ներս էլ կ'պահէք»: «Ով իմ պատուիրաններն ունի և պահում է նոցա, նա է, որ ինձ սիրում է» (Յով. 14¹⁵⁻²¹): Բոլոր վաեմ խոստումները և բարիքը, որոնք քրիստոնէն լաւիտենականութեան մէջ են սպասում, միայն բարեգործ մարդոց սեպհականութիւնն են կազմում (Մատթ. 25³⁴⁻⁴⁶):

Անկասկած՝ բնական առաքինութիւնը, իբրև բնական և բարուական օրէնքի համեմատ արած բարութիւն, չի կարող չար մինել, ուստի և չի կարող Աստծուն, որ Վեհագոյն Բարութիւն է կազմում, անընդունելի և անհաճոյ համարուիր: Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը՝ հեթանոսների մէջ անգամ քաջալերում էր սրտի բարի արա մադրութիւններ ունենալ (Մատթ. 8¹⁰. 12⁴¹⁻⁴²): «Աստուած աշառութիւն չունի, միայն ամեն ազգի մէջ այն անձը, որ նորանից վախենում է և արդար բան բանում—նորան ընդունելի է» (Դործք առ. 10⁴⁴⁻⁴⁵): Միայն քրիստոնէական առաքինութիւնն է, որ՝ իւր կատարելութեամբ, բնական առաքինութիւնից գերազանցում է, Քրիստոնէական առաքինութեան վերև լիշած բոլոր յատկութիւններից ոչ մէկը իւր ամբողջութեամբ չի կարող բնական առաքինութեանը վերագրուել, իսկ մի քանիսներից էլ նա բոլորվին չի ունենալ: Բնական առաքինութիւնը ծագում է ոչ թէ միայն նորանից, որ մարդս անկեղծութեամբ ինքը լինի որոշած բարութիւն անել, կամ թէ զրուած լինի սիրուց, կամ Աստծուն փառաբանելուց և կամ մերձաւորներին բարիք անելուց: ոչ, նա առաջ է եկել ալս ինչ, կամ այն ինչ մասնաւոր զրուերից ծագած բնական տրամադրութիւնից, անձնական շարժաւիթներից, ուստի և զորա արտակաւատութիւնները փութանցիկ նշանակութիւն ունին: Ճիշտ հասկացողութիւն չ'ունենալով Աստծու և թէ դէպի մարդն ունեցած նորա զարաբերութեան մասին, բնական մարդը չի կարող ունենալ այն կատարեալ և վեհ շարժաւիթները, որոնք անմիջապէս կապուած են ալդ գլխակցութեան հետ և որոնց պատճառով քրիստոնէական առաքինութիւնը առաջին տեղն է բռնում: Բացի զրանից՝ բնական առաքինութիւնը մարդու բնական ուժերով է կատարում, որոնք քալքարայուած են և հեշտութեամբ հակում են դէպի չարութեան կողմը: Քրիստոնէին առաքինութեան ասպարիզում օգնող է հանդիսանում Աստուածալին չնորհքը (Յով. 15¹⁻⁹. Կորնթ. Ա. 15¹⁰. Կորնթ. Բ. 3³. Փիլ. 2¹³). Նորան են տրուած կեանքի և

բարեպաշտութեան վերաբերեալ Աստուածային բոլոր զօրութիւնները» (Պետր. Բ. 1₃₋₅), նա է ստացել Աստծու Խօսքը, Որ կարող է նորան իւր փրկութեան համար իմաստութիւն պարզեց (Մատթ. 4₄, Պետր. Ա. 2₁, Տիմոթ. Բ. 3₁₅₋₁₇), նորա առաջն է կանգնած Քրիստոսի բարութական կատարելութեան ամենավայր պատկերը (Մատթ. 11₂₉, Յով. 13₁₅₋₃₄, Փիլ. 2₅, Եթր. 7₂₈, 12₁₋₂). Նորան է բաշխած Առւրբ Հոգու չնորհքի անսպառ աղքիւրը որով վերանորոգում, ամրանում և զարդանում են մարդուս բոլոր զօրութիւնները (Յով. 7₃₇₋₃₉, Գործք առ. 2₁₋₁₇, 18-33, Տիմ. 3₆₋₇, Համեմ. Կորնթ. Ա. 12₄₋₁₄, Մատթ. 28₁₉, Պոլ. 2₂₁₋₂₀, Յով. 20₂₂₋₂₃)—ուստի և նորա առաքինութիւնը կարող է կատարելութեան ամենաբարձր աստիճանի վերալ կանգնել, որպիսի զարգացման չի կարող համենել բնական առաքինութիւնը (Յով. 15₁₋₅): Ազգիւսի հոգեոր զինքով զինուած՝ ամեն մի քրիստոնեալ կարող է Ս. Պողոս առաքեալի հետ ասել—«ամեն բան կարող եմ անել Յիսուսի միջոցով, Որը ինձ ովտեց» (Փիլ. 4₁₃): Վերջապէս՝ արգասիքների վերաբերեալ պէտք է այս ևս ասել, որ բնական առաքինութիւնը՝ քրիստոնէականի հետ համեմատելով, մեղաւոր մարդուն լիակատար խաղաղութիւն չի տալիս, նորա մէջ չի ոչնչացնում Աստծու առաջ իրան մեղաւոր համարելու զգացմունքը, Նորա հետ չի հաշտեցնում և փրկութեան գործին չի նպաստում (Հովմ. 6₂₂, Պետր. Բ. 18-11): —

ԵՆՈՐՃՔ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ,

ԵՆՈՐՃՔԻ ԱՆՃՐԱՃԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ,

Մարդու իւր բնական, վնասուած զրութեամբ, ինքն ըստ ինքեան չի կարող բարուապէս վերածնուել, նոր աստուածահաճոյ կեանք սկսել և փրկութեան համել: Մեղքի մէջ ընկնելուց իւտ, Առաքեալի ասելով, մարդուն մնաց միան բարութիւն անելու ցանկութիւն և բարի զօրծ կատարելու ձգտումն, միան թէ ալդ իրազ զործելու համար զօրութիւն չ'ունէր, ալնպէս որ՝ «բարութիւն» որ ուզում էր, չէր անում, ալ չարութիւն՝ որ չէր ուզում, ալն էր անում» (Հովմ. 7₁₉): Մարդուն վերստեղել, մեղքի կապանքներից աղատել և նորից բարութեան նանապարհի վերալ կանգնեցնել—Աստուածալին չնորհքի գործողութեան առարկան է կազմում: «Աստուածալին չնորհք» ասելով պէտք է հասկանանք ամեն մի պարզեց, որն Աստուած մարդոց տալիս է իւր սիրուց զրուած, նոցա

կողմից առանց մի որ և է ծառ ալութիւն սպասելու, որ, կեանք, առողջութիւն, հոգեկան ընդունակութիւններ, բարօրութիւն, և ալն: Աւելի նեղ, իսկական, մտքով վերցրած—չնորհքը Աստուածալին մի առանձին զօրութիւն է, որը մեզ է տրուել մեր Փրկչի արած ծառայութիւնների պատճ սռով, որի նպատակն է մեզ արդարացնել և լուսաւորել, և ապա՝ դէպի յաւիտենական երջանիկ կեանքը տաներ: Մեզ համար փրկութիւն ցանկացող Աստծու անսահման զթութեամբ՝ Նորա ամենազօր չնորհքը բոլորին փրկութեան է հարափում: Աստուածալին չընորհքի փրկարար զօրութիւնը և աշխատում, Քրիստոսի կատարած փրկարար ծառայութիւնների պատճառով, նորանով զինուիլ—Նորան մեզ համար անտեսանելի և անըմբոննելի կերպով ստանում է միան մկրտութեան խորհրդի միջոցով: Աստուածալին ալդ չնորհքը՝ դորա միջոցով մարդու մէջ մտնելով և անմիջապէս Նորա բնութեան վերալ աղեցութիւն անելով, նորան հոգեպէս վերածնեցնում է, և դորանով մարդուս փրկութեան հիմքը զնում: Յետոյ, նորա մէջ իւր զործողութիւնը շարունակելով, միւս խորհուրդների միջոցով,—Աստուածալին չնորհքը մարդուս հոգեկան կեսն քը պահպանում է, երբ որ նա արդէն նորա մէջն է մտել, և նպաստում է ամենավլում բարուական կատարելութեան համելուն: Աղպիսով՝ նա նորան հարկաւոր է նորա հոգեոր բարուական կեանքի ամեն հասակում—թէ սկզբումն, թէ շարունակութեան մէջ և թէ բարոյական կատարելութեան բարձր աստիճանների վերալ: Ալդ բանը անմիջապէս հաստատում է Խնքը՝ մեր Տէր Յիսուս-Քրիստոսը: Նա ասում է—«Ոչ ոք չի կարող ինձ մօտ գալ, մինչեւ որ ինձ ուղարկող Հալլը նորան իւր մօտ չ'զրաւէ» (Յովմ. 6₄), «Եթէ ոչ ոք ջրով և հողով չ'ծնի, նա չի կարող երկնքի թագաւորութիւնը մտնել» (Յովմ. 3₅), «Ինչպէս որ ուուը (Ճիւղը) չի կարող ինքն իրան պտուղ բերել, եթէ որթի վերալ չի հաստատուած, ալնպէս էլ դուք չէք կարող, եթէ ինձ վերալ հաստատուած չ'լինիք: Ես որթն եմ, իսկ զուք՝ ուուը, ով ինձ վերալ է հաստատուած, իսկ Ես էլ նորա վերալ, նա շատ պտուղ կ'բերէ, որովհետեւ առանց ինձ ոչինչ չէք կարող անել» (Յովմ. 15₄₋₅): Մի ժամանակ էլ Պետրոս Առաքեալին ասաց—«Ես քո մասին խնդրեցի, որ քո հաւատը չ'պակասի» (Պոլկ. 22₃₃) և մեզ բոլորիս էլ աղօթք անել սովորեցրեց ալպէս—«Մեր Հալլ... մեզ փորձանքի մէջ մի ձկիր, ալլ փրկիր մեղ չարից» (Պոլկ. 14₃₋₄): Պողոս առաքեալն ես ասում է՝ թէ «Ես, որ ձեր մէջ բարի զործեր ակսեց, մինչեւ Յիսուս-Քրիստոսի օրը պիտի նոյնը կատարէ» (Փիլ.

1-6): Այդ բոլորից երեսում է, որ, առանց Հայր Աստծու անմիջական աջակցութեան, առանց նորա չնորհքի, մարդս չի կարող Քրիստոսին դիմել ե, ու Հոգու զօրութեամբ էլ չ'վերածնուած, Աստծու թագաւորութիւնը, կամ Քրիստոսի եկեղեցին, մտնել առանց Քրիստոսի հետ անմիջական հաղորդակցութիւն ունենալու, առանց Նորա կենսատու զօրութիւնը ընդունելու և իւրացնելու, մարդուս հոգեորբարուական կեանքը չի կարող զարդանալ և կազդուրուել զոլութիւն չի կարող ունենալ ոչ մի հոգեոր պտուղ և ոչ մի առաքինութիւն, որովհետեւ վերածնուածների հոգեոր պտուղները—«սէրը, խնդութիւնը, խաղաղութիւնը, երկանմտութիւնը, քաղցրութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեղութիւնը և ժուժկալութիւնը» Աստուածալին չնորհքի պտուղներն են (Պատ. 5 22). վերջապէս, առանց Աստուածալին չնորհքի, մարդս չի կարող ե՛ւ մինչեւ իւր կեանքի վերջը ապրել: Բայց եթէ ասում է, թէ՝ մարդս կարող է իւր փրկութեանը հասնիլ, ալդ կ'նշանակի, որ նա՝ չնորհքի հետ միասին՝ ինքն է իւր փրկութեան զործը կազմակերպում և իւր բարուական վերածնութեան գործում մասնակցութիւն ցոյց տալիս: Մարդուն չնորհելով բանականութիւն և ազատութիւն, ցոյց տալով նորան բարուական կատարելութեան ճանապարհ, Աստուած կամենում է, որ մարդս ինքն իւր նշանակութիւնը հասկանալ իւր բարուական ազատ գործունէութեան ասպարիզում, որ նա իւր սիրառ պատրաստէ Աստուածալին չնորհքը ընդունելու իւր չնորհքի ազգեցութեամբ մարդոց իւր մօտ հրաւիրելով, Աստուած նոյս ազատութիւնը երբէք չի բռնաբարում: «Ահա Ես դռանը կանգնած եմ և բաղխում եմ, ասում է Փրկիչը, եթէ որ մէկը իմ ձանս լսէ և զուռը բաց անէ, նորա մօտ կ'մտնեմ և նորա հետ ընթրիք կ'անեմ, և նա էլ՝ ինձ հետո» (Յալտն. Յովհ. 3-20): Նա ինքը, Փրկարար զօրութիւն լինելով, երբէք մեղ, առանց մեր ցանկութեան և կամ մասնակցութեան, չի փրկել:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒՍ ՎԵՐԱՅ, ԱՍՏԾՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԻՋՈՑԻՆ:

Ճանապարհները և եղանակները, որոնց միջոցով Աստուածալին չնորհքը ազգեցութիւն է անում մարդուս վերալ, երբէք նորա ազատութիւնը չ'սահմանափակելով, կարող են լինել և թէ լինում էլ են, շատ զանազան: Միան թէ՝ նոցա բոլորին երկու տեսակ կարելի է համարել—բնական և գերբնական :

Մարդուս հոգին, իւր

բնութեամբ, որ Աստծու պատկերն է կրում, պէտք է իւր նախապատկերին, ալսինքն՝ Աստծուն ճգափի: Խոկ եթէ ալդ չի լինում դորա պատճառն ալն է, որ մարդ զանազան մեղքերով շաղախուած է, Աստուածալին չնորհքը հէնց զորանում էլ օգնում է մարդուն—նա կամ անմիջապէս նորան զօրութիւն է տալիս ալդ մեղքի հանգուցները քարուքանդ անելու, նորա մէջ զդգոնութիւն լարուցանելով թէ դէպի իւր անձը և թէ դէպի իրան շրջապատողները,—կամտեսանելի բնութեան և թէ իւր և ուրիշների կեանքի մէջ լառաջացած զանազան արտաքին անցքերի միջոցով: Վերջին դէպքում Աստուածալին չնորհքը, արած մեղքերի համեմատ, ոմանց ենթարկում է զանազան հիւանդութիւնների, թշուառութիւնների, անարգութեան, ստրկութեան, և ալն, ոմանց ուշադրութիւնը դարձնել է տալիս տեսանելի բնութեան զեղեցկութեան և Աստուածալին տաճարների չքնաղութեան վերալ, որոնցով նոցա հեռացնում է ունակն աշխարհիս հրապրուներից: մի քանիսների էլ կ'եանքին բուրովին հակապատկեր կեանք է ներկալացնում, որոնք են, օրնահատակութիւնը և կամ անձնուրաց և թէ Աստուածանածոչ կեանքի ուրիշ օրինակները, և ալն: Աստուածալին չնորհքի ալդ յերգործութիւնն աւելի արտավագտում է Աստուածալին Խօսքի միջոցով: Որն ասում է—«Կենդանութիւն տւողը հոգին է, մարմինը ոչինչ օգուտ չի կարող տալ. ալն խօսքերը, որ ձեզ հետ խօսում եմ, հոգի են և կեանք» (Յովհ. 6 6): Այդպիսի եղանակներով աստուածալին չնորհքը մարդուն հաւկաֆնում է իւր մեղաւորութիւնը և վըտանգաւոր զրութիւնը, հետն էլ մեղքի քաղցրութեան հակառակ, զգալ է տալիս կեանքի և բարութեան քաղցրութիւնը և ապա զոցանով մեղսալի կեանքից հեռացնում, նախապէս կանդնեցնելով նորան բարութեան և չարութեան մէջ եղած անտարբերութեան կետի վերալ: Շնորհքի ազգեցութեամբ առաջ եկած ալդ կերպ դրութիւնը նման է Աւետարանի մէջ լիշած անառակ որդու դրութեանն երբ նա, սովոր մեռնելով, «խելքի եկաւ» ալսինքն՝ լիշեց իւր Հօրից առունը և ալն բաւականութիւնը, որ ուրիշները իւր Հօրից ատանում են: Դորանից լետոյ թողնում է մարդուն, իւր ազատ ողուն—իւր վիճակը որոշելու՝ կամ Հօր մօտ վերադառնալ, նորան դիմել, կամ անզթութեամբ և լամառութեամբ մեղքերը շարունակել: Աստուածալին չնորհքի ներշնչմանը ազատ կերպով ենթարկուելով՝ ընկած մարդը, Աստծու Խօսքի չաղեցցութեամբ, հասկանում է, որ ինքը մեղանչական է և Աստծու առաջ անչափ լանցառ: Դորա հետեանքն ալն է, որ նա իւր մեղքերը զղջում է և

տղում. հասկանում է իւր անզօրութիւնը՝ այդ ընկած տեղից վեր կենալու, ուստի և՝ կողմնակի օգնութիւն է ցանկանում—«ես սովածութիւնից մեռնում եմ», ասում էր ալղպիսի դրութեան մէջ անտում որդին (**Ղուկ.** 15-17). «Բնչ անենք», հարցնում էին և՝ Պետրոս առաքեալի քարոզը լող հրէաները. Եւ ահա ալղպիսի դրութեան մէջ, որը լուսահատութեան մօտիկ է, Աւետարանի խօսքերը, ինչպէս երկնքի ցող, ընկնում են մարդուս սրտի չոր ու ցամաք հողի վերալ, փափկացնում են նորան, նորա մէջ հաւատ են զարթեցնում, որը, նորան լուսահատութիւնից պաշտպանելով, այն կետի է հասցնում, որ նա անկեղծ ազօթքով օգնութիւն է ինզրում: Ընդունելով Աստծուն իբրև Դատաւոր և Պարզեատու, Աւետարանը նորան համարում է և իբրև Ամենաբարի Հայր, Որը բոլորին փրկութիւն է ցանկանում, ուստի և՛ փրկութեան ու մաքրութեան խորհրդով մեղ ինչպէս «կեանքի, ախալք և՛ բարեպաշտութեան բոլոր զօրութիւնները և միջոցները տալիս է»: Այդ բոլորից լետով՝ Աստծու Խօսքը առում է—«միան հաւատա Յիսուս-Քրիստոսին, և կ'ազատուիս» (**Գործք առ.** 16₃₁): Ալղպիսով՝ նա անկեղծութեամբ հաւատում է և ընդունում Հայր Աստծուն, Նորա Որդուն և Սուրբ Հոգուն, մեր Փրկչի խաչի վերալ արած ծառալութիւնները և սուրբ Հոգու բարերար ազդեցութիւնը, Որի օգնութեամբ մենք կարող ենք մեղքին հակառակ կենալ և նորան լաղթել: Զզջալու ալղպիսի հաւատը, Աստծուածային չնորհքի ազդեցութեամբ, նորան զրգում է իւր մեղանչական զրութիւնից կանդնելու նպատակով վճռական ոյժ զործ ածել, մօտենալ իւր Հօրը և, անառակ որդու նման, ասել—«Հայր, ես մեղք եմ գործել երկնքի և Քո առաջ. այլ ես արժանի չեմ Քո որդին կոչուելու. ընդունիր ինձ Քո վարձկաններից մէկը «Ղուկ. 15₁₈₋₁₉»: Զզջացող մեղաւորի վճռական դիտաւորութիւնը, որ պէտք է իրան Աստծու ծառալութեանը նուիրէ—դիմելու վերջին զործն է համարում: Դորանից լետով նորան միան մնում է Քրիստոսի հետ Մկրտութեան խորհրդի միջոցով միանալ և Սուրբ Հոգու չնորհքը ընդունել: Այն ժամանակ Աստծուածային չնորհքը նորա առաջ է զալիս իւր մաքրող, սրբող, կազդուրող և ուրախութիւն ու միխթարութիւն պատճառող զօրութեամբ, որը արտապատում է Մկրտութեան, Թրոշմի և Հաղորդութեան խորհուրդների միջոցով: Դորանից լետով՝ նա դառնում է հաւատացող քրիստոնեակ, բարովապէս նորոգուած (Կորնթ. Բ. 5₁₇), և արդարութեամբ ու ձշմարիտ սրբութեամբ տողորուած նոր մարդ (Եփ. 4₂₂₋₂₄), սիրող Հօր սիրելի որդի (Հոգմ. 8-15, Յով. 1₁₂₋₁₃), որը ապրում է Հօր տանը՝

Նորա հետ ամենասերտ յարաբերութիւն և համաձայնութիւն պահանջնելով:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒՍ ՎԵՐԱՅ, ԱՍՏԾՈՒՆ ԴԻՄԵԼՈՒՅ ԵԵՏ. ՀՊԳԵՒՈՐ—ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ:

Վերադարձը կամ վերածնութիւնը և, մարդիկ «Նոր սկզբունք ընդունող», «Երիտասարդ դարձող» մարդոց դրութիւն են անուանում, նորան համարելով հոգեոր կեանքի առաջին աստիճան: Այդ աստիճանի վերալ մարդս հոգեոր մանուկ է ձանաշւում: Ալղպիսի դրութեան մէջ վերածնուածներին, որոնք դեռ ևս բարութիւն անելու մէջ չեն կազդուրուած, զանազան վշտեր էլ իրանց վերալ չեն փորձած, եթէ Աստծուածային չնորհքը բաց թողնէր, այն ժամանակ նորա խսկոյն և եթէ կ'ոչնչանային: Այդ պատճառով՝ չնորհքը ամենից առաջ մարդուն ամեն բանում իւր օգնութիւնն է ցուց տալիս, մինչև անգամ մարմնաւոր կարիքների մէջ, և ապա նորանից շատ անբաղդութիւններ հեռացնում: Երբ որ Աստծուածային չնորհքը մարդուն հասկացնում է, թէ պէտք է Աստծու վերալ լուս դնել, այն ժամանակ նա նորան իւր ոլիմերի համեմատ, աստիճանաբար, զանազան փորձութիւնների մէջ է ձգում, որպէս զի մարդս կարողանալ բոլոր գժուարութիւնները համբերութեամբ տանել: Եւ այդ շարունակում է, մինչև որ մարդս փոքր առ փոքր ընտելանում է և հմտանում: Այդ փորձանքները մարդու համար անհրաժեշտ են՝ բարի զործեր անելու մէջ ամբապնդուելու նպատակով: Մարդուս ալղպիսի փորձանքների ենթարկելով, Աստծուածային չնորհքը նորան ոչ թէ միան բաց չի թողնում, այլ և՛ միշտ իւր ազդեցութեամբ զինում է և կազդուրում:

Զանազան փորձանքների զէմ ունեցած կախութ, մշտական աշխատանքը, համբերութիւնը, և չնորհքի ազդեցութեան տակ կատարուած՝ միւս առաքինութիւնները, մէկ կողմից, նորա հոգին բոլոր մարմնական և զգալական ձգտումներից մաքրում են, խոկ՝ միւս կողմից՝ ամբապնդում—բարի զործ անելու, և ոյժ տալիս—հեշտութեամբ Աստծուածային պատուիրանները կատարելու:

Երբ որ մարդս, Աստծուածային չնորհքով, սկսում է բաւականին առաջ զնալ և կատարելազորդուիլ, այն ժամանակ սատանան ամենալի կերպ աշխատում է նորա մէջ հապարտութեան և ինքնադութեամբ կիրք առաջացնել և ալղպիսով նորան Աստծուց հե-

ռացնել: Այդ պատճառով՝ եթէ չնորհքը նկատում է, որ մարդուտ մտքում մի որ և է կասկած է ծագել, այն ժամանակ՝ իսկոյն և եթ՝ փորձանքներ է ուղարկում, որ նա՝ իւր անզօրութիւնը զգալով՝ կըրկին խոնարհութեամբ Աստծուն զիմէ, չ'խնայելով՝ և իւր օգնութիւնը թէ մեծ և թէ փոքր վտանգների միջոցին:

Երբ մարդս բոլորովին խոնարհում է Աստծու առաջ և մանկական հաւատարմութիւն և սէր ցոյց տալիս, այն ժամանակ Աստծուածալին չնորհքը, առանց արգելքի, մտնում է նորա հոգու մէջ և բոլորովին մաքրում և լուսաւորում: Ովալդալիսի Աստծուածալին չնորհքի արժանանում է և երկնային ամենավայեմ զուարձութիւն ստանում, նա երբէք թորլ չի տալ, որ իւր սիրտը մտնէ ան, ինչ որ զգալական է և տարփալի, որովհետեւ նա արդէն ուրիշ վսեմ ձգտումն է ձեռք բերել:

Հոգեոր վերածնութեան այդ աստիճանը կոչում է հոգեոր լուսաւորութիւն:

Մարդս հոգեոր կեանքի ցոյց տուած բոլոր աստիճանները անցնելով, վերջապէս, վերածնութեան, մաքրութեան և լուսաւորութեան միջոցով՝ կատարեալ մարդ » է դառնում: Այդպիսի անձնաւորութիւնը բարոյական կատարելութեան այդ աստիճանի վերաբնասնում է և, որքան ներկալ կեանքումն հնարաւոր է, բարոյական ազգատութեան բարձր աստիճանին: Նա արդէն օրէնքից բարձրը կանգնած է համարուում: Փոխանակ բնական անզօրութեան, նա իւր մէջ մի այնպիսի չնորհատու զօրութիւն է զգում, որ նորանով ամեն բան կարողնում է անել, մինչեւ անդամ զանազան հրաշքներ:

Մ Ե Պ Ք:

Աստծու Օրէնքից թէ գործով, թէ խօսքով և թէ մոտածութեամբ ամեն տեսակ հեռանալը Աստծուածալին Խօսքը մեղք է համարում: « Ամեն անիրաւութիւն մեղք է » (Ցովհ. Ա. 5-11). « Ով որ մեղք է գործում, նա էլ անօրէնութիւն կ'գործէ, որովհետեւ մեղքը անօրէնութիւն է: » (Ցովհ. Ա. 3-4):

Խրաքանչիւր մեղքի հիմքում եսականութիւն, կամ ինքնամիրութիւն է գտնուում, որը բոլոր առաքինսութիւնների արմատ և հիմք կազմող սիրոյ հակառակ է: Եւ որովհետեւ մարդս բաղկանում է մարմից և հոգուց, այդ պատճառով եսականութիւնը զարդանում է և արտապայտում մասամբ զգալական և մասամբ էլ հոգեոր կողմի առաւելութեամբ: Այս տեղից է առաջ զալիս մեղքի երկու

դլխաւոր տեսակը՝ զբայականութիւնը և մեծամութիւնը կամ հըպարտութիւնը:

Եսականութիւնը մարդուն հարկադրում է աչքի առաջ ունենալ կեանքի և գործունէութեան մէջ իւր անձնական շահերը, իւր անձնական օգուտը կամ փառքը, և ոչ թէ՝ Աստծու փառքը և մերձաւորներին անելու բարութիւնը: Այդ պատճառով՝ Ցիսուս-Քրիստոսը, մեղքի այդ զիսաւոր տեսակների հակառակ, իւր հետևողներից պահանջում է՝ անձնութիւնը և խոնարհութիւն: « Եթէ մէկը կամենում է իմ լետերից գալ, նա պէտք է իւր անձը ուրանալու (Մարկ. 8-34). « Ինձանից սովորեցէք, թէ՝ Ես Բնչակէս հեղ եմ և սըրտով խոնարհ »:

ՄԵՂԱՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՀՐԱՊՈՅՐ, ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈ-
ԼՈՒԹԻՒՆ:

Մեղքը առաջ եկաւ ազատութեան զէմ չարութիւն անելոց, և ամենից առաջ երեաց վերին ոգիների, իսկ լետոյ՝ մեր նախաձնողների անկումով [Ցովհ. 8-14. Ցովհ. Ա. 3-6 Ցովհ. 6], որոնցից բնութիւնը վնասուելով, բնական ծննդեան շաւզով, անցկացաւ և ընկաւ ամբողջ մարդկութեան սեռի վերաբ: Ուստի և՝ ներկալ գրութեամբ մենք բոլորս ենթարկուած ենք մեղքիւ: Մարդուս ալդպիսի դրութիւնը կոչում է մեղանչական դրութիւն: Պօղոս առաքեալը ասում է—« Մէկ մարդից աշխարհ մտաւ մեղքը, և այն մեղքից էլ՝ մահը » (Հոռվմ. 5-12): Ցիսուս-Քրիստոսն էլ ասաց Նիկոդիմոսին—« մարմինից ծնածը մարմին է », այսինքն—մեղանչականութիւն և անմաքրութիւն: Ինչպէս վարակուած աղքիսից վարակուած առուակ է հռառում, այնպէս էլ մեղքով վարակուած ծնողներից մեղանչական սերունդ է առաջ զալիս: Այդ ժառանգական ապականութիւնը մարդու բոլոր էութիւնը գրկած է, այնպէս որ՝ ոչ մի զօրութիւն առողջ չէ: Նա բռնել է ամբողջ հոգին և իւր զօրութիւնն էլ ցոյց է տալիս: 1) մտածութեամբ—նորանով, որ Աստծուածալին ճշմարտութիւնը դանդաղութեամբ է ճանաչւում (Կորնթ. Ա. 2-14), 2)—կամքով, աւելի հակուած լինելով դէպի չարը, քան թէ դէպի բարին (Հոռվմ. 7-18-23), 3) զգացմունքներով կամ սրտով՝ հեռանալով ճշմարիտ հոգեկան բարիքից, միայն զրկած ունենալով զգալական և մարմինական բարիքը (Մտտթ. 15-19), 4) խղճմտանքով—նորան նսեմացնելով, որի պատճառով վերջինս միշտ պարզ չէ լաբանում Աստծու կամքը և թէ՝ մարդուս արած լանցանքները. երբեմն էլ սոցա մասին ոչինչ

չի խօսում: Վերջապէս, մարդուս մարմնի մէջ ալդ մեղանչականութիւնը երեսում է նորանից, որ մարմինը և հոգին միշտ միմեանց հետ կոփի են մղում (Հռովմ. 7-22), լինում են հիւանդութիւններ և մարմինն էլ մահանում է (Հռ. 5 12. Կորնթ. Ա. 15 21): Մեղանչականութիւնը, ինչպէս մարդկալին կեանքի ժառանգական օրէնք, ոչնչանում է մարդուս հոգեկան վերածնութեամբ, այն էլ Ս. Հոգու շնորհքով—մղրութեան խորհրդի միջոցով, թէ և դէսի չարութիւնն ունեցած հակումն և թէ զորանից առաջացած հետեանքները—բոլորովին չեն ոչնչանում: Մարդուս մէջ նոցա ոչնչացումն աստիճանաբար է կատարւում կեանքի լետազայ շրջաններում, նաև լով թէ՝ նա Աստուածալին չնորհքի օգնութեամբ առաքինութեան մէջ որքնն ամուր է հաստատուած և կազդուրուած, և թէ՝ բնչ հոգերբարուական կատարելութիւն ստացած:

Որովհետև մկրտութեան խորհրդի միջոցով ստացած հոգերը վերածնութիւնից լետով մարդուս մէջ մեռում է և չարութիւն անելու հակումն, վասն որով՝ նա կարող է հետութեամբ շեղուիլ ծշմարիտ ճանապարհից և ընկնել ալս կամ ալն մեղքի մէջ: Ալդ շեղուելու առիթ տւողներն են զանազան փորձանքները թէ մարմինի, թէ աշխարհի և թէ սատանակի կողմից, որոնք կարող են նորան հեշտութեամբ գրաւել և հրապարել իրանց պատրանքներով, բոլորովին բաւականութիւն պատճառելով նորա մէջ բոլն դրած մեղք^{*)} գործելու հակամտութեանը:

*) Մարմին ասելով պէտք է հասկանաւ բացի ֆիզիքականից, և մարդուս լինասուած հոգու կազմը, քանի որ նա զբայցական հաճոյքների շրջանումն է գործում, և կամ մտածում ոչ թէ քրիստոնէական հաւատի ոգու, այլ մարմնական բանականութեան մեծամտութեան համեմատ: Աշխարհ հասելով էլ պէտք է ընդունել այն բոլորը, ինչոր նորա մէջն է, այսինքն՝ առարկաները և աշխարհիս իրերը, որոնք իրանց գեղեցկութեամբ, քաղցրութեամբ, կամ օգտակարութեամբ, մարդոց սրաւերը իրանց են գրաւում և կոյը կողմնազանութիւն առաջացնում (Յովհ. Ա. 2 15), այդպէս են վարւում այն մարդիկ, որոնք իրանց մտածութեամբ և իրանց կեանքով Քրիստոսի ուսման ոգուն հակառակ են, և թէ հայածանք են յարուցանում իրանց նախանձով, արհամարհանքով և կատակներով նոցա վերայ, որոնք վկանութիւն են Աստուածաշատութեամբ ապրել Յիսուս-Քրիստոսով» (Ժիմ. Ա. 2 15): Ալդ փորձանքներին օգնող է հանդիսանում և մեր փրկութեան հինաւուց թշնամին-սատանան, որը մարդուս համար աւելի վտանգաւոր կ'համարուի այն դէսպում, նայերավ, թէ նա իւր որոգայթների մէջ որքան ուժեղ է և որքան հմուտ: Ինչպէս այս աշխարհի իշխան (Յովհ. 12 18) նա բոլոր բաներով օգտում է, որոնց մօտենալ կարող է և որոնք էլ նորան օգնելու են մարդուս կործանելու համար չար մտադրութիւնները զլուխ բերելու ժամանակ:

Մարդուս ալդ դրութիւնը կոչում է հրապուրիչ դրութիւն: Ալդ դրութեան մէջ նա կարող է նորից Աստծուն դիմել, մանաւանդ՝ եթէ ինքը կ'նկատէ իւր շեղումը և կ'զղջաւ ու իրան օգնութեան կ'կանչէ Աստուածալին չնորհքը, փորձանքների հետ կռուելու համար: Իսկ եթէ նա, ընդհակառակն, իւր ուշադրութիւնը կ'դարձնէ միայն զանազան փորձանքների վերալ և սխալ զաղափար կ'կազմէ, թէ՝ գոքա իրան ոչ մի վիսա չեն կարող տալ, այն ժամանակն որուած մէջ բուն զրած մեղանչական հակումները, որոնք ալդ փորձանքներով ամրապնդուած են և վառուած, կարող են աւելի ուժ ձեռք բերել, հետն էլ նորա մէջ բնակուած հոգու զօրութիւնը հանգցնել, թուլացնել և աստիճանաբար նորան մարդուց զուրս հանել: Ալդպիսով՝ մեղանչական զանազան հրապորները կարող են մարդուս հոգին թուլացնել և ակարացնել: Ալդ դրութեան մէջ մարդուս իւր վտանգը հասկանում է, որ չի կարող բարութիւն անել և չարին գէմ կենալ, ցանկանում է և ձգուում ալդ դրութիւնից ազատուիլ, միայն դրա համար ոչ բաւականին հոգերոր ուժ ունի և ոչ յուս Աստծու ամենազօր օգնութեան վերալ, թէ և, իւր զօրեղ աշխատութեամբ և անկեղծ ցանկութեամբ, նա միշտ կարող է ալդ դըրութեանն հասնել, եթէ Աստուածալին չնորհքի օգնութեանը զիմէ:

Երբ մարդս ուշադրութիւն չի գարձնում իւր մեղանչական զանազան հրապորների վերալ, որոնք նորան հոգեպէս նուլացնում են և ակարացնում բարի գործ անելու և փորձանքները լաղթանարելու ձգտման մէջ և չի աշխատում ալդպիսի դրութիւնից դուրս դալ և Աստուածալին չնորհքի օգնութիւնը հայցել, այն ժամանակ՝ նորա մարմինը տիրում է իւր հոգուն և հոգեկան տկարութիւնն էլ արատաւոր գրութեան փոխարկում, որից մարդս դժուար կարող է ազատուիլ և ասաքինութեան ճշմարիտ ճանապարհի վերալ կանգնել:

Մոլութիւն կոչում է այն դրութիւնը, որը մարդուն ստիպում է մեղք գործել և դորանով նորա արժանապատւութիւնը աշխարհիս երեսին ստորացնել, օրինակ—արբեցողութիւնը, զոգութիւնը և անառակութիւնը: Խկանգիս ասած՝ մոլութիւն պէտք է կոչուի ամեն մի մեղք, որը մարդուն կարող է այնպէս տիրել, որ նա նորա համար վաճառուած ստրուկ համարուի (Հռովմ. 7 15, 17):

ԱՍՏԾՈՒ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ:

Աստծու Խօսքը և Քրիստոնէական եկեղեցու պատմութիւնը պարզ ցուց են տալիս, որ ինչքան մարդս բարուալիս շատ ընկած լինի,

ամենալինիւ՝ նա կարող է կրկին Աստծուն գիմել և Աստուածակին չնորհքի օդնութիւնը խնդրել, որը մեզ տալիս է կեանքի և բարեպաշտութեան վերաբերեալ Աստուածակին զօրութիւնը (Պետր. Բ. 1 ց): Հին-Ռւխտի մէջ ես ինքն՝ Աստուած՝ Եղեկիւ մարգարէի բերանով ասաց—«մեղաւորի մահը չեմ կամենում, որպէս զի նա իւր ճանապարհց իւտ գառնալ և ապրի» (ՅՅ-11): Նոր-Ռւխտի մէջ էլ Յիսուս-Քրիստոսը ասում է—«Իմ Հօր կամքը չէ, եթէ այս փոքրներից մէկն ու մէկը կորչի» (Մատթ. 18-14): «Չիմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին» (Մատթ. 9-13): Ուստի՝ ինչքան ո՞ր մեր մեղքերը Աստծու առաջ մած լինին, այնու ամենալինիւ՝ մենք երբէք չ'պէտք է մեր փրկութեան մէջ լուսահատուինք, այլ պարտաւոր ենք հասկանալ և զջալ մեր մեղքերը և ապա հաստատուն հաւատով և լուսով Աստծուն զիմել, ազօթ քով խնդրել, որ նա մեղութ և միջոցներ տայ՝ բարուապէս ուղղուելու համար: Իրեւ ամենաբարի և սիրող Հայր՝ Իրան դիմող ոչ մի մեղաւորի չի մերժում: Ընդհակառակն, Նա համբերութեամբ սպասում է մեր զարձին, և զանազան ճանապարհներով ու եղանակներով մեզ իւր մօտ կանչում և ուրախութեամբ ամեն մի անկեղծ սրտով զջացող մեղաւորի ընդունում: Յիսուս-Քրիստոսի առակի համաձայն՝ երկնքի Հայրը, Իրան դարձող մեղաւորին տեսնելով, նորա առաջն է զնում և մինչև որ վերջինս Նորան իւր «մեղան», կամ «ընդունիր ինձ-ոն» է արտասանում, Նա ուրախութեամբ նորան զրկում է և կրկին անդամ ամեն բարիք տալիս, որոնցից նա սկզբումն զրկուել էր (Ղուկ. 15-11-24): Սորան կարելի է աւելացնել և՛ Խաչի վերայ զջացող աւազակի օրինակը:

Իւր երկրախին կեանքում Յիսուս-Քրիստոսը հաւատով Իրան դիմողներից ոչ ոքի չէր մերժում:—Ներում էր մեղքերը և բժշկում բոլոր հիւանդութիւնները: Իւր համբառնալուց իւտով էլ՝ ոչ ոքի առանց Իւր շնորհքի և զթութեան չ'թողեց: Նա իւր ս. եկեղեցու միջոցով բոլորին հրափրում է ապաշխարել: անկեղծ սրտով մեղքնը զջացողներին թոգութիւն է տալիս և ապա մեզ նորա հետ մրացնում Հաղորդութեան խորհրդով, Որի մասին Նա մինչեւ անդամ մեզ պարզ արտասանեց—«Ու իմ մարմինը կ'ուտէ և իմ արիւնը կ'իմէ, Նա իմ մէջ կ'բնակուի և Ես նորա մէջ» (Յովհ. 6-57): «Եթէ չ'ուտէք մարգու Որդու Մարմինը և չ'խմէք նորա Արիւնը, լաւիսենական կեանք չէք ունենալ» (-54):

ՔՐԻՍՏՈՆԷՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԼԽԱԽՈՐ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ:

Քրիստոնէի բոլոր պարտականութիւնները կենդրոնանում են այս երեք պահանջի մէջ— 1) սիրլ Աստծոն, 2) սիրել իւր անձը և 3) սիրել մերձաւորներին: Օրէնսդէտի հարցին, թէ՝ « որ օրէնքն է մեծ», Յիսուս-Քրիստոսը պատասխանեց—« Սիրիր քո Տէր - Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր հոգով և քո բոլոր մտքով, սա է մեծ և առաջին պատուիրանը»: «Երկրորդն էլ սորա նման է—» սիրիր քո ընկերոջը, ինչպէս քո անձը»: «Այս երկու պատուիրանից են կախուած բոլոր օրէնքները և մարգարէները» (Մատթ. 22-26-40): Իւր անձը սիրելու մասին ալստեղ առանձին չէ լիշտում, միայն թէ դաքնութիւնից արդէն լալոնի է, որը և, բնականաբար՝ ծագելով, մերձաւորներին սիրելու իրբև չափ է համարւում: Աստծուն սիրելը Յիսուս-Քրիստոսը ամենաառաջին և զլիսաւոր պարտականութիւնն է ճանաչում: Ալդ, 'ի հարկէ, ալզպէս էլ պէտք է լինի, որպէնքնետե՛ նախ, որ այդ սիրոյ առարկան—Աստուածը—վսիմ, և ոչ մի բանի հետ չ'համեմատող, էակ է, և, երկրորդ, առաջ Աստուած մեղ այնպէս սիրեց, որ իւր Միածին Որդուն մեր փրկութեան համար չ'խընալից: Ուստի և՝ Յիսուս-Քրիստոսը ասում է—« Ով կ'սիրէ իւր հօրը կամ մօրը ինձանից աւելի, նա ինձ արժանի չէ, և ով կ'սիրէ իւր որդուն կամ աղջկանը ինձանից աւելի, նա ինձ արժանի չէ» (Մատթ. 10-31): Աստծուն սիրելը՝ իւր անձը և մերձաւորներին սիրելու պարտականութիւնների հիմքն է կաղմում, որպէնքնետե՛ իրան և մերձաւորներին սիրելը պէտք է լինի միայն Աստծու համար: Մերձաւորներին սիրելը՝ Աստծու հետ ունեցած մեր սէրը աւելի է պարզում, լրացնում և ապացուցանում: ՀԴորանով կ'ճանաչեն բոլորը, որ դուք իմ աշակերտներն էք, ասում է Յիսուս-Քրիստոսը, «Եթէ միմեանց կ'սիրէք» (Յովհ. 13-35): Յովհաննէս առաքեալը զրում է—« Եթէ մէկը ասէ, թէ՝ ևս սիրում եմ Աստծուն, բայց եղբօրս ասում, նո սրտախօս է, որովհետե՛ ով իւր եղբօրը չի սիրում, որին տեսնում է —, ինչպէս կարող է սիրել Աստծուն, Որին չի տեսնում: Եւ մենք նորանից (Յիսուս Քրիստոսից) ալսպիսի պատուիրան ունինք, թէ նա, որ Աստծուն սիրում է, պէտք է սիրէ և՛ իւր եղբօրը» (Յովհ. Ա. 4-20-21):

ԱՍՏԾՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ, ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Աստծուն սիրելու ընդհանուր պարտականութիւնից այն է առաջ զալիս, որ մենք պարտաւոր ենք Աստծուն ճանաչել: Ամենից

առաջ և ամենից շատ պէտք է Աստծուն սիրենք, Սիախն մեր մէջ ալսպիսի սէր դաստիարակելու և զարգացնելու համար պէտք է աւելի պարզ գաղափար կազմենք մեր սիրելի Եակի մասին: Որքան աւելի պարզ և կենդանի կերպով մենք Նորան պատկերացնենք, այնքան աւելի շատ կ'գտնենք Նորա մէջ վսեմ յատկութիւններ և կատարելազործութիւններ՝ թէ Նորան սիրելու և թէ Նորան ձգտելու համար: Այդ պատճառով՝ մեր առաջին և զլիսաւոր պարտականութիւնը, որ Աստծուն սիրելուց է բղխում, Նորան ճանաչելու պարտականութեան մէջ է գտնուում: Առանց աստուածդիտութեան մենք կանոնաւոր կերպով չենք կարող ճանաչել ոչ մեղ և ոչ էլ մեր մերձաւորներին, իսկ պարտականութիւններն էլ կ'մընան առանց կատարելու: Այդ պարտականութիւնը ինքն Աստուած Հին-Ռւսատի օրէնքի մէջ առաջին օրէնքն է համարում—« Ես եմ քո Տէր-Աստուածը»: Այդ ցուց է տալիս և՛ Ինքը—Փրկիչը, իրբե զլիսաւոր և հիմնական պարտականութիւն, ասելով—« Աս է յաւիտենական կեանքը, որ Քեզ միախն ճանաչեն ճշմարիտ Աստուած, և՛ Յիսուս-Քրիստոսին, Որին Գուն ուղարկեցիր» (Յուկ. 17-3): Ճշմարիտ աստուածդիտութիւնը՝ բնականաբար՝ պահանջում է և՛ աստուածպաշտութիւն: Որքան աւելի կատարեալ լինի մեր աստուածդիտութիւնը, այնքան աւելի կատարեալ կ'լինի մեր սէրը և աւելի անկեղծ մեր աստուածպաշտութիւնը: Ինքը Տէրը Իւր օրէնքի մէջ աստուածդիտութեան պարտականութիւնը սերտ կերպով կապում է աստուածպաշտութեան հետ, ասելով—« Ես եմ քո Տէր Աստուածը, բայց Ինձանից թող քեզ համար ուրիշ աստուածներ չ'լինին»:

ՆԵՐՔԻՆ ԵԽ ԱՐՏԱՔԻՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ:

Աստուածպաշտութեանը վերաբերում են ինչպէս մեր հոգու ներքին դրութիւնները, այնպէս և՛ խօսքերով ու դորձերով դոցա արտապատելու միջոցները, որոնք մեր ամբողջ կեանքն Աստծուն փառարանելու ճանապարհի վերա են դնում: Այսպէս ուրեմն աստուածպաշտութիւնը լինումէ ներքին և արտաքին: Մեր ներքին կեանքը և դորձունէութիւնը ցոլանում են արտաքին, մարմնաւոր կեանքի մէջ, որովհետեւ հոգին և մարմինը միմեանց հետ սերտ կերպով են կապուած: Այդ պատճառով՝ ով անկեղծ հոգով յարգում է Աստծուն, նաև նոյնը կ'անէ և՛ արտաքուստ, «արտի աւելցուից է խօսում Նորա բերանը» (Պուկ. 6⁴⁵, Մատթ. 12-34): Միախն արտաքին աստուածպաշտութիւնը՝ առանց ներքին աստուածպաշտութեան՝ եթէ նա

լինում է, Աստծուն անընդունելի է: «Այս ժողովուրդը Ինձ իւր բերանով է մօտենում և շրթունքներով պատւում: Նոցա սիրու-Ինձանից հնուու է, զուր են նոքա Ինձ պատւում» (Յու. 29¹³, Համե-մատ, Մատթ. 15⁸⁻⁹):

ՆԵՐՔԻՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Աստծու խօսքը առաքինութեան երեք զլիսաւոր տեսակ է ցոյց տալիս մեղ, որոնք ներքին աստուածպաշտութեանն են վերաբերում և ամբողջ քրիստոնէական կեանքի էութիւնը և հիմքը կաղ-մում: այդ տեսակներն են—հաւատ, լուս և սէր: «Ուստի՝ ալժմ կ'մը-նալ», ասում է Առաքեալը, «հաւատ, լուս սէր—այս երեքը» (Կորնթ. Ա. 13¹³): Այսպէս ուրեմն՝ Աստծուն ամեն մի մօտեցող ամենից առաջ պէտք է—1) Նորան հաւատաց, այսինքն՝ հաստատապէս ընդունէ Նորա գոլութիւնը, յատկութիւնները և գործողութիւնները և ամ-բողջ սրտով ըմբռնէ մարդկացին սեռի փրկութեան համար լայտ-նած Նորա խօսքը: « Առանց հաւատի անկարելի է Աստծուն հա-ճուրանալ» (Եբր. 11⁶):

2). —Պէտք է հաւատի համաձայն Աստծու առաջ ման զալ-ալսինքն՝ Աստծուն մտաբերել և ամեն բանում հեռատեսութեամբ վարուիլ, հասկանալով, որ Աստծուած ոչ թէ միախն զործերն է տես-նում, ալ և մեր ամենազաղտնի խորհուրդները: Մեզանից ամեն մէկը քիչ մեղք կ'գործէ, եթէ միշտ մտաբերէ, որ Աստծուած Ամենազէտ է և Ամենուրեք: Ենովքը որովհետև Աստծու առաջ ալպէս-էր ման զալիս, ուստի և մեծ փառքի արժանացաւ—կենդանի կեր-պով երկիրից վերացաւ (Ծննդ. 5²): 3). —Յուր դնել Աստ-ծու վերալ, այսինքն՝ հաստատապէս հասկանալ, որ Աստծուած մեր մասին հոգում է, մեղ զէպի լաւն է տանում և խօստացած երջան-կութիւնը շնորհում: «Հաւատով արդարացած», ասում է Առաքեալը, «մենք պարձենում ենք Աստծուածին փառքի լուսով, իսկ լուսն էլ չի ամացնեցնում» (Հռովմ. 5^{1-2, 5}), և կետով դարձեալ աւելացնում է՝ «լուսով կ'աղաւատուինք»: Այդպիսի փրկարար լուսի հիմքը մեր Տէր Յիսուս-Քրիստոսն է (Յիմ. Ա. 1-1): Ուստի՝ Պետրոս Առաքեալը ասում է մեղ—«Կատարեալ կերպով լուս դրեք ձեզ վերաց հասնելու շնոր-քին»: Յիսուս-Քրիստոսի լայտուելու ժամանակը (Պետր. Ա. 1¹³):

Այդ պատճառով՝ 4)—մենք միշտ պէտք է աղօթքով դիմենք Աստծուն և Նորա օգնութիւնը ամեն մի բարի դործ սկսելու ժա-մանակ խնդրենք:

5). Պէտք է Աստծուն անկեղծ սրտով սիրենք, ինչպէս Ամենաբարի Սիրող Հայր, ուստի՝ 6) մենք միշտ պարտաւոր ենք լարգանքով դիմել և երկիւղ ունենալ Նորանից, որպէս զի մեր անվագիւլ վարժունքով Նորան չ'բարկացնենք և Նորա հալրական սիրուց էլ չ'զրկուինք. 7)—հնազանդուիլ, ալախնքն՝ միշտ պատրաստ լինել անելու, ինչ որ Նա կ'հրամաէ, և երբէք չ'տրանջալ, երբ Նա մեղ համար այն չի անել, ինչ որ մենք կ'ցանկանալինք. 8) —երկրպագութիւն տալ Նորան, իբրև Ամենավսեմ Էշկի. 9)—փառաբանել իրեւ Ամենակատարեալի, և 10)—գոհութիւն մատուցանել իբրև Արարչի, Նախախամողի և Փրկչի:

Սկզ բոլոր պարտականութիւնները՝ բնականաբար՝ ծագում են այն զաղափարից, ինչպիսի զաղափար որ մենք ունինք Աստծու և Նորա մեզ հետ ունեցած լարաբերութեան մասին:

ՆԵՐԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱԿԱ-
ՌԱԿ ՄԵՂՔԻՑ:

Ներքին Աստուածպաշտութեան պարտականութիւնների հա-
կառակ են հետեւալ մեղքերը:

1) Անաստուածութիւնը, երբ մարդիկ, որոնց Սաղմոսերզուն՝ շատ ճիշտ կերպով՝ անմիտներ է անուանում, ասում են իրանց սրտում, թէ՝ «Աստուած չ'կայ» (Սալմ. 13₁) *), Դոցա նման են իրանց անմտութեամբ և՛ նոքա, որոնք ասում են, թէ՝ Աստուած աշխարհը ստեղծելով՝ նորան իւր նախախնամութիւնը չի ցոլց տալիս (աս-
տուածեանները**—դէխտները), որովհետեւ թէ սոքա և թէ միւսերը Ամենաբարի Աստծուն մերժում են—մի քանիսները ասելով, թէ՝ Աստուած չ'կայ, իսկ միւսերն էլ պնդելով, թէ՝ Աստուած բարի չէ,

2). Բազմաստուածութիւնը, երբ մի ճշմարիտ Աստծու փոխա-
նակ շատ աստուածութիւններ են ընդունում, ինչպէս՝ օր. հեթա-
նոսները:

3) Հերետիկոսութիւնը, երբ մարդկա ճշմարիտ հաւատի ուսմանը զիտակարար և ինքնակամ կերպով հակառակ կարծիքներ են խառ-

*. Առել, թէ՝ Աստուած չ'կայ, այդ կ'նշանակէ՞ անմիտ հանդիսանալ, որովհետեւ անաստուածութիւնը մեր գիտակցութեան մէջ մեծ հակասութիւն է մտցնում և մեր բանականութիւնն էլ նորանից պատառելու ոչ մի ելք չի թող-
նում: Այդպիսի եղբակացութեան ենք հանում և այն ժամանակ, երբ մենք աշխարհին, նորա ծագման, նպատակի և կոչման մասին ենք չափ ու ձե անում:—

***) «Աստուածեանց» վարդապետութիւնը քարոզում է—ընդունել Գերա-
պոյն Էշկին, առանց հաւատալու Աստուածային յայտնութեանը:

Նում և լամառութեամբ նոցա պաշտպանում, իբրև ճշմարիտ կարծիքներ, որպիսիք են՝ Արիոսի, Մակեղոնի և Նեստորի հերե-
տիկոսութիւնները:

4) Աղանդը, ալսինքն, ճշմարիտ քրիստոնէական հաւատից չե-
ղուելը, օրինակ—Թոնդրակեցիք և ուրիշները:

5) Աստծուածուրացութիւնը, երբ ճշմարիտ հաւատից հրաժարւում են՝ կամ մարդկալին երկիւղից և կամ աշխարհալին չահերից դրդուած: Աղպիսի մեղք գործել են քրիստոնեաներից մի քանիսը, որոնք սաստիկ հալածանքի ենթարկուեցան հրէաների և հեթանոսների կողմից:

6) Յուսահատութիւնը, երբ բոլորովին լուսը կտրում են Աստ-
ծուց չնորհք և փրկութիւն ստանալուց. դորան լաւ օրինակ է հանդիսանում Յուղա մատնիչը և առհասարակ բոլոր ինքնասպան-
ները:

7). Հմայութիւնը, երբ՝ Աստծու զօրութիւնը չ'ընդունելով, հա-
ւատում են—մեծ մատամբ—չար ողիների չար զօրութիւններին և
աշխատում նոցանով զործեր կատարել. զորան պէտք է վերագրել
և՛ ներկալ ժամանակիս սպիրիտական *) ուսումը:

8.) Սնոտիապաշտութիւնը, երբ մի որևէ է սովորական առարկակի
հաւատ են ընծալում, որպէս թէ նա աստուածալին զօրութիւն ու-
նի, ուստի և՛ նորա վերալ լուս են զնում և նորանից էլ վախե-
նում, օր. հաւատում են հին զբքին և կարծում, թէ՝ նորանով մի-
ան կարելի է փրկութիւն և՛ թէ նորով, որը իւր մէջ պարունա-
կում է միենոյն ուսումը և միենոյն աստուածպաշտութիւնը: Սորան
են վերաբերում—միմեանց հանապարհին պատահելու զէպքերը, բազ-
դաւոր և անբազդ օրերի և ամիսների աղղեցութիւնը, զանազան
դուշակութիւններին հաւատալը, և ալն:

9). Արարութիւն Աշարջից աւսի սիրելը, երբ մարդս աւելի սէր է
ցոլց տալիս աշխարհիս առարկաներին և մոռանում իւր Աստծուն:
Աղպիս էր վարւում աւետարանական հարուստը, երբ իւր սեղանից
կերակրում էր չներին, իսկ ուշք չէր դարձնում սոված Ղաղարոսին
(Ղուկ 16₂₀₋₂₁):

10). Մարզահամութիւնը, երբ մարդկա աշխարհալին զանազան
հայւներից դրդուած, աշխատում են միմեանց հածոյ լինել, մոռա-
նալով իրանց Աստծուն: Մարդահաններին լանդիմանելով՝ Պօղոս

*. Հոգևոր միստիքական, կամ գաղտնախորհուրդների վարդապետութիւն հո-
գու և կեանքի մասին:

առաքեալն ասում է — «եթէ ես մինչեւ այժմ աշխատէի մարդոց հաճախանալ, Քրիստոսի ծառան չէի լինիլ» (Դազ. 1₁₀):

11). Միայն մարդոց վերայ յոյս դնելը, երբ մէկը իւր, կամ ուրիշ մարդոց, ընդունակութիւնների և ուժերի վերակ է լուս դնում, մերժելով Աստծու զթութիւնը և օգնութիւնը: Սորա մասին ու, Գիրքը հետեւալն է ասում — «անիծուած լինի այն մարդը, որ մարդուն կ'ապաւինի, մարմինը իւր համար բազուկ կ'ալինէ և իւր սիրտն էլ Տիրոջից կ'հեռացնէ» (Երեմ. 17₅).

ԱՐՏԱՔԻՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Արտաքին Աստուածպաշտութիւնը ներքին Աստուածպաշտութեան արտախալութիւնն է թէ խօսքով, և թէ ուրիշ արտաքին նըշաններով և գործողութիւններով: Դոցա վերաբերում են՝ զիմաւորապէս, հետեւալները — հաւատի դաւանութիւնը, երդումը, ուխտագրութիւնները, հասարական Աստուածպաշտութեան ժամանակ մասնակիցները տաճարին, նորա սրբութիւններին և տօններին յարդանք տալը և պատ (պահը) պահելը:

Հաւատի Դաւանութիւնը: «Դաւանելո կ'նշանակէ մի պարզ վկայութիւն տալ և արտախալութիւնը հաւատի խսկական էութիւնը մինչեւ անգամ այն բոլոր զէքքերում, երբ այդ Աստծու փառքը կ'պահանջէ, արտաքին բոլոր բարիքը և, մինչեւ անգամ կեանքը, զոհաբերութեան մեղանի վերակ դնելով: Հաւատի մէջ քրիստոնեան իւր անդրդութիւնը պէտք է ցոլց տաէ աւելի այն ժամանակ, երբ քրիստոնէութեան թշնամինների կողմից լարձակումն կ'լինի: Քրիստոսի հաւատի զէմ ալդպիսի լարձակումներ և հալածանք շատ եղանք քրիստոնէութեան առաջին դարերումն, երբ աւելի շատ կային առվկաններ և նահատակներ: Բայց որովհետև հաւատի զէմ լարձակումներ միշտ կարող են պատահիլ, եթէ ոչ հրով և սրով, գտնեան խօսքերով և անաստուած կեանքով, այդ պատճառով՝ մարդու պէտք է իւր հաւատը ցոլց տաէ ոչ թէ միայն խօսքով, այլ և իւր ամբողջ կեանքով: Մեր ժամանակ Քրիստոսի խսկական հաւատացողները շատ պէտք է կոիւ մղեն լարձակման վերջին տեսակի զէմ: Այդ պարտականութիւնը կատարողին Յիսուս. Քրիստոսը երկնքում ամենամեծ պարգեն է խոստանում, և, ընդհակառակին, չկատարողին, որը իրբեք դաւաճան է համարում, սպանուալիք է տալիս ուրանալու և եկեղեցուց հեռացնելու (Մատթ. 10₃₂₋₃₃):

Դաւանութեան մի տեսակն է համարում և երդումն, որի մէջ

երդւողը, Աստծուն իրբն ձշմարտութեան վկայ ընդունելով, իւր հաւատան է խոստովանում, որ Նա, իրբն Ամենազէտ, Արդարադատ, Ամենակարող և Ամենասառւրբ, խարեւալութիւն չի սիրում և խիստ էլ պատժում է մեղաւորին: Այդ աւելի պահանջւում է հասարակական զործերի մէջ ձշմարտութիւնը պահպանելու և հաստատելու նըստակով:

Ուխտակրութիւններ: Ուխտադրութիւնները կամաւոր խոստումներ են, որոնք Աստծուն մատուցանւում են կամ մի որ և է գործ կատարելով, կամ ընծակ բերելով, մէկ կողմից, մարդուն հոգեոր-բարսկական բարձրութեան հասցնելու, իսկ, միւս կողմից, Աստծու անունը փաստարելու նպատակով: Աղղափիսի ուխտադրութիւնների շարքը մտնում են հետեւալները — 1) սոհնմանածից աւելի պատ պահելը, 2) կարտղութեան մի մասի բաժանելը, 3) սուրբ, մանաւանդ ազգակին նուիրական, տեղեր գնալը, և 4) անհնական օգուտները թողնելու և ազգակին հասարակական շահերին աղնուութեամբ միանդամակն նուիրուելու նպատակով կուսակրօն դառնալը, Որովհետեւ դոցա նըստակակը վերմ է, այդ պատճառով աղղափիսի անձինք Աստծուն աւելի հաճելի են համարում: Նորն իսկ ու Գիրքը ալդ տեսակ ուխտադրութիւնները զովում է և քաջալերում (Ղուկ. 19₈₋₉), բորգորելով միշտ աղղափիսի զործեր կատարել (Մատթ. 19₁₂₋₂₁ Կորնթ. 7_{1-7,8}): Այդ տեսակները ուխտադրութիւններ կատարողները նկատում են, որ իրանց արածները Աստծուն հաճելի են, որովհետեւ Աստուած նոցա իւր առանձին ողորմածութեան նշաններն է շնորհել, որոնք են — կորովամտութիւն, իմաստութիւն, հրաշագիտութիւն և ալլ լատկութիւններ: Աստծուն առած խոստումն անպատճառ պէտք է կատարել: — Երբ որ քո Տէր Աստծուն ուխտ են անում, առանց ուշացնելու կատարիր, որովհետեւ քո Տէր-Աստուածը անպատճառ այն քեզանից կ'պահանջէ, և զուն էլ մեղքի աւել կ'պառնառ...: Բայց եթէ ուխտ անել չես կամենում, այն ժամանակ ալդ քեզ մեղք չի համարուիր» (Երկրորդ Օրին. — 23₂₁₋₂₂): Այդ պարտականութիւնը մեղանից ամեն մէկի վերակ է զրում ամս կամ այն խոստումն անելու ժամանակ աւելի զգով և հեռանկատ լինելու նպատակով, որպէս զի վերջը զորանով Աստծուն փորձող մարդ չ'համարուինք:

ԱՐՏԱՔԻՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՌՈՒԿ ԿԱՏԱՐԱԾ ՄԵՂ. ՔԵՐ:

Արտաքին Աստուածպաշտութեան պարտականութիւններին հակառակ են հետեւալ մեղքերը:

1). Աստծուն որանալը, երբ մէկը՝ մարդկալին երկիւղից և կամ աշխարհալին շահերից դրդուած՝ իւր ձշմարիտ հաւատից հրաժարում է։

2). Աստծուն հայոյելը, կամ նորա հակառակ անպատկառ դործեր անելը։

3). Կեղծ երդումն, երբ դորանով հաստատում են ալն, ինչ որ չի եղել։

4). Երդ նան դէմ յանցանք դործելը, երբ ձշմարիտ և օրինաւոր երդում չեն անում։

5). Աստծու անունը կամ երդումը թհսեւամութեամբ սովորական խօսակցութիւնների մէջ դործածելը, և՝

6). Աստծուն տուած խոտումների դրժումն։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հասարակական Աստուածպաշտութեան մէջ մասնակցելու պարտականութիւնը երեւում է — 1) նորանից, որ ինքն՝ Աստուած՝ դորան Հին-Ռւխտի մէջ սահմանեց և պարզ կերպով մարդկերանցից ալդ կատարել պահանջեց (Ծննդ. 2₃ . Ել. 20₉₋₁₁. Երկր. 26₁₆), Նոր-Ռւխտի մէջ Յիսուս-Քրիստոսը, իւր եկեղեցին հիմնելով, Աստուած-պաշտութեան բոլոր զիմաւոր սրբազնագործութիւնները սահմանեց և առաքեալներին հրամակեց ալդ հաւատացածների մէջ իրազորել (Ղուկ. 22₁₉. Կորնթ. Ա. 11₂₃₋₂₉), խոստանալով միենան ժամանակ, որ ինքն այնտեղ կ'զանուի, «ուր երկու կամ երեք հոգի ժողովուած կ'լինին իւր անունով» (Մատթ. 18₂₀)։

2). Եկեղեցին մի հոգեոր մարմին է (Երբ. 1₂₂₋₂₃), որի զըլուին է Քրիստոս Ռւատի և ալդ մարմնի բոլոր անդամները, ինչ-պէս պատուիրում է Առաքեալը, պէտք է «ազօթեն, ինսդրեն, աղաւեն և գոհութիւն մատուցանեն բոլոր մարդոց համար» (Տիմ. Ա. 2₁₋₂): Ալստեղ բոլոր հաւատացողները Ա. Հաղորդութեան միջոցով ամենասերո կապով են միանում նոյն իսկ Յիսուս-Քրիստոսի հետ։

3). Ազօթողների աստուածպաշտական տրամադրութիւնը, արած դործերի սրբութիւնը, Աստծու Խօսքի բացատրութիւնը և եկեղեցու ծէսերը, որոնք պարզ կերպով պատկերացնում են մեզ մեր հաւատի ամբողջ էութիւնը — բոլորն էլ եկեղեցումն եղողներին դըրդում են փոխադարձ սիրով իրանց Աստծուն փառաբանել։

ԱՍՏԾՈՒ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՃԱՐ, ԽԾՉ, ԱԿԵՏԱՐԱՆ, ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՄԱՍՍՈՒՆՔ (ՆԵՒԱՐՆԵՐ):

Աստծու տաճարները լատկապէս նշանակուած են հասարակական Աստուածպաշտութեան համար (Մատթ. 21₁₂₋₁₃) — [Յիսուսը մըտաւ տաճարը և դուրս արեց բոլորին, «որոնք այնտեղ վաճառում էին և գնում կործանեց հատավաճառների սեղանները և աղանեվաճառների էլ աթոռները, և ասաց — զրուած է՝ որ իմ տունը պէտք է աղօթքի տուն կոչուի, իսկ դուք դորան աւազակների ալր դարձըրքիք] —, որը չատ մեծ նշանակութիւնը՝ բնականաբար՝ իւրաքանչիւր քրիստոնեալ անձնաւորութեան պարտաւորեցնում է առանձին յարգանք և մէր ցոյց տալ նոցաւ Ակդամիսի զգացմոնք ունենալով՝ մենք՝ բնականաբար, պէտք է ամենամեծ սիրով և ուրախութեամբ այցելենք Աստծու տաճարները, մանաւանդ ընդհանուր աղօթքների և սրբազնագործութիւնների համար որոշած ժամերին՝ աշխատելով առաջուած սուրբը մարդոց բարեպաշտութեանը նմանուիլ (Մագմ. 121₁₋₄ . 83₂₋₃₋₆₋₁₁ . 26₄₋₁₃), Բացի դորանից՝ մենք պէտք է տաճարների բարեկաղմութեանը նպաստենք և մեր զոհաբերութիւններով, որպէս զի կարողանանք նոցաւ վայելուչ կերպով զարգարել և կանոնաւորել որը մնացանից ամեն մէկին կարող է աղնիւ լարգանք ներշնչել և վսեմ ու երկնալին զգացմոնք արժատացնել։ Աստծու տաճարը ալդպէս սիրելով՝ մենք կարող ենք ամենագեղեցիկ կերպով զարգարել և մեր հոգու իսկական տաճարը, որը պէտք է Աստծու բնակարան զարձնենք (Պետր. Ա. 2₇₋₈. Կորնթ. Ա. 6₁₉. Եփ. 2₂₁₋₂₂)։

Աստծու տաճարը լարգելով՝ պէտք է յարգենք և տաճարի բոլոր սրբութիւնները, որոնք են — Տէրունական ս. Խաչը, ս. Պատկերները, ս. Աւետարանը և ս. Մասունքը (Նշխարները)։ Ակդ սրբութիւնները վաղուց են կազմում քրիստոնէական տաճարի անհրաժեշտ սեղնականութիւնները և, մէկ կողմից, մեր հաւատի իրական արտավալութեան նշան համարում, իսկ, միւս կողմից, մեր սրտերումն էլ զրուում, ծնեցնում և պահպանում աղնիւ տրամադրութիւն և զգացմունքներ, մեր միտքը վեր սլացնելով թանձրացեալից զէպի վսեմը, Նախատիպը, երևելիից զէպի աներկութը, դաւնալով և մեղ համար իրրե Աստուածալին շնորհքի և օգնութեան դործիք։

Ա). Տերունական ս. Խաչը, իրբե սեր փրկութեան նշան և գործիք։

քրիստոնէութեան առաջին օրերից սկսած լարգւում է, այն էլ նորա վերալ խաչուած և չարչարուած Փրկչի պատճառով:

Բ). Ա. Աւետարանը, իւր մէջ պարունակելով Միաձին Որդու ձեռքով կատարուած մեր փրկութեան ուրախալի աւետիքը՝ միշտ լարգանքի առարկալ է համարւում հաւատացածների համար: Նա իրմով իշխեցնում է նոյն իսկ մեր Տէր-Յիսուս Քրիստոսին, ուստի և՛ հաւատացածները նորա վերալ նախում են մեծ հաւատով և իրանց էլ լարգանքը ցոյց են տալիս զանազան արտաքին նշաններով և գործողութիւններով:

Գ). Ա. Պատկերների զործածութիւնը և թէ նոցա լարգանք ցոյց տուը քրիստոնէական եկեղեցումն ոկտում է նոյն իսկ քրիստոնէութեան առաջին շրջանից: Հին աւանդութիւնը վկալում է, որ Խնաքը՝ մեր Տէր Յիսուս-Քրիստոսը՝ տուեց իւր ս. Գէմքի անձնապորձ պատկերը նկարչին, որ Հայոց Արքար թագաւորի դեսպանների շարքումն էր դժուում: Եկեղեցին ունի և՛ մի ուրիշ աւանդութիւն, որը հաստատում է, թէ Աստուածամօրն—Խւր Աստուածատին Մանկան հետ միասին—առաջին անգամ նկարեց Ա. Պուկաս Աւետարանիչը: Եւ երբ Նկարող-Աւետարանիչը ներկայացրեց իւր աշխատանքից երեք օրինակ, այն ժամանակ նա օրհնեց՝ ասելով—«Ինձանից Ծընուածի օրհնութիւնը և Խմը թմզ այս պատկերների հետ լինի»: Բ. և Գ. դարերումն էլ շատ կալին թէ Յիսուս-Քրիստոսի և թէ ուրիշ սրբերի նկարած պատկերներ: Չորրորդ գարից սկսած ս. Պատկերները արդէն ընդհանուր գործածութեան մէջ են մտնում քրիստոնէական եկեղեցումն: Ա. Պատկերների զործածութիւնը ինչքան բնական է, այնքան էլ անհրաժեշտ է և օգտաէտ: Երկրագին եկեղեցումն անշուշտ պէտք է լինի երկրագին կազմակերպութիւն, ալլագի՞՝ նորա մէջ ըոլորը մնզ համար անհամարալի և անմատչելի կ'լինէր: Ա. պատկերների միջացով մենք պարզ պատկերացնուու ենք մեր փրկութեան համար կազմած Աստուածալին տնտեսութեան ամբողջ էութիւնը: Կրօնագիս զարգացած մարդու լիշողութեան մէջ ս. պատկերները պարզ կերպով բաց են անուու այն ճշմարտութիւնները, որոնց նա քաղել է զրքերից, իսկ հասարակ անձնաւորութեան համար էլ զոքա նոյն իսկ զրքերի տեղն են բռնում: Բացի զորանից՝ ս. պատկերները մարդու մէջ ծագեցնում են լարգական զգացմունք և բարեպաշտական ազնիւ մտքեր: Մեր մէջ աղնիւ մտքեր և զգացմունքները զրգուելով, զորանով ս. պատկերները մեզ ստիպում են նմանուիլ այն սրբերին, որոնք աղնտեղ նկարուած են, և թէ մեզ համար էլ ծառայում են բարեպաշտու-

թեան և առաքինութեան, իսկ ազգալիններն էլ—և՛ ազգալին վեհ գաղափարների իրեկ իսկական ուսումնարան:

Անձնասպանութեամբ մարզս իւր կամքով իրան կեանքին վերջ է դնում, որը կարող է երկու տեսակի լինիլ — 1) ուղղակի և կոպիտ անձնասպանութիւն, երբ մարզս բունի կերպով իւր անձը զրկում է մի որ և է մահաբեր գործիքով, կամ թէ ուրիշ միջոցներով և 2) անուղղակի և նուրբ, երբ մարզս աստիճանաբար իւր կեանքը կարձացնում է և վերջինիս զօրութիւնները ոչնչացնում, անմիտ կերպով անձնատուր լինելով հեշտասիրութեան, արբեցողութեան և ուրիշ շատ մոլութիւնների, որոնք քաէքալիչ կերպով են նորա վերայ ազգում: Բայց ինչ տեսակի էլ լինի անձնասպանութիւնը, ուղղակի թէ անուղղակի, նա ամենամեծ լանցանքն է, որը ոչ մի կերպ չի կարող արդարանալ: Նա լանցանք է թէ Աստծու, թէ մերձաւորների և թէ մեր առաջ: Աստծու հակառակ է —որովհետեւ, եթէ նա միախն կեանքի և մանու իրաւունք ունի, եթէ նա է ամեն տեսակ կեանքի ազբիւրը (Սաղմ. 35-10), եթէ նա ամեն լան իւր իշխանութեան տակ ունի և ամենի մասին էլ հոգում է —այն ժամանակ հասկանալի է, որ ինքնակամ անձնասպանը Աստուածաբին փառքին մին անպատւութիւն է հասցնում: Նորա կամքի դէմ անմիտ ապստամբութիւն լարուցանում և իրան

իւր անձի տէր համարում: Սորա հետ էլ իւր թերահաւատութիւնն է ցոյց աալիս թէ դէպի Աստուած և թէ դէպի նորա բարութիւնները և ամեն իմաստուն հոգատարութիւնը: Մերձաւորների էլ հակառակ է, որովհետեւ անձնասպանը իւր կամքով զրկում է օգտաւէտ անդամից այն հասարակութիւնը, որին նա պարտաւոր էր՝ ծառալել, օգնել, սիրել, չնորհակալութիւն անել և կանոնաւոր կերպով էլ նորա բարիքների համար իւր ոլմերը գործածել (Հռովմ. 12 համար Կորնթ. Ա. 12, 12-27): Բայցի զորանից՝ նա մեծ դակթակղութիւն է լարուցանում հասարակութեան մէջ, որ իւր կամքով ոտնատակ է տալիս և ոչնչացնում Աստծու պատուիրանը: Իւր անձի հակառակ է, որովհետեւ ինքնակամ կերպով հրաժարում է իւր կոչումից և գորանով իրան կործանում թէ ժամանակաւորապէս և թէ լաւիտեան (Յալտն. 21-8).

Անձնասպանութեան ընդհանուր պատճառն այն է, որ անձնասպանը երկրակինը և զգալականը շատ սիրող է, չափազանց ինքնասէր և Աստծուն էլ, իրեն մարդկակին սեռի Արարիչ նախախնամող, Փրկիչ, Դատաւոր և Պարզեատու՝ չ'հաւատացող, ձշմարիտ բարեգործ և բարեպաշտ մարդը, որ լիովին հաւատում է և լոր ունի Աստծու վերալ, երբէք արդպիսի յանցանք չի անել, կեանքի ինչպիսի ծանր հանգամանքների մէջ էլ որ եղած լինի: Անձնասպանութեան փորձն արդարացնելու նպատակով՝ սովորաբար՝ ասում են — «մենք կեանքի ոչ մի նպատակ չ'ունինք, մեզ և մերձաւորներին օդտաւէտ լինելու բոլոր միջոցներից զուրկ ենք. ճակատապիրը մեզ հալածում է և մենք չենք կարող կիանքի մէջ ոչ մի ուրախութիւն սպասել. չենք կարող տանել ոչ մեզ անպատուելու հարուածները. և ոչ էլ չար ճակատապրինը, որը մեզ առնից զրկել է և ոչինչ էլ չի խստանում, հայլին: Բայց եթէ լաւ քննենք արդ շարժառիթները, այն ժամանակ կտեսնենք, որ զոյց հիմքը կազմում են՝ լանցաւոր անձնասիրութիւնը, երկրակին զգալականութիւնը և կրօնիտ ու բարուականութեան անկումը: Ուստի և եկեղեցին առանց հիմքի չէ, որ արդ աեսակ մեղքը խիստ զատապարտութեան է ենթթարկում—նա թուլ չի տալիս նոյցա քրիստոնէական ծիսով թառղելու, որովհետեւ նոքա իրանց կապը նորա հետ կտրել են, ինքնակամ կերպով զրկուել են նորա փրկարար միջոցներից և չեն էլ կամեցել նորա մարդական միջամտութիւնը ընդունել Աստծու առաջ-

ՔՐԻՍՏՈՆԵՒ ՀԱՅԵԱՅՔՔ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԽԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Մարդուս արտաքին բարօրութիւնը, բացի մարմնական առողջութիւնից, կազմում են՝ երկրակին բարիքը և կեանքի լարմարութիւնը, հասարակական շահերը և տուաւելութիւնները, երկրակին փառքը և պատիւները, հարստութիւնը, և անբազութիւնը: Որովհետեւ նոքա մեր ժամանակաւոր կեանքին մը որոշ լարմարութիւն են տալիս և մեր վսիմ նպատակներին հասնելու գործում աջակցում, արդ պատճառով՝ Աստծուածալին Խօսքը մեզ բոլորովին չի արկելում, որ մենք աշխատենք դոցա ձեռք բերել և օդուիլ Ըսդհակառակը, նա նոցա Աստուածալին անպիսի զթութիւնների և բարերարութիւնների շարքն է դասում, որոնցով Աստծուած արդարներին օգնում է: Դաւիթ մարդարէն, արդար մարդուն պատկերացնելով, ասում է—«Նորա սերունդը երկրիս վերալ պէտք է զօրաւոր լինի, արդարների ցեղը պէտք է օրհնուի. Նորա տան մէջ առաստութիւն և հարստութիւն պէտք է լինի և նորա արդարութիւնն էլ լաւիտեան պէտք է մնալ» (Սալմ. 111-28), Երկրակին բարիք ձեռք բերելը անհրաժեշտ է նախ՝ մեզ համար՝ մեր կենսական անհրաժեշտ պիտույքները հոգալու, և բ) մեր մնաւորների համար, որոնց մենք պէտք է օգնենք (Եփ. 4-28): Սրբազն պատմութիւնը ցոյց է տալիս, որ Հին-Ռւիսի շատ արդարներ Աստծուն հաճու են եղել, չ'նայելով՝ որ արտաքին շատ բարիքներ են ունեցել:

Բայց որովհետեւ վերե վշած երկրակին բարիքը ինչքան անհրաժեշտ են մարդուս ժամանակաւոր կեանքի բարօրութեան համար, այնքան էլ կարող են և երբեմն վնաս հասցնել նորա բարուականութեանը և թէ լաւիտենական երանութիւնը ժառանգելուն, մանաւանդ, եթէ քրիստոնեան մոռանալ, որ ինքը ամենից առաջ պէտք է Աստծու թագաւորութիւնը և նորա արդարութիւնը որոնէ (Մատթ. 6-33), արդ պատճառով՝ մի հարց է ծագում, թէ՝ քրիստոնեան Բնչպիս պէտք է վերաբերուի արդ բարիքներին, որոնք նորա երկրակին բարօրութեան վլխաւոր տեսակներն են կազմում, որպէսզի նոքա, նորան օգուտ բերելով, նորա բարուականութեանը վնաս չ'տան և թէ՝ լաւիտենական փրկութեան և երանութեան հասնելուն էլ արգելը չ'դառնան:

Որպէսզի ժամանակաւոր բարիքը արգելք չդառնան լաւիտե-

հական բարիքը ժառանգելուն, դորա համար քրիստոնեան պէտք է հետեւալ կանոնները պահէ. 1) ժամանակաւոր բարիք ձեռք բերլով, նա նոցա չպէտք է իւր զործունէութեան նպատակը համարէ, այլ պարտաւոր է նոցա՝ Աստծուն փառաբանելու և իւր, կամ մերձաւորների փրկութեան հասնելու համար՝ իրեն միջոցները ընդունել: 2) Նա երկրալին ժամանակաւոր բարիքը այնքան պէտք է ձեռք բերէ, ինչքան որ իւր անհրաժեշտ պիտուքներին բաւականութիւն տալու համար հարկաւոր կ'լինի և ոչ աւելի: 3) Նոցա պէտք է ձեռք բերէ աղնիւ աշխատանքով, և ոչ թէ անօրէն միջոցներով (խորամանկութեամբ, խաբերայութեամբ և ամեն տեսակ անարդարութեամբ), որովհետեւ անարդարութեամբ ձեռք բերածը միշտ Աստծուն հակառակ է: 4) Եթէ Աստուած արտաքին բարիքը ներով օրնուում է քրիստոնէին, հապա նա պէտք է խելացի կերպով օգտուի նորանից թէ Աստծուն փառք տալու և թէ մերձաւորներին օգնելու զործում (Եբր. 13:16), հասկանալով, որ այդ բոլորը իւր սեպհականութիւն չեն—նոքա պատկանուում են Աստծուն, Որից քղիսում են «ամեն բարի տուրք և ամեն կատարեալ պարզե» (Յակ. 1:17): Հետեւապէս, նա երբէք չ'պէտք է շատ սրտով ձգտի և լուս դնէ նոցա վերալ, որովհետեւ նոքա փտում են և շուտով անցնում, այլ պարտաւոր է այն վեհմ բարիքը որոնել, որոնք երկրալին չեն (Մատթ. 6:19-23): Ամենից առաջ որոնելով Աստծու թագաւորութիւնը և նորա արդարութիւնը, նա պէտք է իրան սովորցնէ՝ իւր երկրալին ցանկութիւնները սահմանափակել և քչով բաւականալ — «Ինչու որ, ասում է առաքեալը, այս աշխաբարէ ոչինչ չ'բերինք, և լախճի է, որ այդ տեղից էլ չենք կարող տանել, ուստի՝ կերպ կուր և հանդերձ ունենալով՝ նոցանով կ'բաւականանաք» (Տիմ. Ա. 6:7-8):

Աստծու Խօսքը քրիստոնէին երբէք չի արդելում, կեանքի
ուրախ դէպքերի պատճառով, որոշ ժամանակ օգուտ քաղել և չըն-
չին արտաքին բաւականութիւններից, Խնքը Յիսուս-Քրիստոսը
մեզ՝ ուրախանալու և կեանքի բաւականութիւններ քաշելու հա-
մար՝ լաւ օրինակներ տուեց, Նա էր Գալիլիայի Կանա քաղաքի
հարսանիքում, ուր ջուրը զինի դարձրեց, երբ վերջինո վերջացել
էր, հիւր էր զնացել հրեաների գլխաւորների, հարուստ մաքսաւ-
որների և փարիսեցիների մօտ (Ղուկ. 5²⁹, 11³⁷, 14⁻¹, 9⁵⁻¹⁰). ըն-
դունուեցաւ Ղաղաքի ընտանիքի մէջ, որի հետ էլ ընթրիքին եղաւ
բորսո Սիմոնի տանը (Յով. 12¹⁻¹³), Նունը ցուց է տալիս և Նո-
րա անառակ որդու մասին տաճ առակը (Ղուկ. 15²²⁻²⁷). Սուրբ

առաքեալները ևս չէին արգելում ճշմարիտ բարիքներից և կեանքի ժաքուր բաւականութիւններից օգնւութիւն գաղել (Կող. 2¹⁶⁻²³, Տիմ. Ա. 4-⁴): Փորձն անզամ ցուց է տալիս, որ կեանքի բաւականութիւնները և ուրախութիւնները, մաքուր մտքով, աշխատանքից վետոյ հանգստանալու նպատակով—իբրև մեր մարմնաւոր և հոգնոր զօրութիւնների վերանորոգման և կազդուրման վակելուչ միջոցներ են համարւում. նախ նորա մեղ հարկադրում են սիրել և չնորհագալութիւն մատուցանել Աստծուն և ապա՝ մօտենալ մարդոց, պահպանելով և ամրապնդելով վերջիններիս մէջ եղած ընդհանուր կապը և ունեցած փոխադարձ սէրը:

Միան թէ քրիստոնեան, որ ախանալու և կեանքի բաւականութիւն քաղերու իրաւունքն ունենալով՝ երբէք չ'պէտք է զոցախը կեանքին նպատակն համարէ։ Ալդ տեսակ արաբերութիւնը շատ խիստ կերպով է զատապարտում Աւետարանական օրէնքով, ինչպէս ալդ երեսում է անմիտ հարստի առակից (Ղուկ. 12₁₆₋₂₁, համ. 21₃₂, Հռովմ. 13₁₂)։ Նա պէտք է նոցանից ամենամեծ զգուչութեամբ օգուտ քաղէ, պահպանելով բարոլական մաքրութիւն և չափաւորութիւն։

Իսկ այն, թէ քրիստոնեան ինչ բաւականութիւններից կարող է օգտուիլ—այդ մասին որոշ չի կարելի բան ասել, որովհետեւ ալդ սահմանափակուում է իւրաքանչիւր մարդու անհատական առանձնալատկութիւններով, հասակով, սեռով, զանազան զբաղմունքներով և զրութիւններով, և լին, մանաւանդ բարուական զարգացման և կատարելութեան աստիճանով։ Այդ պատճառով՝ ալդ բաւականութիւնները կարող են օգտաւէտ, հետեւալիս, և ներելի համարուիլ մի քանիսներին, իսկ վեսասակար և աններելի՝ ուրիշներին, բաւականութիւնները ընտրելիս ամեն մի քրիստոնեալ պէտք է Պօղոս առաքեալի հետեւալ խրտով հրահանդուիլ։ Ամեն բան ինձ համար օրինաւոր է, բայց չէ թէ ամեն բան շինողը (Կորնթ. Ա. 10₂₃), և Ամեն բան մաքուր է մաքուրների համար (Տիմ. 1-₁₅)։ Աստծու ամեն ստեղծածը բարի է, և մերժելու էլ բան չկար, եթէ որ չնորհակալութեամբ ընդունուի (Տիմ. Ա. 4-₄), այսինքն, բոլորը քրիստոնէին ներելի է, եթէ այդ թուլտութիւնը չնորհակալութեամբ է ընդունում և Աստծու փառքի համար զործ ածում, և եթէ դա էլ նորան չի տիրապետում և իւր ծառակ չի շինում— Բոլորը քրիստոնէին ներելի է, նախ՝ եթէ նորա մէջ օգուտ կալ—իրեն համելի հանգստութիւն և լրեն բարոյական կատարելութեան լաւ խրատ ու զաս, և բ) եթէ արդպիսի թուլտութիւնից

լետոյ նա մեծ սիրով, եռանդով և հեշտութեամբ կրկին իւր գործ ծերն է սկսում և կատարում: Առհասարակ՝ բաւականութիւններն ընտրելիս՝ քրիստոնեան պարտաւոր է ուշադրութիւն: դարձնել իւր ներքին զրութեան և արտաքին լարաբերութեան վերայ և խիստ պէտք է քննէ, թէ՝ որ բաւականութիւններն են բարերար ազգեցութիւն անում ինչպէս իւր, ախայէս և մերձաւորների վերայ և որոնք էլ կարող են վնասակար ինչի, որպէսզի նորանից մի քառնիսը կատարէ, իսկ միւսերից հեռանար:

ԱՐԻԱԽԹԻՒՆԸ ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃԱՄԱՆԱԿ:

Քրիստոնէական ուսման համաձայն՝ Աստուած մարդուն բաղդաւորութեան և երանութեան համար ստեղծեց: Ներկայ կեանքում նորան հասած թշուառութիւնները և անբազութիւնները մեր նախանձողների և, մասնաւորապէս էլ, ամեն մարդու մեղքի մէջ ընկնելուց են առաջ եկել: Միայն Ամենաբարի Աստուածը, որ բոլորին փրկութիւն է կամենում, այդ թշուառութիւնները և դժբաղզութիւնները սպականուած Աղամի բոլոր սերնդի համար իրբե բժշկական միջոցները է դարձնում և ուղարկում կամ մեղաւորներին և շեղուածներին» խելացի դարձնելու և «ուղղելու», կամ թէ՝ «արդարների» հաւատը և առաքինութիւնը շաւելի ամրապնդելու համար»— (Ընդհ. Ներս. Շնորհալու): Թշուառութիւնների և անբաղդութիւնների ժամանակ մեղքի քնից սթափւում են և Աստծուն զառնում (Առկ. 15¹¹⁻²²), իսկ արդարներն էլ աւելի մաքրւում են՝ ինչպէս ոսկին բովի մէջ (Պետր. Ա. 1,⁷): Արդարներին հասած թշուառութիւնները և դժբաղզութիւնները նոցամէջ նոր առաքինութիւններ են բաց անում— համբերութիւն, մեծահոգութիւն, արիութիւն և ուրիշ լատկութիւններ. (Հա. 5³⁻⁵) և դորանով էլ նոցա բարոյական սրբանաւորութիւնը աւելի բարձրացնում և ապազալ փառքի զարգանալուն նպաստում (Կորնթ. Բ. 4-17):

Կեանքի ալգպիսի թշուառութիւններից և դժբաղզութիւններից ճշմարիտ քրիստոնեան շատ շարժառիթներ է մենք բերում զոցա արիութեամբ տանելու: Աստուած ուղարկում է դժբաղզութիւններ և թշուառութիւններ, մենք էլ պարտաւոր ենք նոցախոնարհութեամբ ընդունել, ինչպէս Ամենակարողի խոնարհ ծառաներ: Աստուած թշուառութիւնները ու վշտերը զիտմամբ է ուղարկում, մենք էլ պէտք է նոցա լիակատար հաւատարմութեամբ ըն-

դունենք, աշխատելով Աստուածալին Նախախնամութեան միտքը հասկանալ, որ մեզ կամենում է նոցանով խելքի բերել: Աստուած թշուառութիւններն ու զժբաղզութիւններն ուղարկում է մեր բարութեան և փրկութեան համար, մենք էլ պէտք նոցա չնորհակալութեամբ ընդունենք: Պէտք է ուրախանանք, որովհետեւ ալդ դէպքով մենք ցաւակից ենք լինում չարչարուած մեր Տիսուաքրիստոնէին: Ճշմարիտ քրիստոնէին բաւական է միայն ալդ շարժառիթն ունենալ, որովհետեւ նա՝ իրան հասած վիշտը բարեհոգութեամբ և արիութեամբ տանելով, քաջանում է նոյն իսկ թշուառութիւնների և վշտերի ժամանակ ուրախանալու (Պետր. Ա. 1-^{6,7}, Հռովմ. 5³) և Քրիստոսի չարչարանքներին մասնակից լինելու նպատակով: Մեր Տէր Յիսուս-Քրիստոսը, որ ամեն կերպ փորձուած և փորձուածներին էլ օգնութիւն տուող Անձնաւորութիւն է—չարչարանքների և զժբաղզութիւնների խաչն ընդունող և իւր ինտեից եկող մարդոց ամենազօր օգնութիւն է խոստանում «կարողութիւնից վեր չ'փոքձելու» (Կորնթ. Ա. 10¹⁰), իսկ չարչարանքներից և վըշտերից լետոյ էլ խալիտենական փառք չնորհում, որի առաջ ոչինչ նշանակութիւն չունին ներկայ ժամանակիս կրեքը (Հռովմ. 8¹⁸): «Ով մինչև վերջը կ'համբերէ, նա էլ կ'ապրի (Մարկ. 13¹³, Սատթ. 10-²²): Եթէ մենք մեր անբաղզութիւնների ժամանակ պահանջելի համբերութեան և արիութեան մէջ տատանուինք, ալդ կնշանակէ, որ մենք Աստծուն չենք հաւատում, նորա վերայ լոյս չենք դնում և մեր փրկութիւնն էլ չենք կամենում:

ԼԱԽ ԱՆՌԻՆ:

Քրիստոնեան իւր կոչումը լաւ պահելով՝ պէտք է լաւ պահէ և բարձրացնէ իւր պատիւը կամ լաւ անունը հասարակութեան մէջ: Այդ պարտականութիւնը նորա ախ ամենավսեմ բարիքներից մէկն է, որոնք մարդուս կեանքը զարդարում են: Ինչպէս որ մարմնին հարկաւոր է կեանք, ախնպէս էլ հոգուն հարկաւոր է պատիւ, որը կենդանացնում է մեր ամեն զործերը, կանոնաւորում մեր զգացմունքները, աղնուացնում առաքինութիւնները, կտրում մոլութիւնների ուժը, փալ տալիս լաջողութեանը, միխթարում արտմութեան մէջ և զօրացնում կարօւութեան ու թշուառութեան ժամանակ, իսկ եկեղեցեականներից պահանջում սրբութիւն, հարեւնիքի աղատութեան համար պատերազմողներից զօրութիւն և անձնուիրութիւն, զատաւորներից արդարութիւն, հանձարեղներից՝

նախանձաւութիւն, արհեստաւորներից՝ աշխատութիւն և կանանցից՝ պարկեցմութիւն, Պարսից Արտաշէս թագաւորը շատ թանկագին պարզեներ ուղարկեց Յունաստան՝ թերէի Նպամինոնդէս դօրավարին կաշառելու նպատակով, իսկ օրինակելի ազգասէր և վեհանձըն հոգին, թէ իւր և թէ իւր հայրենիքի պատիւը բարձր պահելով՝ ընծալաբեր մարդոց միջոցով պարսից շահին լաւտնեց հետեւելը—«Եթէ որ թագաւորը կամենում է թերէացոց բարեկամը լինիլը իմ բարեկամութիւնս գրաւելու կարիք չկալ, իսկ եթէ ուրիշ մտածութիւններ ունի, թող իմանալ, որ այնքան հարստութիւն չունի, որ կարողանալ ինձ մոլորեցնել»:

«Լաւ (բարի) անունը շատ հարստութիւնից աւելի ընտիր է ենորհքն էլ արծաթից ու սոկուց լաւս, ասում է հին իմաստունը (Առակ. 22₁): Հարստութիւնը շատ անդամ ուրիշների նախանձն է գրգում մեր դէմ, իսկ ճշմարիտ պատիւը կամ լաւ անունը բոլորին սիրել լարգել և բարի ցանկութիւն անել է տալիս, նորա հասարակական գործունէութեան շրջանը լայնացնում և ամրապնդում՝ կարենոր ձեռնարկութիւնները կատարելու, և թէ կոչման պարտականութիւնները եռանդով անցկացնելու համար, բացի գործեր անելու: Հարստութիւնը մեր սեպհականութիւնը կարող է համարուիլ միայն ներկայի կեանքում, իսկ բարդար մարդու լաւ անունը և լիշտակը միշտ են մնում» (Սիր. 41₆): Ալդ պատճառուի՝ Ա. Պօղոս առաքեալը իւր արդար պատիւը և պարծանքը պահպանելու գործը իւր համար նոյն իսկ կեանքի ամենաբարձր բարիքն է համարում—«աւելի լաւ է ինձ մեռնել, քան թէ մէկը ինձանից իմ պարծանքը խլէ» (Կորնթ. Ա. 9₁₂):

Միայն թէ սորա հետ պէտք է հասկանալ, որ քրիստոնեան արդար պատիւը կամ լաւ անունը պէտք է այնպիսի լատկութիւնների և վարմունքների մէջ ցուց տալ, որ գովասանքի և քաջալերութեան արժանի լինին, թէ իրանց «Ճշմարիտ բարութեամբ, թէ պատով, թէ արդարութեամբ և թէ սիրով», ևալին (Փիլ. 4₈₋₉, 3₈₋₁₄): Ալդպիսի պատուի ձգտելով, քրիստոնեան չպէտք է դորան իւր գործողութիւնների և վարմունքների նպատակը համարէ, ալլ պարտաւոր է բարի գործեր անել—աչ թէ միայն մարդոց առաջ փառաւորուելու, ալլ նորա համար՝ որ ուրիշներն էլ նորա կեանքով և գործունէութիւնով դրգուին՝ Աստծուն փառաբանելու համար—« Ձեր լոյսը մարդոց առաջ թաղ այնպէս լուս տալ», ասում է Յիսուս-Քրիստոսը իւր աշակերտներին, առ ձեր բարի գործերը

տեսնեն և փառաւորեն ձեր Հօրը, Որ կրկնքումն է» (Մատթ. 5₁₆): Գորա հետ էլ քրիստոնեան հասարակութեան մէջ իւր մասին եղած լաւ կարծիքը պէտքէ վերաստուգէ իւր խղճմտանքով (Կորնթ. 1₁₂) և ոչ մի դէպքում չ'պիտի համաձայնի ընդունել այն պատիւը, որին ինքը արժանի չէ, թողնելով նոյնը նորան, ով որ դորան արժանի է, ինչպէս վարուեց Յովհաննէս Մկրտիչը (Յովհ. 1_{20, 21, 26, 27}):

Եթէ մէկը կ'կամենալ քրիստոնէի լաւ անունը կատարել, նորա պատիւը իւլել, այն էլ ոչ թէ միայն նորան, ալլ և ուրիշներին վնասելու նպատակով, այն ժամանակ նա պէտք է համեստ և խաղաղ կերպով նորա պատիւը պաշտպանէ, ցոյց տալով նորա վերայ բարձած բոլոր մեղադրանքների անմտութիւնը, ալդ մասին աւելի պէտք հոգան նորքա, որոնց Աստուած զեկավարներ և դաստիրակներ է նշանակել ուրիշների վերայ, որոնք են՝ հոգեոր հովիւները, ծնողները և դաստիարակները, գլխաւորները, ուսուցիչները և ուրիշները: Միայն թէ ալդ պաշտպանութիւնը իւր վերայ ոչ թէ վրէժինդրութեան, ալլ և հանգստութեան և հեղութեան կնիք պէտք է կրէ: Ալդպիսի օրինակ տուեց մեզ Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը, Որը իրան խփող ծառալին ասաց—«Եթէ չար բան խօսեցի, ապացուցիր չարութիւնը, իսկ եթէ բարի բան խօսեցի, համար ինձ Բնչու համար ես խփում» (Յովհ. 18₂₂): Ալդպիսի դէպքերում ալդպէս էր վարւում և Պօղոս առաքեալը (Գործք. 23₁₋₄, Կորնթ. Ա. 9 զլ.):

Իւր պատիւը և լաւ անունը պաշտպանելու միջոցն այն է, որ քրիստոնեան բարուապէս ընտիր անձնաւորութիւն լինի և սրտով էլ իւր պարտականութիւնները կատարող: Բարեկապաշտութեան և առաքինութեան մէջ առաջ գնալով՝ քրիստոնեան իւր թշնամիների բոլոր չարախօսութիւնները և ամբաստանութիւնները դոցանով կարող է ոչնչացնել:

ՓՈՌԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԱՀԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՆԱԽԱԶԳՈՒՅՇՈՒԹԻՒՆ:

Պատուի և լաւ անուան մասին ունենալու հոգացողութիւնը պէտք է զանազանուի փառասիրութիւնից: Առաջինը—առաքինութիւն է, իսկ վերջինը—մոլութիւն: Փառասէր մարդու կեանքի և գործունէութեան նպատակն է ուրիշ մարդկերանցից իւր համար պատիւ և բարդանք կորզել, ինչքան էլ նա դորան ար-

ժանի չը լինի իւր անձնական լատկութիւններով, որի համար զործէ ածում օրինաւոր և ապօրինի ամեն տեսակ միջոցներ։ Փառասիրութիւնը հակառակ է Աստծու, մերձաւորների և իւր վերաբերեալ ունեցած պարտականութիւններին։ Հիմքումն ունենալով եսասիրութիւն, կամ ուրիշ անձնական հաշխւներ, փառասէր մարզը, մոռանալով Աստծուն, Որին իւր ամբողջ կեանքով և գործունէութեամբ պէտք է համակերպուի, Աստծու փոխանակ իւր «ես»։ Է առաջ բերում, նորան ծառայում և նորան հաճուանում։ Պատուասիրութիւնը ոչնչացնում է և՛ մեր պարտականութիւնները մերձաւորների վերաբերեալ, Փոխանակ մերձաւորներին արժանավայել կերպով լարգելու և սիրելու, փառասիրութիւնը մարդուն ստիպում է ուրիշներին իրման միջոց ընդունել իւր փոխասիրական նպատակներին հասնելու համար։ Նա նոցանից պահանջում է ախտիսի լարգանք և պատիւ, որոնց ինքը արժանի չէ և թէ՝ ովքիր էլ նորան ալդ լարգանքը չեն տալիս, նոցա հալածում է և աշխատում վնասել, որի պատճառով զանազան անպատուաբեր միջոցներ է գործածում, օրինակ—բամբասանք, ամբաստանութիւն, հեղութիւն, նալլն։ Իւր անձի վերաբերեալ փառասիրութիւնը նորանով է լանցանք համարուում, որ՝ ինքնաճանաչութեան ճանապարհը կապելով, մարդուն արգելը է լինում բարուալէս կատարելազործուելու և թէ դիսաւոր նպատակին ու լաւիտենական երանաւէտ կեանքի կոչմանը հասնելու։ Նա թունաւորում է մինչև անգամ և՛ մարդուս ժամանակաւոր կեանքը—աշխատելով ուրիշներից պատիւ ստանալ, ալն էլ սակաւ դէպերում, կեղտու սրտերից, Մեծ մասամբ նորան չեն սիրում, չեն լարգում և մինչև անգամ արհամարհանք են ցոյց տալիս, որովհետև ոչ մի բան մարդուն ուրիշ մարդկերանցից ախտիս չէ բաժանում, ինչպէս անամօթաբար պատիւների և փառասիրութեան լեսեից իւրաքանչիւր Ալդ բոլորը նորան միշտ վըրգովիցնում է ու տանջում, նորա մէջ մի տեսակ դժոխք ստեղծելով։ Ալդ տեսակ մոլութիւնից խուսափելու համար պէտք է մտածել թէ միան զատարկ, աշխարհալին և փութանցիկ, ալլ և ճշմարիտ երկնալին և լաւիտենական փառքի մասին։

Ալդպիսի հսասիրական հողի վերալ է լարգանում և՛ շահւսիրական մոլութիւնը։ Հանասիրութիւնը մի ախտիսի մոլութիւն է, որ մարդուն հարկադրում է ամբողջապէս թէ հարստութիւն ձեռք բերելու և թէ նորան մեծացնելու մասին մտածել, ալն էլ ոչ թէ միան զեհագոյն լաւիտենական բարիք փառակելու նպատակով, ալլ մին, որ նա դորան շատ է սիրում, իւր կեանքի նպատակը համա-

րում և իւր վսիմ բաղդաւորութիւնը նորա մէջ զտնում։ Նատ հարստութիւն վաստակելու շարժառիթն ալն է, որ մարդս դորանով կարողանալ իւր կեանքի արտաքին բաւականութիւնը և հանգստութիւնը ապահովել և իրան ուրիշներից բոլորովին անկախ դրութեան մէջ զնել։ Երբ որ հարստութիւնը մեծանում է, ալն ժամանակ ուրիշ մոլի շարժառիթներ ևս են առաջ դալիս, ալն է՝ ցանկանում է ուրիշներին իրան ենթարկել, կեղծ փառքի, պատուի և լարգանքի ձգտել, նալլն։ Վերջապէս՝ ալդ մարդութիւնը կիրք է դառնում, և մարզս էլ, աւելի և աւելի հարստութիւն դիզելով, վերջինս իւր կեանքի թէ նպատակը և թէ վահեմ զուարձութիւնն է համարում։ Ուկու փալլից կուրացած, նա Աստծուն մոռանում է, և հաւատում երկրալին մամոնալին, իւր չորսը նենգաւոր հարստութեան վերալ զնելով (Տիմ. Ա., 6-17), որը նորա համար փառք է դառնում (Եփ. 5-5, Կող. 3-5)։ Որքան հարստութիւնը աւելանում է, ալնքան էլ ալդ կիրքը նորան զանազան տղեղ բաներ է անել տալիս—նա ալդ դէպքում չափ ու սահման չի ճանաչում։ Երբ մարզս ալդ կրքին չի կարողանում բաւականութիւն տալ օրինաւոր միջոցներով, ալն ժամանակ՝ ապօրինի միջոցների է դիմում։ Ալդ մոլութեան ենթարկողներից շատերը, շատ տարիների համար պաշար և ապահովութիւն դիզելով, մամոնալին մատուցած ժառանգութիւնը խառնում են և որովանին ծառայելու հետ, նմանուելով Աւետարանական հարստին, որն ինքն իրան համար ասում է.—Ո՞վ իմ անձն, շատ տարիների համար ժողոված շատ բարիք ունիս, հանգստացիր, կեր, խմիր և՛ զուարձացիր (Պուկ. 12-19)։ Ալդպիսով՝ ալդ մոլութիւնը և՛ շատ ուրիշ մոլութիւններ էլ է ծագեցնում։ Աստուածալին Խօսքը դորան դատապարտում է և անարժան համարում քրիստոնէի համար, ասելով—«էք կարող ծառալել ոչ Աստծուն և ոչ էլ մամոնալին» (Մատթ. 6-19-21), որովհետև մարզս դորանով թէ ժամանակաւոր և թէ լաւիտենական կորստեան է մատնում։

¶.

ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐՉԱՒԲՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ։

Մերձաւորների վերաբերեալ եղած քրիստոնէի պարտականութիւնները Քրիստոս ինքն արտալալոց հետեւալ պատուիրա-

նով - «Յո ընկերոջդ սիրիք, ինչպէս քո անձը» (Մատթ. 22: 38) և
այս խրատով - «Ամեն բան, եթէ կամենում էք, որ մարդիկ ձեզ
անեն, դուք էլ նոյնը նոցա արէք» (Մատթ. 7: 12): Եթէ մենք մեր
բաղզաւորութիւնը և փրկութիւնն ենք կամենում, և ցանկանում
ենք, որ ուրիշներն էլ մեզ ալդ բանում արգելք չ'լինին, ալ ընդ-
հակառակն - աջակցեն, հապա նոյնը պէտք է մեր կողմից և՛ ու-
րիշներին ցանկանանք և աջակցենք նոցա բաղզաւորութեան հաս-
նելուն. — մէկ խօսքով՝ մենք պարտաւոր ենք մեր մերձաւորներին
սիրել ախպէս, ինչպէս մեր անձը: Մենք ալդպէս պէտք է սիրենք
ախ պատճառով, որ մեր բոլորիս բնութիւնը մէկ է (Գործ. Առ.
17-₂₄-₂₆) և իւրաքանչիւր մարդու համար էլ բնական է և բատուկ
իւր բնութիւնը սիրել: Մենք բոլորս էլ Աստծու պատկերի նման
ենք ստեղծուելու, հետևապէս, եթէ Աստծուն սիրում ենք, Որ սէր է
(Յով. Ա. 4:-₈), պէտք է սիրենք և՛ մեր մերձաւորներին, որոնք
Աստծու պատկերն ունին, և՛, ընդհակառակն մերձաւորներին է՛
չ'սիրելով, դորանով ցոյց ենք տալիս մեր չ'սիրելը Աստծուն (Յով.
Ա. 4:-₂₀): Բայց մենք բնչպէս կարող ենք սիրել նորան, Որը
ամենից առաջ մեղ սիրեց և ախ էլ ախ աստիճանի, որ իւր Միա-
ծին Որդուն մեր փրկութեան համար չ'խնաբեց աշխարհ ուղարկեք
(Յով. 3:-₁₈): Մենք պէտք է մեր մերձաւորներին սիրենք և ախ
պատճառով, որ ալդ բանը ինքը՝ մեր Տէր Յիսուս-Քրիստոսը իւր
օդինակով մեղ սովորեցրեց: Սիրուց զրդուած՝ նա մարդ գարձաւ՝
իւր վերայ մեր բոլոր մեղերը կրեց, ամենածանը տանջանքներ և՛
մինչև անգամ՝ ամենաանարգական մահ ընդունեց (Յով. Ա. 3:-₁₆.
Եփ. 5:-₂): Ալդ միենոյնը սովորեցնում է և՛ իւր Խօսքով - «Միմեանց
սիրելու նոր պատուիրան եմ տալիս ձեզ», ասում է Քրիստոս, «ինչ-
պէս որ Ես ձեզ սիրեցի, ախնակս էլ դուք միմեանց սիրեցէք»
(Յով. 13:-₃₄): Քրիստոնէութեան մէջ մենք բոլորս էլ մի Երկնաւոր
Հօր Որդիք ենք, ուստի և՛ պէտք է մերձաւորներին սիրենք, ինչ-
պէս մեր եղբալներ. մենք բոլորս էլ Քրիստոսի միմենոյն մարմել
անդամներն ենք, բոլորս էլ ունինք միենոյն կոչումը, միենոյն Ա.
Հոգու չնորհքը և միենոյն լոյսը, ուստի՝ ով մերձաւորին չի սիրել:
Նա էլ ճշմարիս քրիստոնեալ չի կարող համարուիլ:

Մերձաւորներին սիրելու մասին եղած պատուիրանի մեջ նշանակութիւնը և օգտակարութիւնը մեզ հարկադրում են, որ գորան կատարենք: Աստծու Խօսքի վկայութեամբ՝ սէրն է «կատարելութեան կապ» (Կող. 3-14), Աստուածալին և քաղաքացիսկան օրէնքի կատարումն (Հռովմ. 13-11), հասարակական կեանքի բարօրուու

Թեան անհրաժեշտ պայման (Կորնթ. Ա. 12_{12, 23, 27}) և Քրիստոսի
ձշմարիտ հետևողների համար ամենահաւատարիմ և աներկպալելի
նշան (Յովհ. 13-₃₅): Նորա մէջն է քրիստոնէութեան ամբողջ էու-
թիւնը. առանց նորան—մեծը՝ փոքր է, վսեմը և փառաւորը—չըն-
չին. առանց նորան—իմաստութիւնը և գիտութիւնը, հրաշագոր-
ծութեան և մարդարէութիւնների շնորհքը, զէպի հաւատն ունե-
ցած ամենավավուլուն նախանձախմնդրութիւնը՝ ոչինչ նշանակու-
թիւն չունին (Կորնթ. Ա. 13₁₋₁₃): Նա է ձեռք ըերում Աստծու
հաճութիւնը և մերձաւորների համակրութիւնը. Նա է շատ մեղքեր
ծածկում (Պետր. Ա. 4-₈) և շատ բարիք պատրաստում մեզ համար
յաւիտենական կեանքում (Պետր. Բ. 1_{5-8, 11}, Պատր. 21₂₋₃):

Ալղափիսի վառվուուն և սուրբ զգացմունքով ողերուած, քրիստոնեան պէտք է միշտ բարութիւն անէ, որի ընթացքում պարաւոր է Աստծուն վառարանել, մերձաւորին բարիք և փրկութիւն ցանկանալ և իրականապէս կատարել, միանգամայն լուսալով, որ «Բարի գործերը՝ բարիք և անվախճան թագաւորութիւն ժառանգելու իրաւունք կ'ստանան» (Ընդհան. Ա. Ծնորհ.), Մեր Փրկչի անսահման սիրոջն նմանուելով ամեն մի քրիստոնեալ պարտաւոր է՝ ալղափիսի անձնուիրաց սէր ցոլց տալ մերձաւորներին. «սորանից աւելի սէր ոչ ոք չի կարող ունենալ, եթէ մէկը իւր կեանքը իւր բարեկամների համար լիտ դնէ» (Յուլ. 15 ՀՀ-18). Պա, իբրև մարմացած Աստուածակին սէր, ամբողջ մարդկակին ցեղը գրկած պահելով, չի ջոկում ոչ հրէին և ոչ հիթանսին, ոչ թլպատուածին և ոչ անթլպատին, ոչ բարեկամին և ոչ ստրկին և ոչ անթլպատին, ալ կամենում է, որ ամեն մարդ փրկուի և ծշմարիտը ճանաչէ» (Տիմ. Ա. 2-4-6), որի համար Տէրը չարչարուեց և մեռաւ. — ուստի՝ ամեն մի քրիստոնեալ պէտք է բալոր իւրաքիններին և սըրապակիցներին, բարեկամներին և թշնամիններին աղպակս սիրէ, երբէք ջոկելով նոցա ոչ սեռը, ոչ հասակը, ոչ կոչումը և ոչ դրութիւնը Դուկ. 10 ՀՀ-37. * Մատթ. 5 ՀՀ-48, 9 10-15, Կորնթ. Ա. 9 ՀՀ-23, 7.

6. ով որ Աստծու Որբու աշխարհ զալը աներկբայելի ճշմար-
ութիւն է ընդունում, նա պէտք է ամբողջ մարդկութիւնը սիրէ:
ասկ եթէ նա իւր սէրը սահմանափակում է մի որևէ չըջանով, կը
շահակէ՝ կատարեալ կերպով չէ հասկանում քրիստոնէական հաւա-
րի էութիւնը, նա՝ կամ գիտենալով և կամ չ' գիտենալով, նսեմացնում

է, կամ ոչնչացնում այն գոհի վեհութիւնը, որը Աստծու^{*)} Որդին
է մատուցել աշխարհի փրկութեան համար:

ՄԵՐՁԱԿՈՐՆԵՐԻՆ ՍԻՐԵԼՈՒ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԾՈՂՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ:

Որովհետեւ մեր լարաբերութիւնները մերձաւորների հետ զա-
նազան են լինում, այդ պատճառով՝ նոցա վերաբերեալ սերն էլ
զանազան տեսակ է արտակայուում. 1) Աղջարու թիւն և ներզամու-
զիւն: Արդարութիւնը պահանջում է, որ ուրիշների իրաւունքները
են սուրբ և անխախտելի համարենք, որ նոցա ևս այն ցանկանանք
անել, ինչ որ մեզ համար ենք ցանկանում (Մատթ. 7:12, Գործք
15-20): Այդ պարտականութեան կատարելը ամբողջ բարուական
կարգաւորութեան հիմքն է կաղմում. չկատարելն էլ զանազան ան-
կարգաւորութեան հիմքն է կաղմում. Այդ պատճառով՝ արդարադատ
կարգութիւններ է առաջ բերում. Այդ պատճառով՝ արդարադատ
Աստուածը երկնքի թաղաւորութիւնից արտաքսում է այն բոլոր
մարդոց, որոնք արդարութեան օրէնքը խախտում են (Կորնթ. Ա.
6:9-10):

Միայն արդարութեան համահանձ ունենալով, քրիստոնեան
պարտաւոր է մարդկային բնութեան սահմանափակութիւնը և նո-
րա ապականութիւնը մտաբերել: Այդ պատճառով՝ արդարութիւնը

^{*)} Ծանօթ. Պարտաւորեցնելով բոլորին առանց խարութեան սիրել քրիս-
տոնէական հաւատը թուլապրում է սիրել՝ ուրիշներից աւելի՝ և մի քանի
առնէական հաւատը թուլապրում է սիրել՝ ուրիշներից աւելի՝ և մի քանի
անձանց, որոնք են ծնողները, ազգականները, հաւատակիցները, բարեկամները,
և այլն: Այդ բանը սովորեցնում է մեզ ինքը՝ Յիսուս-Քրիստոս՝ իւր օրինա-
կով: Դա թէ եկալ ամբողջ մարդկային ցեղը փրկելու, բայց և այնպէս երկն-
քի թագաւորութիւնը ամենից առաջ հրէից ազգին աւանդեց: Հրէաների մէջ
քի թագաւորութիւնը ամենից առաջ հրէից ազգին աւանդեց: Նորա ամենամօ-
ջադարի ընտանիքը նորան աւելի համակրութեամբ սիրեց: Նորա ամենամօ-
ջադարի ընտանիքը Պատրու, Յակովոսը և Յովհաննէսը աւելի համակրու-
տիկ աշակերտներից՝ Պատրու, Յակովոսը և Յովհաննէսը նորա սիրելին
թիւն վայելեցին նորանից: իսկ զոցանից էլ աւելի Յովհաննէսը նորա սիրելին
դարձաւ (Յովհ. 21:30): Խոչչի վերայ՝ չարչարուելու ժամանակը, ամբողջ աշխարհին
պատկանելով, նա երբէք իւր Մօրը չ'մոռացաւ, Արի մասին անելու հոգատարու-
պատկանելով, նա երբէք իւր Մօրը չ'մոռացաւ, Արի մասին անելու հոգատարու-
պատկանելով (Յովհ. 19:35-36): Նոյնը
թիւն էլ իւր սիրելի Յովհաննէս աշակերտին յանձնեց (Յովհ. 19:35-36): Նոյնը
և Պօղոս առաքեալն է սովորեցնում մեզ թէ փօսքով և թէ օրինակով: Ըստու-
րին, առում է նա, «բարութիւն անենք, մանաւանդ նոցա, որոնք հաւատով մէկ
էն» (Գաղ. 6:10). մի ուրիշ տեղ էլ աւելացնում է՝ «Եթէ մէկը իւրայինների,
կամ աւելի իւր ընտանիք՝ մասին հոգս չի քաշում, նա հաւատն ուրացած և
կամ աւելի իւր ընտանիք՝ մաքը է համարում» (Տիմ. Ա. 5:8): Եւ ինքն էլ իւր հայրե-
աննաւատից էլ վատ մաքը է համարում (Տիմ. Ա. 5:8): Եւ ինքն էլ իւր հայրե-
աննաւատից այնպէս սիրում էր, որ «ցանկացաւ նղովաւած լինիլ Քրիստոսից
միայն նոցա փրկութեան համար» (Հովով. 9:3):

պէտք է միշտ ուրիշների թուլութիւններին և պակասութիւններին
ներողամիտ լինի, եթէ նոքա կախումն ունին նոցա պակաս զար-
դացումից և կրթութիւնից: Այդ պահանջումէ նորանից քրիստոնէա-
կան սիրու նոյն իսկ լատկութիւնը, որը, Առաքեալի ասելով—
«երկայնամիտ է, քաղցր է, իրանը չի որոնում, չի բարկանում,
չարութիւն չի մտածում, ամեն բանի հաւատում է, ամեն բանի վե-
րալ լոյս է գնում և ամեն բանի էլ համբերում է» (Կորնթ. Ա.
13:15, 17): Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը՝ ներողամիտ գտնուելով գէպի
մեղաւորները, նոյնը պահանջում է Ա' իւր հետեղներից: «Եթէ
դուք մարդոց լանցանքները կ'ներէք, ձեր ևրկնաւոր Հալրն էլ
ձեզ կ'ներէ: իսկ եթէ մարդոց լանցանքները չ'ներէք, այն ժամանակ
ձեր Հալրն էլ ձեր լանցանքները չի ներել» (Մատթ. 6:14-15): Նոյնը հաս-
տառումէ Նա «Անգութ պարտապանի» առակով (Մատթ. 18:15-35):
Այդ լատկութիւնը իւր մէջ արմատացնելու համար՝ մարդու պէտք է
յաճախ իւր անձնական պակասութիւններին ուշք դարձնէ, որով-
հետեւ ով զոցա իւր մէջ կ'նկատէ և կ'համականալ: Նա էլ միշտ ներո-
ղամտութեամբ կ'վերաբերուի ուրիշների պակասութիւններին: Մի-
այն թէ ներողամտութիւնը անսպէս պէտք է տանել, որ նա ու-
րիշների թուլութիւններին երես տալ չ'համարուի, որովհետեւ զո-
րանով այդ պակասութիւններն աւելի կ'գօրանան: Այդ առաքինու-
թեան հակառակ մոլութիւնն է անարդարութիւնը: Աստուածային Խօս-
քը զորա լանցանքութիւնն արդէն պարզ լայտնում է և սարսա-
փելի պատիժ նշանակում (Յիրեմ. 22:3-5, 13-15). Թեսազ, Ա. 4-6, Կո-
րնթ. Ա. 6:8-10):

2). Խաղաղապահութիւն: Խաղաղապահութիւնը քրիստոնէի հոգու
մի անպիսի լատկութիւնը և ձգտումն է, որ նա ցանկանում է,
և ամեն կերպ աշխատում՝ ուրիշների հետ խաղաղութիւն և համա-
ձանութիւն պահպանել, հեռանալով այն բոլորից, ինչ որ խովու-
թիւններ, անհամաձանութիւններ և բաժանումներ է առաջ բերում,
իսկ եղած անհամաձանութիւններն իսկովն և եթ ոչնչացնում և
որից խաղաղութիւնը և համաձանութիւնը վերականգնում:
Քրիստոնէի հոգու ալղալիսի տրամադրութիւնը այն անկեղծ և անձ-
նուրաց սիրով բնական հետեանքն է, որը պէտք է ունենանք մեր-
ձաւորների հետ: Եթէ մենք, ինչպէս մէկ երկնաւոր Հօր որդիք,
պէտք է մեր մերձաւորներին սիրենք, ինչպէս մեր եղբարներ, ու-
րիմն աւելի մօտ ազգակցական լարաբերութիւնների ժամանակ եր-
բէք լուսովութիւններ և անհամաձանութիւններ չպէտք է լինին,
այդ եթէ զոքա պատահական են, այն ժամանակ քրիս-

տոնեան, սիրուց դրդուած, միշտ աշխատում է դժգոհներին խաղաղացնել և հանգստացնել և, Աստծու չնորհքի օգնութեամբ բարի և համեստ լարաբերութեամբ նորից մերձաւորների սէրը, լարզանքը և համակրութիւնը վաստակել (Պետր. Ա. 8 Տ₁₃, Կորնթ. Բ. 13 Հ₁₁, Երր. 12-14):

Ոէկ մարդս երեմն անտեղի կերպով անպատռութիւն է ստանում, բայց նա մեծահոգութեամբ տանում է նորան, հաշտում է իրան անպատռողի հետ և տմեն միջոց զործ դնում—բոլորի հետ խաղաղ լինիլ (Հառվմ. 12-18, Նի. 4 Տ₂):

Մերձաւորներին անկեղծ և անճնուրաց սէր ցոյց տալով՝ ջշմարիտ քրիտոնեան ոչ թէ միայն կամենում է նոցա հետ խաղաղասիրական լարաբերութիւն պահպանել, — հեռացնելով նոցա խանդարելու բոլով առիթները, այլ ե՛ց ցանկանում է, որ ալզախի լարաբերութիւններ ունենան միմեանց հետ ե՛ռ ուրիշ մարդիկ: Ալդ պատճառով՝ երբ դոքա խանդարում են, ձշմարիտ խաղաղասէր մարդը աշխատում է նոցա միջի առաջուալ անկեղծ լարաբերութիւնները վերանորոգել և թշնամութիւնը հեռացնել:

Անհամաձայնութիւնը, կուրը և թշնամութիւնը ալնպիսի մուլութիւններ են, որոնք առաքինութեան հակառակ են: Նոցա արմատը լանցաւոր եսականութեան մէջ է գտնուում, որը մարդուն ստիպում է հոգալ միայն իւր բարիքների մասին, ուրիշների հակառակ: Աստուածաբին Խօսքը պարզ կերպով ալդ մոլութիւնը դատապարտում է և սարսափելի պատիտ նշանակում (Մատթ. 5 22, Կորնթ. Ա. 6-10, Գաղ. 5 19-21):

2). Քաղաքավարութիւն և քաղցրութիւն, Քաղաքավարութիւնը և քաղցրութիւնը մերձաւորներին սիրելու արտաքին արտավագութիւններն են: Նոքա պահանջում են արժանավակել կերպով ուշ շաղրութիւն և կանոնաւոր լարաբերութիւն ունենալ իւրաքանչիւր մարդու հետ, իբրև մերձաւոր, նոցա արժանաւորութիւնների և արած ծառակութիւնների համեմատ, որոնց սիրան է—պատռել մեծերին և զլիսաւորներին, լարգել հաւասարներին և ներողամիտ լինիլ ստորիններին: «Անոց խօսքը», ասում է Սիրաքը, «ամեղ շատ բարեկամներ ճարել կտաք և մեր հակառակորդներին հեզ կ'զարձնէ: Որդեմկ, ամեն բան հեղութեամբ և քաղցրութեամբ արմ և զուն աւելի սիրելի կ'զառնաս, քան թէ այն ժամանակ, երբ երմելի կործեր արած կ'լինիս: Կիրքը և բարկութիւնը մեր կեանքը կարծացնում ենո: Ալդ ընտիր լատկութիւնները շտամ մեծ նշանակութիւն ունին հասարակական իեանքում—նոքա հասարակական լարաբե-

րութիւններին լաւ և մտերմական լարաբերութիւնների կերպարանք և նշանակութիւն են տալիս ու շատ էլ նպաստում են ինչպէս հասարակական կապի ամրանալուն, այնպէս և հասարակական կեանքի ազնուանալուն, իսկ՝ միւս կողմից, նոցանով հեռացւում են զանազան անախորժութիւնները և անպատռութիւնները, որոնք ծագում են տղիտութիւնից և անվայելչութիւնից և մինչեւ անզամ՝ կոչտ ու կոպիտ սրտերն էլ կակլում են: Ալդպիսով՝ նոքա մարդոց մէջ խաղաղասիրական լարաբերութիւններ պահպանելուն շատ նպաստում են: Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը՝ ալդ արտաքին լատկութիւններին մեծ նշանակութիւն տալով՝ իւր հետևողներին լորդուրում էր բոլորի հետ լարգանքով և քաղցրութեամբ վարուիլ: «Մտնելով տուն», սովորեցնում է նա, «ողջուն տուէք նորան և ասացէք—ողջուն այս տանը» (Մատթ. 10 Տ₁₂): Նոյնը լորդորում են մեզ թէ խօսքով և թէ օրինակով և նորա ս. առաքեալները (Հ. 16-3 Տ₁₆, 21-23, Փիլ. 4 Տ₁₋₂₂, Կող. 4 Տ₅₋₆): Անհամեստութիւնը, անպատռութիւնը և կոչտութիւնը այնպիսի մոլութիւններ են, որոնք հակառակ են վերե լիշած առաքինութիւններին: Աստուածալին Խօսքը մերձաւորների հետ ունեցած ալզախի վարմունքը դատապարտում է (Գաղ. 5 Տ₂₁, Նի. 4 Տ₃₀₋₃₂, 5-4):

4). Աղնութիւն, Աղնուութիւնը, սովորական մտքով և նշանակութեամբ, մարդուն ալնպիսի լատկութիւնն է, որով նա ուրիշին չի կամենում չարիքի պատճառ դառնալ, այլ՝ ընդհակառակն, աշխատում է չար բանից պաշտպանել: Միայն ալդ մտքով հասկացած աղնութիւնը այն ընդհանուր և հիմնական առաքինութեան միւս կողմն է արտապատում, որով պէտք է ուրիշների հետ ունեցած մեր լարաբերութիւնները տոգորուած լինին:

Աղնութիւնը՝ ինչպէս քրիստոնէական առաքինութիւն, սէրը իւր հիմքում ունենալով, պէտք է միացած լինի անկեղծ բարութեան հետ, որով՝ ձշմարտութեան օրէնքի վերաէ հիմնուած՝ կամենում ենք կատարել և թէ կատարում էլ ենք մեր մերձաւորների համար այն բոլորը, ինչոր պէտք է և թէ կարող ենք անել ոչ թէ չոր ու ցամաք օրէնքով, այլ հոգով, այն էլ՝ ոչ թէ նոքա համար, որպէս թէ չինք կամենում ուրիշների իրաւունքները խանգարել և նոցա բարօրութեանը վլասել, այլ այն պատճառով, որ ցանկանում ենք նոցա բարդին աշակցել, որի մասին հոգալու կարիք ենք զգում: Ալդ մտքով նա մօտենում է արդարութեանը:

5). ձշմարտախօսութիւն: ձշմարտախօսութիւնը քրիստոնէի հոգու այն լատկութիւնն է, որի հիման վերաէ նա միշտ աշխատում է

Ճշմարիտ խօսել, առանց մի որ և է ստախօսութեան և խաբերայութեան, ինչքան էլնա կեանքի մէջ դրա պատճառով շատ զրկողութիւններ և անպատութիւններ կրէ: Ինքը՝ խուսափելով ամեն մի ստախօսութիւնից և անարդարութիւնից՝ նոյնը չի կամենում տեսնել և' ուրիշ մարդոց մէջ. ուստի՝ ամեն կերպ աշխատում է ձշմարտութիւնը վերականգնել և ստութիւնը բաց անել: Դորա օրինակը մենք տեսնում ենք նոյն իսկ Քրիստոսի, նորա առաքեալների և բոլոր նորա ճշմարիտ հետեղների մէջ: Յիսուս-Քրիստոսը միշտ ճշմարտութիւն էր քարոզում, որին երեք ոչ մի տեղ ոչ թագցնում էր և ոչ նշանակութիւնը ստորացնում, ինչքան էլ նա լողների համար դառն լինէր, որը հրէից քահանակապետին տուածիւր պատասխանի մէջ արտակատեց. — «Ես աշխարհին լաւտնի խօսեցի, Ես ամեն ժամանակ ժողովարանների և տաճարի մէջ սովորեցրի, ուր որ բոլոր հրէանները ժողովւում են, և ծածկաբար էլ ոչինչ բան չեմ ասել» (Յովհ. 18-₂₀), կամ՝ երբ Պիղատոսին ասաց «Ես նորա համար եմ ծնուած և աշխարհ ելած, որ ճշմարտութիւնը վկայեմ» (Յովհ. 18-₃₇): Բոլոր մարդոց իւր թագաւորութիւնը հրաւիրելով՝ նա նոցա ալս աշխարհի ոչ մի բարիք չի խոստանում, այլ՝ ընդհակառակն, պահանջում է, որ նոքա ամեն մի զրկողութեան համար պատրաստ լինին, որը՝ մինչեւ անզամ՝ անձնութեան աստիճանին սիէտք է հասնի: Իրան հետեւու համար իւր աշակերտներին զովելով՝ նա, մի ուրիշ անզամ էլ, լանդիմանութիւն է նոցա թերահաւատութիւնը ուրիշ բարովական պակասութիւնների պատճառով (Մատթ. 16-₂₃). Կամենալով բոլոր մեղաւորներին Իրան կողմը գրաւել, նա՝ մինչեւ անզամ՝ խիստ լանդիմանութիւն է տաշլիս ինչպէս փարիսեցիներին, սաղուկեցիներին, ժողովրդի գլխաւորներին, այնպէս էլ ժողովրդին: Նոյն իսկ թշնամիները նորան «ճշմարիտ վարդապետ» էին անուանում (Մատթ. 22-₁₆): Նոյնը տեսնում ենք առաքեալների կետնքի և ուսման մէջ (Գործ. Ա. 4-_{19,20}, Պետր. Ա. 2-₄, Եփ. 4-₂₅, Կորնթ. Բ. 4-₂): Ազգպիսի հոգեկան լատկութեան արտավայտութիւնը մեղանից պահանջում են ոչ թէ միայն Աստուածաբին Խօսքի խրատները և պատուէրները, այլ և մեր այն բնութեան արքանապատութիւնը, որը՝ նորա կերպ ստեղծուելով՝ իսկապէս ճշմարտութիւն է, Ազդ պահանջում է և' հասարակական կեանքի բարօրութիւնը, որ՝ զլիսաւրապէս՝ հիմուածէ փոխաղարձ սիրու և միմեանց հետ ունեցած հասարամութեան վերալ, իսկ ալղպիսի բարաբերութիւններն էլ լաւաջանում են մի-

այն այն ժամանակ, երբ մարդիկ անկեղծ աղնւութիւնն և ճշմարտախօսութիւնն են ցոլց տալիս:

Եւ, վերջապէս, ալղ ընտիր լատկութիւնը մարդուս ամենավսեմ բարիքն է համարում այն պատճառովի, որ նորանով մերձաւորները նորան սիրում են և համակրում, իսկ ինքն էլ երկնքիթագաւորութեանն արժանանում (Մատթ. 5-₁₀), միշտ մտքում ունենալով, որ «ուղիղ հաւատի հիմքի վերալ հաստատուած արդարութիւնը և ճշմարտութիւնը—ուկի է, մտքի մաքրութիւնը և սրտի սրբութիւնը—արծաթ է, իսկ—սէրը, խոնարհութիւնը, ողպրմածութիւնը, անօխակալութիւնը, պահքը, աղօթքը և ժուժկալութիւնը—պատուական ակներ» (Ընդհ. թուղթ Ներսէս Շնորհալու):

ՍԱԼԱԽՈՍՈՒԹԵԱՆ ՅԱՆՑԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ:

Ճշմարտութեան և արդարութեան հակառակ է ստախօսութիւնը՝ իւր տեսակներով—կեղծաւորութեամբ, զաղոտամտութեամբ, չողոքորթութեամբ, խաբերայութեամբ, նենգութեամբ, և ալլն: Սըտախօսութեան նպատակն է ճշմարտութիւնն աղաւաղել՝ ուրիշներին խաբելու և գալթակցութեան մէջ ձգելու նպատակով: Սըտախօսութեան պատճառը զանազան շարժառիթներ կարող են լինիլ, որոնք նորա լանցաւորութեան աստիճաննը կամ կ'աշարձրացնեն և կամ կ'ցածրացնեն: Ստորին աստիճանի վերալ ստախօսութիւնն լինում է այն ժամանակի, երբ թեթեւամտութեամբ, ուրիշներին զուարձացնելու համար, սուս են խօսում: բարձր աստիճանի վերալ ստախօսութիւնը չարութիւն է զառնում և ուրիշներին վնասում, իսկ ամենաբարձր կետի ստախօսութիւնը լինում է այն ժամանակի, երբ մարդիկ սուս վկացութիւն են տալիս և երդման դէմ լանցանք զործում, որի նպատակն իսկապէս Աստծուն խաթթելու է լինում:

Թէև ստախօսութիւնը զանազան աստիճանի լանցաւորութիւն ունի, նակելով՝ թէ՝ ինչ շարժառիթների տակ է զտնւում, այնուամենայնիւ նորան, իւր բոլոր տեսակներով, զատապարտում է թէ՝ Աստուածալին Խօսքը և թէ մարդկալին բանականութիւնը: «Ծիրոջ համար սուս շրթունքը զգուելի է», ասում է ամենափաստունը (Առակ. 12-₂₂), «Տէրը արիւնահեղ և նենգուոր մարդկից կ'զզուի» (Սաղմոս. 5-₆): Յիսուս-Քրիստոսը նորան սատանալի գործ է համարում (Յովհ. 8-₄₄), հետևապէս՝ սկ սուս է խօսում, նա էլ անձնատուր է սատանապիս: Քրիստոնեաններին ալղ զզուելի մո-

լութիւնից զգուշացնելով՝ Պօղոս առաքեալն ասում է — «Ստութիւնը մէկ կողմը ձգելով՝ ձեր ընկերոջ հետ ամեն մէկդ ճշմարտութիւն խօսեցէք, ինչու որ մենք միմնանց անդամ ենք» (Եփ. 4-₂₅): «Իրար հետ սուտ մի խօսեք, հին մարդուն իւր գործերով ձեր վերալից հանեցէք» (Կող. 3-₉):

Ստութիւնով հերքում է Աստծու մեծութիւնը և նորա կատարելութիւնները, ոչնչացնում է մարդու արժանաւորութիւնը և չեղում իւր կոչումից: Աստուած ճշմարտութիւն, սրբութիւն և արդարութիւն է, Որի համար մենք ստեղծուած ենք. հետեալիս՝ այն, ինչ որ ճշմարտութեան հակառակ է, հակառակ է Աստծուն և մեր կոչմանը: Այդ միենունն ասում է և՛ մեր խղճմտանքը, որով հետեւ ամեն մարդ ամօթխածութիւն է զգում, երբ նորան ստախօսութեան մէջ բոնում են: Փոխադարձ սէրը ոչնչացնելով, ամեն մի հաւատարմութիւն և լարգանք կտրելով, նա զորանով քարուքանդ է անում հասարակական կեանքի կապը, կարգը և բարօրութիւնը, այնպէս որ շատ ուրիշ մոլութիւնների պատճառ է զառնում, որովհետեւ սուտ խօսելու ընդունակ է, և հեշտութեամբ էլ ամեն մի մոլութեան ենթարկում: Եւ՝ արդարե՛ ամեն մի լանցանք և ամեն մի մոլութիւն իւր մէջ պարունակում է ճշմարտութիւնն չլարգելու ձգտումն, որից առաջանում է և՛ սուտ խօսելու հակումն, ամեն մի մոլութիւն համարւում է ստութիւն, որի ժամանակ խղճմտանքը բռնաբարւում է, կեղծ շարժառիթները զլուխ են բարձրացնում և՛ ճշմարիտ բարիքի փոխանակ՝ կեղծ բարիք մատակարարում: Կարելի է ասել, որ մոլի մարդու ամրող կեանքը ստութեան անընդհատ շղթայ է համարում:

7). Որիշներին համարութիւն: Հոգու ալլ աղնիւ լատկութիւնը նորանից է առաջ գալիս, որ քրիստոնեան ճշմարիտ կերպով է մերձաւորներին սիրում: «Աէրը կատարելութիւնների կապ է», որը միացնում է մեղ՝ ինչպէս միմնանց, այնպէս և՛ Աստծու հետ (Կող. 3-₁₃) և մեղանից զորացնում Քրիստոսի մի խորհրդաւոր մարմին: Ինչպէս որ մարմնական օրգանիզմի մէկ անդամի հիւանդութիւնը ամբողջ մարմնի մէջ զգալի է լինում, այնպէս էլ մերձաւորների նեղութիւնները պէտք է ամեն մի քրիստոնեալ իւր սրտում զգալ: Ալլպիսի համակրութեան կենդանի պատկեր միզ տալիս են թէ ինքը՝ Յիսուս-Քրիստոսը, իւր երկրալին կեանքի և զործունեութեան առաջարիզում և թէ նորա ու առաքեալները: Պօղոս առաքեալը իւր մասին լաւանում է, — «Ստովին հմ ասում Քրիստոսի անունով և չեմ ստում (իմ խիղճո էլ ինձ Սուրբ հոգով է վկալում), որ ինձ հա-

մար մնծ տրտմութիւն է և իմ սրտիս ոչ—պակաս ցաւ: Ես ինքս կ'ինդրէի նղովուած լինիլ Քրիստոսից՝ իմ եղբայրներիս և աղջականներիս համար, որոնց հետ մարմնով մի ենք» (Հոռվմ. 9-₁₋₃): «Ո՞վ է տկարանում, որ ես չտկարանամ. ով է գայթակղում, որ իմ սիրամ չ'ալրուի» (Կորնթ. Բ. 11-₂₉): Ինքն ալդպէս լինելով, նա յորդորում էր և՛ բոլոր քրիստոնեաներին «ուրախանալ՝ ուրախացողների և լաց լինիլ—լաց եղողների հետ» (Հո. 12-₁₅):

Որդ ասաքինութեան հակառակ մոլութիւնները սոքա են՝ ա). Նախանձ: Նա ծագում է այն ժամանակ, երբ տեսնում ենք ուրիշներին քաղցանուր և իրանց վիճակից գոհ: Մենք՝ մեղ ալլ միմնոյն բաղդին արժանի համարելով՝ նախանձում ենք: Նախանձն ամենաթունաւոր ախտն է ոչ թէ միայն հոգու համար, որին նա միշտ անհանգստութիւն և վշտեր է պատճառում, այլ և՛ մարմնի համար, որի պատճառով և՛ նախանձորդները լինում են դժգուն և հիւծեալ: Նա մարդուս շատ մոլութիւնների է հասցնում—չարակամութեան, չարախնդութեան, ամբաստանութեան, նենդութեան, լափտակութեան, հալածանքի, սպանութեան, և այլն, և անթիւ թշուառութիւններ պատճառում մարդկաբին ցեղին: «Ուր որ նախանձ և կոիւ կալ, այնտեղ կ'լինի անկարգութիւն և ամեն տեսակ չար բան», ասում է առաքեալը (Յակ. 3-₁₆): Նա երեաց հէնց առաջին մարդոց ստեղծագործութեան օրից, որոնց երանութեանը նախանձեց սատանան, և՝ ամեն մի մարդու սրտի մէջ էլ ծծուելով, համարեամ մօր կաթի հետ, իւր չափը և սահմանը չի գանում՝ իրան բաւականութիւն տալու նպատակով: Ազդ մեղքի ծանրութիւնը ինքն ըստ ինքեան պարզ է: Աւելի գատապարտելի է այն նախանձը, որ մերձաւորների հոգեոր բարիքներին և Աստծուածակին չնորհքին է վերաբերում (Յովհ. Ա. 3-₁₁, եալլ): Աստծու պատուիրանի տասներրորդ պատուիրանը ալլ մեղքն արդելում է:

բ). Չ սրախնդութիւն: Սա միքանիսների մէջ երեւմ է մին ժամանակ, երբ մերձաւորին անբաղցած են տեսնում: Դատապարտելի է և՛ այն խնդութիւնը, երբ տեսնում են, օր. կալուածքը կորցնող անգութ հարստին, իրանց թշնամուն, ցանցի մէջ ընկած, որը նա ուրիշների բաժին էր համարում: Բայց աւելի գատապարտելի է այս, երբ խնդում են անմեղ, թէ մերձաւոր և թէ հեռաւոր մարդու քամբազութեան և թէ՝ նոցա ճամրիտ ճանապարհից շեղուելու վերալ: Աստծու Խօսքն ասում է. — «Չարագործների համար մի ուրախանար» (Յակ. 24-₁₉), «Քրիստոնէական սէրը անիրաւութեան վերալ չի խնդում» (Կորնթ. Ա. 13-₆):

շ). Մերձաւորին բարուելին անելու պատրաստակամութիւն: Ո՞վ կատ:

բող է տարակուսուիլ, որ մարդուս ընկերական պարտականութիւնուների մէջ առաջին տեղը բռնում են առատաձենութիւնը և բարերարութիւնը, որոնք միմանց քոյրեր են և մեզ էլ սովորեցնում են մեր նմաններին օգնել, Բարերարութիւնը մի քաղցր և գեղեցիկ փափագ է և երկնակին առաջինութիւն, որը մեզ լորդորում է մեր նմաններին օգնել, բարութիւն անել և օդտակար լինիլ. Մահկանացուն միայն բարերարութիւնով կարող է Աստծուն նմանուիլ բարերարը իւր երկնաւոր Հօր պատկերն է, Որ չի դադարում մարդկանց վերաբ առատ կերպով իւր բարերարութիւնները թափել, Ամենալինակիր պարզները, ասում է Պիթագորոսը, «որ երկինքը տուել է մարդկանց, նորա մէջ են կայանում, որ պէտք է ճշմարտութիւն քարոզել և ուրիշներին բարերարութիւն անել, որովհետեւ այդ երկուսն էլ Աստուածակին գործեր են»:

Քրիստոնէի ալդպիսի բարեկամեցութիւնը և բարեկործութիւնը քրիստոնէական սիրոյ բնական հետեանք է և արտաքարութիւնունչքան մարդու անկեղծութեամբ աւելի է սիրում իւր մերձաւորին, այնքան նա աւելի պէտք է բարութիւն և ամեն կերպ ողորմութիւն անէ նորան: Ալդպիսի առաջինութիւն է լորդորում մեզ և Յիսուս Քրիստոսը, ասելով.—«Դթած եղք, ինչպէս որ ձեր Հաւրն էլ զթած է» (Ղուկ. 6-₃₆), «Բարութիւն արեք և փոխ տուեք՝ առանց փոխարէնը սպասելու, որի պատճառով ձեր վարձքը կաւելանալ և դուք էլ Բարձրեալի որդիք կ'լինիք, որովհետև Նա ապերախտների և չարերի բարերարն էն: Յիսուս-Քրիստոսը ինքն էլ կ'ըր երկրաւոր կեանքում ամեն ժամանակ տմենին բարութիւն է արել: Մենք՝ ինչպէս որ Աստուածակին զթութիւնն ստանում ենք, այնպէս էլ պէտք է զթութիւն ցոյց տանք և մեր մերձաւորին: Աստուած բարի է և ողորմած բոլորի համար:—«Նա իւր արել ծագեցնում է թէ չար և թէ բարի մարդոց վերաբ և անձրեն էլ ուղարկում է թէ արդարներին և թէ մնջաւորներին» (Մատթ. 5-₄₅): Դժուար է Աստծու բոլոր մարդկակին ցեղին արած բարեգործութիւնները հաշուիտակ առնել:

Աստծու ողորմութեան և բարեգործութեան նման, մեր ողորմութիւնը և զթութիւնն էլ պէտք է բոլոր մարդոց գրկէ՝ թէ՝ ծանօթի և թէ՝ անձանօթի, թէ՝ բարեկամի և թէ՝ թշնամու: Առաջին Գերագոյն Օրէնսդիրը, մարդկակին ընկերութիւնը հաստակելու ժամանակ, մեզ իրար համար ստեղծեց, և այս այնպիսի ստոլդ ճշշմարտութիւն է, որ հին երեսելի երկու փիլիսոփաները՝ Պլատոնը և Արիստոտէլը՝ կարողացան գորան հասկանալ միայն իմաստու-

թեան լուսով: «Մենք», ասում են նոքա, «մեզ համար չենք ծնուած: Հայրենիքը, ծնողները, բարեկամները և առհասարակ՝ ամեն մարդ մեզ վերալ արդար իրաւունքներ ունին և ինչպէս միւս բոլոր բաները մարդուս համար են եղած, այնպէս էլ մարդիկ մէկը միւսի համար են ստեղծուած, որպէսզի փոփոխակի իրանց պէտքերի մէջ իրար օգնեն: Ուստի՝ այս բանի մէջ մենք պէտք է բնութեան արդար զիտաւորութիւններին հետեւնք և աշխատենք մեր կարողութիւնից հասարակութեաններին աւելի բարիք մատուցանելի ինչպէս տալով և ընդունելով, այնպէս և հաստատելով միշտ ընկերութեան լով անդունելով, այնպէս և հաստատելով միշտ կարող կապերը այն տեսուկ բարերարութիւններով, որոնց մենք կարող ենք անել: Բայց ինչ բան է մեր ողորմութիւնը և բարեգործութիւնը, որ պէտք է մերձաւորին ցոյց տանք: Մեր Տէր Յիսուս-Քրիստոսը մերձաւորներին օգնելու համար լորդորում է՝ կերակրել քաղցածներին, լազգեցնել ծարաւածներին, հազցնել մերկերին, ընդունել օտարականներին, խնամք տանել հիւանդներին, ալցելով և ամեն կերպ աջակցութիւն ցոյց տալ բանտարկուածներին (Մատթ. 26-₃₄₊₃₆): Միայն թէ՝ ալդ բոլոր տեսակներով չի վերջանում քրիստոնէական բարեգործութիւնը: Ալստեղ Յիսուս-Քրիստոսը, փոխանակ ողորմութեան և բարեգործութեան մասին կազմած ընդհանուր զաղափարի, նորա մսանաւոր նշաններն էլ է առաջ բերում, համաձայն այն ժամանակուալ պայմանների: Քրիստոնէական բարեգործութիւնը, ինչպէս երեսում է վերե լիշածից և թէ՝ Յիսուս Քրիստոսի ուրիշ շատ խրատներից (Ղուկ. 10-₂₅₊₃₇, Մատթ. 5-₄₄, 6-₁₄, 10-₇₊₈, 40-₄₀₊₄₂), նոյնպէս և՛ նորա կեանքի օրինակից՝ պէտք է այնքան ընդարձակ լինի, ինչպէս որ ընդարձակ են մեր մերձաւորների կարիքները և, որովհետև վերջինները, իրանց շատութեամբ և զանազաներպութեամբ չեն կարող հաշուի տակ առնուիլ, ալդ պատճառով՝ բարեգործութեան տեսակներն էլ, ինչպէս և նորա չափը և աստիբարեգործութեան մասը, ճշտութեամբ չեն կարող որոշուիլ: Ճշմարիտ քրիստոնեան պէտք է միշտ բարեգործութիւն անէ, ինչով որ կարող է թէ՝ նիւթապէս, թէ՝ հոդեպէս, այն էլ ոչ թէ աւելորդ եղած տեղը, ալլ և իւր պակասութիւնների կամ աղքատութեան ժամանակ, եթէ մէկն աղքատին չի կարող նիւթապէս օգնել, նա թող բարեգործութեան միւս միջոցները մտքից չ'հանէ, մանաւանդ մերձաւորի մասին: Ով համոզմունքով, կեանքի բարի օրինակով և չերմնուանդ աղօթով իւր մերձաւորի այս կամ կրքի ստրկութիւնից աղքատութեան կ'աջակցէ, կամ զալթակցուած հոգին Աստծուն կ'վերադարձնէ, նա աւելի շատ բան կ'անէ թէ՝ իւր և թէ՝ մերձաւորի

օպտին, քան թէ ուրիշները: Եթէ նա և՝ ալս չի կարող անելը թող իւր անբաղդ եղբարներին իւր ծառալութիւնը մատուցանէ ուրիշ կերպ, ինչով որ կարող է: Երուսաղէմի տաճարի գանձանակատուփը ճգած այրի կնոջ լուման աւելի գին ունէր Փրկչի աշքում, քան թէ հարուստների առած զոհաբերութիւնները (Ղուկ. 21-₃): «Ովայս փոքրերից մէկին մի գաւաթ պարզ ջուր կ'խմեցնէ», ասաց Փրկչը, «ու իւր վարձքը չի կորցնել» (Մատթ. 10-₄₂): Աստուած մեղանից անհնարին բան չի պահանջում, հետեապէս մենք էլ պէտք է մերձաւորի համար անենք այն, ինչ որ կարող ենք: Ողորմութիւն և բարեգործութիւն անելու աննման օրինակ են տալիս մեր Բագրատունեաց թագաւոր Աշոտ Ողորմածը և նորակին Խոսրովանոլչը, որոնք բոլոր աղքատներին և թշուառներին մըշտ օգնութիւն էին հասցնում իրանց արքայական գահուքից: Այստարերութիւնը, անզգայութիւնը և անզթութիւնը ալդ առաքինութեան հակառակ մոլութիւններն են համարում: Նոքա մարդուս մէջ առաջ են գալիս այն ժամանակ, երբ մերձաւորին ցուց տալու սէրը կմմ պակասում է և կամ բոլորովին ոչնչանում: Յիսուս-Քրիստոսը «Ողորմած Սամարացու» (Ղուկ. 10-₂₀₋₃₂), «Անգութ պարտապանի» (Մատթ. 18-₂₃₋₃₅) և «Հարատի ու Վաղարի» առակներով մեզ պարզ ցուց տուեց այդ մեղքերի ինչպէս ծանրութիւնը, այնպէս և նոցակործանիչ հետեանքները:

Դ). Անպատութիւն: Յիսուս-Քրիստոսի պատուիրանով քրիստոնէի սէրը պէտք տարածուի և մեր թշնամիների վերալ, որոնք նախանձից դրդուած՝ աշխատում են մեզ մի որ և է չարութիւն, վնաս, կամ անպատութիւն հասցնել. «Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարութիւն արեք նոցա, որոնք ձեզ ատում են, և աղօթք արեք նոցա համար, որոնք ձեզ չարչարում են և հալածում» (Մատթ. 5-₄₄): «Որովհետեւ, բացատրում է Տէրը, և թէ զուք ձեզ սիրողներին սիրէք, ինչ վարձք կունենաք. չը որ մաքսաւորներն նոյնն են անում. իսկ եթէ միայն ձեր եղբայրներին բարե տաք, ուրիշներից ինչ կը լինիք աւելի արած. չը որ հեթանոսներն ես նոյն կերպ են վարում» (Նոյն 46,47): Ձշմարիտ քրիստոնեան, ի հարկէ, պէտք բարուապէս բարձր լինի, ինչպէս մեղաւոր համարուած մաքսաւորներից, այնպէս և հեթանոսներից: Քրիստոնէի սիրալ և նորա եղբայրական համակրութիւնը պէտք է տարածուի նոյն իսկ նորա թշնամիների վերալ, որոնք Աստծու պատկերի նման են ստեղծուած, Յիսուս-Քրիստոսով փրկուած և յաւիտենական երանութեան համար նշանակուած: Ալգակիսի սիրուց

դրդուած՝ նա ուրախութեամբ պէտք է թշնամուց իրան հասցրած անպատութիւնը ներէ, նորա հետ հաշտուի, անհամաձանութեան բոլոր պատճառները հեռացնէ և չարութեան փոխարէն էլ բարութիւն անէ: Ալգակիսի սէրը և թէ համակրութիւնը մեր թշնամիների մասին ամենազօրեղ և միակ միջոցն է, որով կարող ենք նոցաւազթել: Զարը չարութիւնով չի կարելի չաղթել: Անպատութիւն ստացած մարդը, անպատուղին վիրաւորելով, իւր վէրքը չի կարող բժշկել և սոսիի թշնամութիւնը ոչնչացնել. ընդհակառակը, նա դորանով նորա չարութիւնը կ'զօրացնէ և նոր անպատութիւն առաջ կը բերէ: Այն ինչ, թշնամուն ներելով, նա նորան իւր սիրով է ջերմացնում, կոշացած սիրտը կաղեցնում և չարին էլ չաղթում: Դորա ծշտութիւնը շատ պատմական օրինակներ կարող են հաստատել (Ծննդ. 33-₄. Թագ. Ա. 25 ՀՀ 26 21 և ուրիշները): Ալգակիսի սէր է քարոզում և մեր Տէր Յիսուս-Քրիստոսը իւր օրինակով: Խաչի վերալ եղած ժամանակի, ամենասարսափելի տանձանքների միջոցին, նա իւր թշնամիների համար ազօթեց, ասելով.—«Հայր, ներին նոցա, որովհետև չեն հասկանում, թէ ինչ են անում» (Ղուկ. 23-₃₄): Բայց և ալնպէս՝ աւետարանական ներողամտութեան պատուիրանով քաղաքացիական և եկեղեցական օրինքների ոլժը այնքան էլ չի նսեմանում, որոնց օգնութեանը պէտք է գիմէ քրիստոնեան իւր անձնական իրաւունքները, բարի անունը կամ նոյն իսկ կենաքը պաշտպանելու ժամանակի: Միայն թէ ամենից առաջ, զեռ ալդ միջոցին չ'զիմած, նա պէտքէ ուրիշ շատ համեստ միջոցներ զործածէ: կամ իւր թշնամու հետ հաշտուելու և կամ նորա թշնամական գործողութիւնները կապելու համար: Աւելի խիստ միջոցների դիմել կարելի է միայն այն ժամանակի, երբ այդ վերջնական միջոցները անիրագործելի կ'համարուին:

Անպատութիւնը ներող վերորիշեալ պատուիրանին հակառակ է համարւում վրէժխնդրութիւնը, իբրև մոլութիւն, Դա մարդուս չար կամքի ամենասարձր զարգացումն է, որը ծագում է այն ժամանակ միայն, երբ նախանձը և թշնամութիւնը սաստիկ զօրանում են և այն աստիճանի համարում, որ նորա բոլոր որիերը նորան գրգռում են մի ուրիշ անձի դէմ: Վրէժխնդրութեան առիթ տուողները զորել կրքերն են: Վրէժխնդրութիւնը լինում է չ'մտածած և մտածած: Առաջինը ծագում է այն ժամանակի, երբ բարկանում ենք և զարացրողն, ընդհակառակը, ալգակիսի զզումից զորկ լինելով, չարարորդն, ընդհակառակը, ալգակիսի զզումից փրկուած և յաւիտենական է առաջ բերում: Հոգու աղնուութիւնը և ձշմարիտ մե-

ծութիւնը երեսում է ներելով և ոչ թէ վրէժխնդիր լինելով։ Ազնիւ հոգին երեք վրէժխնդիր չ'պէտք է լինի։ Արհամարհանքներին-վրէժխնդիր չ'լինելը վատութեան և անզօրութեան նշան չի կարող համարուիլ, ալլ, ընդհակառակը, մեծ քաջասրտութեան ցոյց, որով հետեւ, իւր անձին լաղթելը և վրէժխնդրութեան կրքի սանձահարերելը ամեն լաղթութիւնից դեղեցիկ է, և ինչքան որ ալդ լաղթութիւնը դժուար է; այնքան էլ նա փառաւոր է։ «Համբերող մարդը», ասում է Սոլոմոնը, «գովելի է, քան թէ արիասիրութ. և ով որ իւր անձին տէրն է և գիտէ իւր որտին հրամակել, նա աւելի մեծ է, քան թէ ան մարդը, որ քաղաքներ առնել դիտէ»։

Վրէժխնդրութիւնը, իրեւ չարութեան վարձատրութիւն, միայն Աստծուն է պատկանում։ «Վրէժխնդրութիւնն իմս է. Ես պիտի հատուցանեմ», ասում է Տէրը (Հռովմ. 12₁₉). Համեմատ. Ծննդ. 18-₂₃ Սաղմ. 7₉₋₁₂): Մարդոց մէջ ալդ իրաւունքը պատկանում է միայն այն անձանց, որոնք բարձրագոյն օրինական իշխանութիւն ունին (Հռովմ. 13-₄): Իսկ մնացածների համար՝ բարուտկան օրէնքով քաջալերուած՝ միակ վրէժխնդրութիւնն այն կ'լինի, որ նոքա իրանց թշնամու հետ մեծահոգութեամբ վարուին և չարը բարութեամբ լաղթեն։—«Եթէ քո թշնամին անօթի է՝ հաց տուր նորան, եթէ ծարաւ է, ջներ տուր և ալդպիսով նորա զլիսին կրակէ կածակներ կ'թափեն» (Սոլոմոն իմաստուն, կամ Մատթ. 5-₃₈ և ալլն, Համեմատ. Ղուկ. 6₁₂₇₋₁₃₀. Հռովմ. 12₁₇₋₁₈)։

ՄԵՆԱՄԱՐՑՈՒԹԻՒՆ:

Երբեմն պատահում է, մանաւանդ աշխարհական զասակարգում, որ մարզս ինքն իրան և կամ մի ուրիշ իրան սիրելի անձին ուրիշից անպատուած համարելով, անպատողին մենամարտութեան է կանչում՝ իւր չօշափած պատիւը վերականգնելու նպատակով։ Իսկ ալդ վերջինը, երկշոտ անունը կրելուց կամ մարդոց կողմից արհամարհանք ստանալուց ամաչելով, հրաւերն ընդունում է, նւ ահա սոքա՝ վիաների ներկալութեամբ, մրմիանց հետ մարտընչում են մահաբեր զէնքերով։ Ալդպիսի կռիւը մենամարտութիւն է կոչում։

Բայց միթէ դորանով խանգարուած պատիւը կ'վերանորոգուի, եթէ՝ մինչեւ անզամ՝ իրականապէս անպատութիւնը եղած էլ լինի։ Ոչ ճշմարիտ պատիւը բոլորովին դորան կարօտ չէ, որովհետեւ դորա համար աշխարհիս բոլոր երկրներում, և մինչեւ անզամ աղզերի

մէջ ալդպիսի օրէնքներ կան, որոնցով պաշտպանում են անմեղ մարդու պատիւը և պատժում անպատողին, Կողմնակի կերպով մենք ևս կարող ենք մեր պատիւը պաշտպանել, այն էլ ոչ թէ մանամարտութեամբ, այլ առաքինի կեանքով և բարեպաշտութեամբ, ինչպէս խորհուրդ է տալիս Պետրոս առաքեալը (Պետ. Ա. 2₁₂₋₁₅): Ալդպիսի ինքնապաշտպանութեան օրինակ է չնորհում մեզ և՛ Յիսուս-Քրիստոսը, Որ իւր հակառակորդներին պատուխան տառ և համար իւր արած բարի գործերն է առաջ բերում և հարցնում «Ո՞ր գործի համար էք ինձ կամենում քարկոծ անել» (Յով. 10-₃₁₋₃₂):

Քրիստոնէական հայեցակետից՝ մենամարտութիւնը ամենամեծ քանցանք է։ Աստծու Խօսքը երանութիւնն է խոստանում նոցա, որոնք համբերութեամբ և մեծահոգութեամբ են տանում ամեն տեսակ նախատինքները, չարախօսութիւնները և հալածանքները Մատթ. 5₁₁): Նա մինչեւ անզամ պատուիրում է—«Եթէ որ մէկն ապատակ խիէ աջ ծնօտիդ, դարձրու նորան և՛ միւսը» (Մատթ. 5-₃₉): Աստծու Խօսքն ասում է, որ մեր պատիւը ոչ ոք չի կարող ստորացնել, որովհետեւ նա հոգեկան գանձ է և թէ իդուր առաջ եկած անպատութիւնը, որ մենք մեծահոգութեամբ ենք տանում, մեր փառքն է կազմում և մեր ապազիյ վարձատրութիւնը մեծացնում (Կորնթ. Բ. 4₁₆₋₁₈), որ ոչ ոք իրաւունք չունի իւր վրէժը հանել, որովհետեւ դորա համար Աստծուց նշանակուած երկրալին իշխանութիւններ կան (Հռովմ. 14-₄), և բացի դորանից, ինքն Աստուած վրէժխնդիր է այն մարդոց, որոնք չարութիւն են անում և խարդարակութիւններ սարքում (Ղուկ. 18-₇, Հռովմ. 12-₁₉):

Ալդ պատճառով՝ մենամարտող անձինք, որոնց անխուսափելի մաս է սպառնում, երեք տեսակ սարսափելի մեզք են գործում՝ 1) իշխանութեան դէմ խռովութիւն, 2) սպանութիւն և 3) ինքնասպանութիւն։

Քրիստոնէի ՄԱՍՆԱԿՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱ-
ԿՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ,

ՆՈՅԱ ՄՏՔԻ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ:

Ինչպէս որ քրիստոնէի մասնաւոր պարտականութիւնն է իւր հոգեոր բարուական կրթութեան մասին հոգակ, այնպէս էլ նա մեծ ուշագրութիւն պէտք է դարձնէ և՛ իւր մերձաւորների վերաբ. Մենք ամենից առաջ պէտք է հոգանք, որ նոցա միտքը լուսաւորուի այս-

պիսի ճշմարիտ գիտութիւններով, որոնք առաւելապէս հաւատին են փրկութեանն են վերաբերում, և արմատահան լինին ու ուղղուին ան գալթակզութիւնները, որոնք նոցա զարգացմանը և կատարելութիւններին արգելք են լինում: Թէկ մերձաւորների լուսաւորութեան զլսաւոր պարտականութիւնը եկեղեցու հոգեոր հովիւների վերալ է ընկնում, բայց և այնպէս՝ Աստծու Խօսքը ոչ ոքի չի արգելում, այլ՝ մինչև անգամ՝ դրականապէս պահանջում էլ է, «ր նա նորա իմաստութիւնից կարողանաւ իւր փրկութեան համար օգտուիլում»: Պողոս առաքեալն ասում է. — «Թող Քրիստոսի Խօսքը ամեն տեսակ իմաստութիւնով առատապէս ձեր մէջ բնակուի՝ իրար սովորեցնելու և խրատելու համար» (Կող. 3-16): Դորանից երեսում է, որ այդ մեծ գործը իւր վերալ պէտք է վերցնէ նա, ով Քրիստոսի հաւատի փրկարար ճշմարտութիւնների մասին բաւականին գիտութիւն ունի, ալլապէս՝ «կոլը կոլիին առաջնորդելով՝ երկուսն էլ փոսը կ'ընկնին» (Մատթ. 15-15): Դորա հետ միասին էլ պէտք է միշտ Աստծուն խնդրել, որ նա իւր ուսումը լսողների «բանականութիւնը լուսաւորէ» (Եփ. 1-17, համ. Առակ. 2-է): Յետոյ՝ հաւատի և բարոյականութեան այս և այն ճշմարտութիւններն աւանդելով, նա պէտք է համակերպուի ունկնդիրների զարգացման աստիճանին: Վերջապէս, ուրիշներին սովորեցնելու ժամանակ, նա պէտք է հաստատ պահէ Աստծու Խօսքի ուսումը և այնպէս կանոնաւոր բացատրէ, ինչպէս եկեղեցին է ընդունում, հեռու մնալով զանազան գեռես չ'հաստատուած նոր կարծիքներից, որպէսզի՝ լուսաւորութեան փոխանակ, նոցա մէջ թիւրիմաստ գիտութիւններ չ'հաստատուին:

ԱՐԵԳՈՂԻՈՐԾԵՐԻ ԿԱՄՔԻ ԵՒ ՍՐՏԻ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Մտքի լուսաւորութեան հետ միասին պէտք է հոգալ և կամքի ու սրտի կրթութեան մասին, աշխատելով նոցա բարոյականութիւնը զարգացնել և կատարելազործել սկզբանից և մոլութիւնից հեռացնել: Աստծու Խօսքը մեզ պարզ կնկապով ալի պարտականութեան մասին է մատնացոց անում: — «Միմեանց միմիթարեցէք և իրար էլ սիրտ տուէք, ինչպէս որ անումնէք» (Թեսադ. Ա. 5-11): Դոցա միջոցներն են բարոյական կանոնները, և խրատները, որոնք պէտք է լաւ օրինակներով հրահանգուին: Յիսուս-Քրիստոսն ասում է: — «Թողարկ ձեր լուսը մարդոց առաջ անպէս լուս տայ, որ ձեր բարի գործերը տեսնեն և ձեր Հօրը փառաւորեն, Որ երկնքումնէք, բայց ով կ'անէ և ով կ'սովորեցնէ, նա էլ երկնքի արքայուն:

թեան մէջ մեծ կ'կոչուի» (Մատթ. 5-_{16, 19}): իրան օրինակ վերցնելով՝ նա հետեւեալ պատուէրն է տալիս. — Ձեղ մէկ օրինակ տուի ինչպէս որ նո արեցի, այնպէս էլ դուք արէք» (Յով. 13-₁₅): ծշմարիտ ճանապարհից հեռացողներին մենք պէտք է եղալ բարձրաբար խրատենք, յանդիմանենք և ուղղենք: Այդ բանը սովորեցնում է մեղ Խնքը՝ Յիսուս-Քրիստոսը. — «Եթէ քո եղբարդ քո զէմ մեղանչէ, գնա՞ և յանդիմանիր նորան, երբ որ դու և՛ նա միարնակ կ'լինիք. եթէ նա քեզ լսէ, դատար եղբօրդ. իսկ եթէ քեզ չ'լըսէ, հետդ մէկ կամ երկու ուրիշ մարդ էլ վերցրն, որովհետեւ երկու կամ երեք վկաների բերանով ամեն բան կ'հաստատուի» (Մատթ. 18-_{15, 16}):

Բնտիր բարոյականութիւնն տարածելու և հաստատելու վերելիշած միջոցները կարելի է գործ ածել առանձնակի, և միասին, նաև լովլ, թէ՝ կրթողներն Բնչ հասակի, Բնչ սեռի և Բնչ բարուականութեան տէր են, և թէ՝ տեղի կամ ժամանակի վերաբերեալ Բնչ հանգամանքներ ունին: Ենչպէս որ մարմիններին միակերպ դեղ և միակերպ կերակուր չեն տրւում», զրում է Ս. Գրիգոր Աստուածաբանը, «այնպէս էլ հոգիները զանազանակերպ են բժշկում: Միքանիսներին ազդում է խօսքը, միւսերն ուղղում են օրինակով: Միքանիսներին հարկաւոր է խարազան, իսկ միւսերին՝ սահճ: Միքանիսների մէջ պէտք է ամեն բան մանրամասն գննել, մինչև անզամե՛ ամենաչնչին դորձերը, իսկ միւսերի մէջ՝ աւելի լաւ է՝ ուրիշ բան էլ չ'նկատել: Միքանիսների համար լաւ է և օգտակար մէկ բանը, իսկ միւսերին՝ մի ուրիշը: Նախելով, թէ՝ ինչպէս կարծում եմ, ինչպէս է պահանջում ժամանակը և հանգամանքները, և թէ Բնչ պէս է թոյլ տալիս բժշկովի բարքը»:

Այդ պարտականութեանը հակառակ է գայթակղութիւնը: Գալթակղութեան տեսակները շատ զանազան են: Ոչ թէ միայն մեր խօսքերը և արած զործերը, այլ և նոյն իսկ մեր տեսքը, մարմնի շարժումները, հանգերձը, արտաքին դրութիւնը՝ և այլն՝ կարող են ուրիշներին մեղք զործելու առիթ դառնալու Բաց ինչ տեսակի էլ գայթակղութիւնը լինի՝ այնուամենալիւ՝ նա լանցանք է, միայն թէ նորա լանցանք լինելու աստիճանը զանազան է լինում, նաևելով, թէ՝ ով է գայթակղեցնողը, ում և ինչի՞ մէջ: Գալթակղութեան մեծ լանցանքն ընկնում է նոցա վերակովակ (ով ուրիշների զլուխ է կանգնած և ինքն էլ համարում է երկրի աղ և աշխարհի լուս. բ) ով իւր գայթակղութեամբ շատ մարդոց հոգիներ է փչացնում, կամ թէ ապականում անարատութիւնը և մաք-

րութիւնը, և դ) ով, վերջապէս, իւր գալթակղութեամբ նոյն իսկ հաւատի և բարուականութեան հիմունքներն է խախտում և դորանով ուրիշներին վնասում. Ամեն մի գալթակղեցնող Քրիստոսի առաջ լանցաւոր է (Կորնթ. Ա. 8-₁₂), որովհետեւ նա վնասում է նոցա, որոնց համար Քրիստոս մեռաւ (Հոռվմ. 14-_{15, 12}): Գալթակղութիւնը հոգեկան սպանութիւն է, որը մարմնական սպանութիւնից աւելի զօրեղ է, ինչքան որ հոգին բարձր է մարմնից. Ուստի և՝ զորապատիժը պէտք է ամենածանրը լինի: Փրկիչն ասում է. «Ով այս փոքրերից մէկին, որոնք ինձ հաւատում են, կ' գալթակղեցնէ, լաւ կ' լինի, որ այդպիսին իշխ երկանաքարը պարանոցից կախէ և ծովի անդունդն ընկնի» (Մատթ. 18-₆).

ՄԵՐՁԱԼՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԵԽ ԿԵԼՆՔԻ ՄԱՍԻՆ ՀՈԳԱՅՈՂՈՒԹԻՒՆ:

Որովհետեւ մեր հոգին կարող է զարգանալ և կատարելազոր-ծուիլ միան մարմնի հետ միասին և խաւատենական կեանքում վար-ձատրութիւն ստանալ նորա համար, թէ՝ ինքն իւր մարմնի մէջ ինչ բարութիւն և չարութիւն է արել, քրիստոնեան, մերձաւորների հո-գու մասին զբաղուելով, պէտք է հոգալ Ե' մերձաւորների մարմնա-կան առողջութեան և կեանքի մասին: Ալդ բանը մեզ լորդորում է նոյն իսկ մեր Տէր Յիսուս-Քրիստոսը իւր օրինակով և խօսքով: Իւր երկրափին կեանքի մէջ նա բժշկում էր մարդոց բոլոր հիւան-դութիւնները և մարմնական տկարութիւնները (Մատթ. 2-₃₅, Յովհ. 4-_{46, 39}, 5-₉, և ուրիշները), ուրիշներին էլ պատուիրում էր ամեն բան անել մերձաւորների առողջութեան և կեանքի համար, ինչ որ անհրա-ժեշտ է (Մատթ. 25-_{45, 44}, Համ. Դուկ. 10-_{33, 37}): Ալդ պատճառով՝ մեր եկեղեցում հաստատուեց «հիւանդներին ալցելելու» խորհուրդը: Ալդ պարտականութեան մասին հոգալով, մենք պէտք է, մի կողմից՝ նոցա-տանք բոլորը, ինչ որ հարկաւոր է նոցա մարմնական օրգանիզմը զար-գացնելու և կազզուրելու համար—որոնք են՝ կերակուրը, խմնիքը, հանդերձը, բնակարանը, և այլն, իսկ՝ միւս կողմից, պաշտպանել այն բոլորից, ինչ որ կարող է նոցա առողջութեանը և կեանքին վնաս տալ օրինակ—իւր կանգնեցնել անչափաւոր կեանքից, ազա-տել նոցա կեանքին սպառնացող վտանշից, հիւանդների առողջա-նալուն օգնութիւն հասցնել, և այլն: Դորա ընտիր օրինակը մեզ տալիս է Յիսուս-Քրիստոսը «Ողորմած Սամարացու» առակով, որի

իմաստով մեղանից ամեն մէկին հասկացնում է և ասում.—«Գնա և զու նոյնն արա», (Ղուկ. 10-_{36, 37}):

ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՑԱԼՈՐՈՒԹԻՒՆԸ.

Միայն Աստուած է մարդուն կեանք տուողը (Երկր. 32-₃₉), հետեապէս՝ նա միայն կարող է զորան իւտ առնել նորանից: Ալդ պատճառով, սպանութիւնն ուղղակի արգելում է Աստուածալին օրէնքի վեցերորդ պատուիրանով: Սուրբ Գիրքը նորան ծանր լան-ցանք է համարում, ուստի և՝ Աստծոց վրէխնդրութիւն է պա-հանջում.—«Քո եղբօր արեան ձանը զետնից ինձ բողոքում է», ա-սաց Աստուած Կալենին, որ Արէլին պալանեց (Ծննդ. 4-₁₀): Ս. Յովհանն Աստուածաբանը սպանողների լաւիտենական վիճակի մա-սին վկալում է, որ «նոքա լաւիտենական կեանք չունին» (Յովհ. Ա. 3-₁₅) և թէ՝ «նոցա բաժինը կրակով և ծծմբով վառած լիի մէջ պէտք է լինի» (Յակո. Յովհ. 21-₈): Արդարադատ Աստծու դատաս-տանը անպատիժ չէ թողնում սպանողին և՝ այս կեանքում, որով-հետեւ խղճմտանքը նորան իւր խալֆոցներով տանջում է և մաշում: Սպանութեան մէջ մեղաւոր են ոչ թէ միայն նոքա, որոնք ուղղակի, չար նպատակով, ուրիշին կեանքից զրկում են՝ կամ զէն-քով, կամ թունով, կամ մի ուրիշ միջոցով, ալլ և՝ նոքա, որոնք կողմնակի կերպով կարող են մերձաւորին կեանքից զրկելու գործո-զութեան վերաբ աղքեցութիւն անել, օրինակ—երբ դատաւորը մե-զագրում է այն մարդուն, որի անմեղութիւնն իրան լայտնի է, երբ մէկը սպանողին թաղցնում է կամ աղատում և զորանով ուրիշ սպա-նութիւնների առիթ տալիս. երբ մէկը կարող է իւր մերձաւորին մահից ազատել, բայց չի ազատում, օր. եթէ հարուսաը թով է տա-լիս աղքատին սովից մեռնելու, եթէ մէկն ուժից վեր և խիստ պա-տիժներով ստորագրեալներին ձնչում է և զորանով նոցա մահն ա-րագացնում: Դորան վերաբերում են և ամեն տեսակ անպատւու-թիւնները, որոնք մերձաւորին հասցնուում են բարկութեան, ատե-լութեան, նախանձի և չարութեան աղղեցութեան տակ: Ալդ ան-պատւութիւնները, մարդուն լուսահատեցնելով և վշտացնելով, առողջութիւնը խանգարում են և կեանքն էլ կարձացնում: Ալդ պատճառով՝ Յիսուս-Քրիստոսը ամեն մարդուն, որ զուր տեղն իւր եղբօր վերաբ բարկանում է իբրև սպանութիւն—դատաստանի ար-ժանի է համարում (Մատթ. 5-₂₂). իսկ Առաքեալն էլ մարդասպան է անուանում նորան, ով որ իւր եղբօրն ատում է (Յովհ. Ա. 3-₁₅):

Միայն սպանութեան, մէջ մեղաւոր չէ համարւում նա, ով ուրիշն մահ է պատճառում կամ պարտականութիւնից և կամ անհրաժեշտութիւնից դրդուած, օր. երբ լանցաւորին մահ են որոշում արդարադատութեան վճռով, թէն այդ էլ պէտք է վերջացնել— կամ երբ պատերազմի ժամանակ հայրենիքի թշնամուն կոտորում են միայն նորա պաշտպանութեան և փրկութեան համար, որովհետեւ՝ Փրկչի ասելով՝ «ուր վերցնողները սրով էլ կ'ոչնչանան» (Մատթ. 26-₂₅).—«Զուր տեղը չէ, որ մէջքին թուր է կապել, որովհետեւ Աստծու սպասաւորն է և վրէժխնդիրը—պատժելու նորան, ով որ չար բան է անում» (Հոռվմ. 13-₄) և վերջապէս՝ նա, ով սպանութիւնը անակնկալ կերպով է կատարել, Բայց և այնպէս՝ անակնկալ սպանութիւն անողն էլ եկեղեցու օրէնքով, եկեղեցական ապաշխարութեան է ենթարկում իւր խղճմտանքը մաքրելու համար!

ՄԵՐՁԱՒՈՐԻ ՊԱՏՌՈՒԻ ԵՒ ԼՈՒ ԱՆՌԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԴՍՅՈՂՈՒԹԻՒՆ:

Մեր անձնական պատով զբաղուելով, պէտք է նոյն հիմունքներով և նոյն շարժառիթներով մեր զբաղմունքների առարկայ զարձնենք և մեր մերձաւորների պատիւը և լաւ անունը: Դորա համար ոչ թէ միայն մենք պէտք է մերձաւորին պատշաճաւոր լարգանք տանք (Հոռվմ. 12-_{10,12,17}), ալ և այնպէս պէտք է անենք, որ ուրիշներն էլ նորան արժանի պատիւը տան: Յիսուս-Քրիստոսը ուշագրութիւն դարձեց մինչև անզամ լալտնի մեղաւորների վերայ (Յով. 8-₁₁): Եթէ պատիւը և լաւ անունը կասկածանքի, կամ ծաղրի և կամ նախատինքի է ենթարկում, այն ժամանակ նա պէտք է նորան համարձակ կերպով պաշտպանէ, ինչպէս որ վարուել են, օր. Յովհաննէս Մկրտիչը (Յով. 3-₂₅₋₃₆) և Նիկոդիմոսը (Յով. 7-₅₋₅₃): Մինչև անզամ այնպիսի դէպքերում, երբ ծաղը իրական պակասութիւններին է վերաբերում, նա, մարդկային թուլութիւններին զիջանելով, պէտք է նոցա նշանակութիւնը պակսեցնէ և դորանով անարգանքի ոլոր թուլացնէ:

Մերձաւորների պատուի և լաւ անուան մասին ունեցած պարտականութեանը հակառակ են—պատապարտութիւնը, չարախօսութիւնը և ամբաստանութիւնը:

1). Մերձաւորներին զատապարտելը ամենասովորական մուռթիւնն է համարւում, որը զանազան պատճառներից է առաջ գալիս՝ նախանձից, ատելութիւնից կամ թեթեամտութիւնից և իւր

վերայ պակաս ուշագրութիւն դարձնելուց: Մերձաւորին անպատուելով, ուրիշների մեղքերը զատապարտող անձնաւորութիւնը իրաւունքը: «Միան մէկ Օրէնսդիր կալ և Դատաւոր, Որ կարող է փրկել և կորցնել գուն ո՞վ ես, որ ուրիշին զատում ես» (Յակ. 4-₁₁): Յաճախի ինքնակոչ զատապարտում է նորան, ում մեղքը որ վաղուց արդէն ճշմարիտ ապաշխարութեամբ քաւուած է, ուստի և դորանով նա Աստծու զատաստանին հակառակ է կանգնում: Վերջապէս, այդ մոլութիւնը վեասում է և նոյն իսկ զատապարտողին, որ արգելում է դորան իւր անձնական պակասութիւնները հասկանալու և նոցա ուղղելու մասին հոգալ: Յիսուս-Քրիստոսը ասում է.—«Մի դատէք, որ չ'դատուիք»: «Ի՞նչպէս է, որ քո եղքոր աչքի միջի շիզը տեսնում ես, իսկ քո աչքիդի միջի գերանը չես տեսնում» (Մատթ. 7-₁₋₃)

2). Զարախիսութիւնն ուրիշների մէջ միշտ վատ կողմն է որոնում, իսկ ինչ որ բարի է, ուշագրութիւնից անց է կացնում և որպէս թէ չի էլ նշմարում: Դորա պատճառը, մեծ մասամբ, զանըւում է նախանձի և ատելութեան մէջ, ուստի և զա աւելի մեծ յանցանք է, քան թէ զատապարտութիւնը:

3). Աւելի ծանր մեղք է և ամբաստանութիւնը, երբ զիտմամբ մերձաւորի մասին ճիշտը չեն ասում՝ նորան զատապարտել տալու նպատակով: Այդ լինում է կամ զատարանում՝ գործը քննելու ժամանակ, —կամ դորանից դուրս, երբ ամբաստանում են մէկին և անարդար կերպով նախատում՝ կամ իրան երեսին, կամ բացակայութեան ժամանակ:

Մեղքերի վերև լիշած բոլոր տեսակները՝ մանաւանդ մերձաւորի վերայ արած ամբաստանութիւնը, արգելում հն Աստծու տասներորդ պատուիրանով, Աստծու զատաստանով ամբաստանողները, մոլի մարդոց հետ միասին, ենթարկուելու են լաւիտենական դատապարտութեան (Հոռվմ. 1-₂₉₋₃₂, Կորնթ. Ա. 6-₁₀, Յալտ. 21-₈):

Այդ բոլոր մեղքերից խուսափելու համար պէտք է միշտ էղուն սանձահարել: «Նա, որ կամենում է կեանքը սիրել և լաւ օրեր տեսնել, թնդ իւր լեզուն զսպէ չարութիւնից, իսկ ըրթունքները նենդութիւն խօսելուց» (Պետ. Ա. 3-₁₀):

ՄԵՐՁԱՒՈՐՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԴՍՅՈՂՈՒԹԻՒՆ:

Մարզս օրինաւոր և կանոնաւոր կերպով ձեռք բերած կարող զութիւնով թէ ժամանակաւոր բարօրութեան և թէ լաւիտենական

փրկութեան է հասնում: Կերակրելու ծանր հոգսերից աղատելով՝
նա մարդուն միջոց է տալիս՝ իւր մտաւոր և բարուական կրթութեան
կատարելագործութեամբ զբաղուիլ, աղքատութիւնից ծագած զա-
նազան փորձանքներից զդուշանալ, ճշմարտութեան և արդարու-
թեան համար վեհանձնաբար կանգնել, մերձաւորներին ամեն տե-
սակ բարիք անել, Աստծուն սիրել և Նորան չնորհակալութիւն
մատուցանել, և ալլն: Եւ այդ բոլորը փրկութեան հասնելու միջոց-
ներ են, Այդ պատճառով՝ ամեն մի քրիստոնեալ պէտք է ամեն չանք
գործ դնէ, որ մերձաւորը ևս իւր կարողութիւնը ազնիւ աշ-
խատանքով ձեռք բերէ, իրբ փրկութեան միջոց (Եփ. 4-28. Թե-
(սադ. Բ. 3₁₀, 12: Եթէ դորա համար նորանից մի որ և է զումար
պահանջուի, իրբ զրամագլուխ, և նա չունենալ, որ իւր գործը
սկսէ, ճշմարիտ քրիստոնեան պէտք է ե՛ այդ բանում նորան օդնէ.
նա պարտաւոր է «փոխ տալ», չպասսելով՝ որ իւտ կ'ստանալ, և
կամ բոլորը միանդամախ զոհնել, որովհետեւ ալղպիսի զոհաբերու-
թիւններն Աստծուն հաճելի են լինում (Եբր. 13-16). Եթէ նկա-
տում է, որ մերձաւորի կարողութիւնը վատնում է ինքը՝ տէրը—
և կամ ուրիշ մարդ, այն ժամանակ նա պարտաւոր է դորան ամեն
կերպ արգելք լինիլ.

Այդ պարտականութեան հակառակ են հետեւեալ մեղքերը
1). Յափշտակութիւնը, որի նպատակն է ուրիշի իրեղէնը
աշկարակ խլել.

2). Գողորիթիւնը՝ուրիշի իրեղէնը զազտնի կերպով վախցնել.

3). Խաղեցայութիւնը՝ուրիշի ունեցածը խորամանկութեամբ
իւրացնել.—երբ, օր. կեղծ զրամը խսկականի, իսկ վատ ապրանքը
լաւի տեղ են տալիս.—երբ կեղծ կշռով վաճառածը լիտ չեն վերց-
նում,—երբ թաղցնում են կարողութիւն՝ պարտքը չտալու նպա-
տակով,—երբ կտակները կամ պականները չեն կտարում, և՝ երբ
գողութեան մէջ բանուածին պաշտպանում—թաղցնում են և դորա-
նով անպատուածին բաւականութիւն ստանալուց զիկում:

4). Զօշաքաղութիւնը՝ երբ ստորագրեալներից, կամ դատի-
ենթարկուածներից, վարձ են ստանում և՝ իրանց ստացած օգուտի
համաձախ՝ անարժաններին բարձրացնում, մեղաւորներին ստորաց-
նում, իսկ անմեղներին ճնշում:

5). Պորտապուծութիւնը՝ երբ ոռօնիկ են ստանում, բայց
գործ չեն կտարում և ալղպիսով զողանում են թէ ոռօնիկը, կամ
վարձը և թէ այն օգուտը, որ կարող էին տալ հասարակութեանը.
կամ նորան, որի համար պէտք է աշխատէր—և երբ մարդիկ կե-

րակուր հայթհայթելու որժ ունին, բայց ողորմութեամբ են ապրում:
6). Վաշխառութիւնը՝ երբ՝ իրբ թէ իրաւունքով, բայց
իսկապէս՝ ճշմարտասիրութիւնը և մարդասիրութիւնը ոտնատակ տա-
լով, ուրիշի սեպհականութիւնը կամ աշխատանքը իրանց են քաշում.
երբ ամենամեծ թշուառութիւններ են պատճառում մերձաւորին,
օրինակ, երբ վոխատուները իրանց պարտապաններին ծանրաբեռ-
նում են մեծ տոկոսներով, երբ կալուածատէրերը ստորադրեալնե-
րին ճնշում են աւելորդ հարկերով կամ աշխատութիւններով. երբ
սովի ժամանակ հացը թանկ գնով են վաճառում:

Վերբ իշխած բոլոր մեղքերն արգելում են Աստուածալին օրէն-
քի ութերորդ պատուիրանով: Աստուածալին արդարադատութիւնը
այդ մոլութիւններին անձնատուր եղած մարդոց պատփում է և այս
կեանքում թէ խղճի խալթոցով, թէ անհանգստութեամբ և թէ ա-
նարդութեամբ, իսկ դոցանից աւելի շատ՝ հանդերձեալ կեանքում:
որովհետեւ գոքա «Աստծու թագաւորութիւնն չեն կարող ժառանգել»
(Կորնթ. Ա. 6-10):

ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԿՈՐ ԱՆՁԵՐԻ, ԾՆՈՂ-
ՆԵՐԻ, ԳԼԽԱԿՈՐՆԵՐԻ ԵՒ ԲՈԼՈՐ ՄԵԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

Եթէ սիրով պատուիրանը պահանջում է, որ մենք բոլորի-
նեա, մինչեւ անդամ չ'մոռանալով և՝ մեր թշնամիներին—մեծ յար-
գանքով և պատուով վարուինք, որ նոցա հետ ունեցած մեր բոլոր
յարաբերութիւնները մինչեւ անձնուրացութեան հասնող ճշմարիտ-
սիրով լինին տոգորուած, այն ժամանակ ալղպիսի սէր, յարզանք և
պատիւ մենք աւելի պէտք է ցոլց տանք՝ հոգեւոր անձերին, ճնող-
ներին, զիմաւորներին և՝ առ հասարակ՝ նոցա, որոնք մեղանից
մեծ են, Բայց ամենից առաջ՝ ալղպիսի սէր, պատիւ և յարզանք
պէտք է ցոլց տանք—

1)՝ Հոգեւոր անձերին, հոգեւոր հովիւններին: Նոքալիտ
պիսի սիրով արժանի են ինչպէս իրանց վեհ կոչումով և պաշտօ-
նով, իրաւունքներով և առաւելութիւններով, այնպէս էլ մարդոց
բարօրութեան և փրկութեան համար իրանց վարած պաշտօնի վահմ-
նշանակութեամբ: Նոքա՝ իրանց ճնունագրութեամբ մեծ իրաւունք-
ներ ստանալով՝ թագաւորների թագաւորի պաշտօնեաներ են,
Աստծու և մարդկանց միջնորդ, մեղքերի քաւիչ, հոգեւոր բժիշկ, նոր
ուխտի քահանակ, Աստուածալին Խօսքի քարոզող ոչ թէ միայն ժո-
ղովրդի, այլ և ամեն թագաւորների, իշխանների համար և փրկարար

խոհուրդների աղբիւրները բացատրող, վարդապետ և ուսուցիչ՝ երկնքի վեհազո՞ն պարզեները բաժանող, դէա, հովիր և առաջնորդ։ Հաւատացածների հոգեոր գատը վարող և վերջիններիս հողեպէս կատարելագործուելու, հաւատ, կեանքի մաքրութիւն և յաւիտենական փրկութեան ձգտումն ունենալու վերաբերեալ հրահանգ տուող (Մատթ. 28-_{18,19} Մարկ. 16-₁₃, Ղուկ. 22-₁₉, Մատթ. 18-₁₄, Գործք. 20-₂₈, Եփ. 4-_{11,13}, և ուրիշները, ևս և Թուղթ Ընդհանրական Ներսէս Շնորհալու), Առասարակ՝ նոքա, Ա. Գորքի ասելով, «Աստծու գործակիցներն են» (Կորնթ. Ա. 3-⁹), «Երկրի աղջ» (Մատթ. 5-₁₃), «աշխարհի լուսը» (Մատթ. 5-₁₄), «Ա Քրիստոսի հօտի օրինակը» (Պետ. Ա. 5-₃)

Ալդախի մեծ և բազմաշխատ պարտականութեան և վսեմ պաշտօնի պատճառով՝ հօտը պարտաւոր է, դոցա սիրել և լարդել, ինչպէս իրանց հոգեոր հայր և աղօթող (Թեսադ. Ա. 5-_{12,13}), բոլոր գործերում և ձեռնարկութիւններում նոցա աղօթքը, օրհնութիւնը և հայրական խրախը հայել, — նոցա մասնակցել տալ իրանց ամեն տեսակ ուրախութիւններին և տրտմութիւններին, որովհետեւ հոգեոր հովուին յարգելը Աստծուն յարգելու ամենամահշտ նշանն է (Մատթ. 10-₄₀), միշտ Աստծուն խնդրելով, որ Սանոցա լաջողութիւն և կարողութիւն տաէ իրանց պաշտօնում։ Ալդ մասին Առաքեալն աղաչում էր հաւատացողներին, թէ՝ «խնդրումնմ ձեզ, եղբայրներ, մեր Յիսուս-Քրիստոսի և ս. Հոգու անունով, որ դուք ձեր աղօթքների մէջ Աստծուն ինձ համար նպաստաւոր լինիք» (Հռովմ. 15-₃₀ Եփ. 6-_{18,19})։

Վերջապէս՝ եկեղեցում նոցա մշտական վարած վսեմ պաշտօնի պատճառով՝ հօտը պարտաւոր է՝ իւր կարողութեան համեմատ՝ օդնութիւն ցոյց տալ իւր նիւթական զոհաբերութիւններով՝ իրեն նոցա կոչմանը վայել տուրք (Կորնթ. Ա. 9-_{13,14}, Մատթ. 10-₁₀, Ղուկ. 10-₇): Խորին յարգանք և պատիւ տալով Մայրադոյն Հովուուպետին, եպիսկոպոսին, վարդապետին, քահանապիհն, պէտք է պատշաճաւոր յարգանքի և պատուի արժանացնել և սարկաւագներին, որովհետեւ նոքա ևս, սրբազնագործութիւններին ներկայ լինելով, Աստծու առաջ կանգնում են և նորա ահեղ թեմին ծառայում։

Կամենալ՝ որ Աստծու պաշտօնեաները բոլորովին անմեղանչական լինին և առանց պակասութեան, կ'նշանակէ, թէ՝ չենք կամենում, որ նոքա մարդիկ լինին։ Եթէ կան գալթակեցնող եկեղեցականներ, վատ հովիւներ, ալդ նշան է, որ մենք դոցա ենք արժանի և ոչ թէ լաւերին, որովհետեւ մենք՝ մեր եկեղեցական աղատ ժողո-

վրդական ընտրութեամբ վարուելով՝ ցոյց ենք տուել լաւով մեր զբակցական ընտիր ինքնամանաշութիւնը, իսկ վատով՝ մեր տղիասութիւնը։

2).—Մեր ծնողներին։ Հոգեոր հայրերը իրանց հոգեոր որդոց չնորհում են հոգեոր և սուրբ կեանք, որը պաշտպանելու և կազգուրելու համար հոգեոր սնունդ են մատակարարում և դէպի յաւիտնական երանաւէտ կեանքը տանելու զործում զեկավարում։ Մեր մարմնաւոր ծնողները՝ Աստծու օրհնութեամբ, իրանց որդոց գոլութիւն են տալիս և կեանք. ծնուելու օրից կերակրում են և պահպանում, զարգացնում են և կազդուրում ինչպէս Փիզիքական, այնպէս և հոգեոր կարողութիւնները. տալիս են ճշմարիտ կրօնական—բարովական ուղղութիւն և զարձնում կատարեալ մարդ, միանգամայն նպաստելով նոցա ժամանակաւոր և յաւիտենական նախանձելի կեանքին համելուն։

Ծնողների ալդախիսի սիրով և հոգացողութեան պատճառով որդիքն էլ իրանց կողմից պէտք է նոցա ցոյց տան սէր, յարգանք և պատիւ, խոնարհութիւն և երախտագիտական չնորհակալութիւն։ Ալդ պարտականութիւնների կատարելը նոցա լորդորում է Աստծածակին օրէնքի հինգերորդ պատուիրանը։ — «Պատուիր քո հօրը և քո մօրը, որ լաւ լինի քեզ համար և երկար ապրես աշխարհիս վերաբ» (Ծննդ. 20-₁₂, Մարկ. 7-₁₀): Ալդ պատուիրանը կրկնում է և Պօղոս առաքեալը, աւելացնելով, որ նա «խոստմունքով առաջինն» է (Եփ. 6-₂): Ժամանակաւոր պարզե խոստանալը նոցա հարկադրում է, որ ալդ կարենոր պատուիրանը կատարեն, որովհետեւ դորանով է ընտանեկան կեանքի կարգաւորութիւնը հաստատում։ Ալդ խոստում կատարելը մենք պարզ կերպով նկատում ենք նահապետների պատմութեան մէջ (Ծննդ. 27-գլ.): Նախախնամութեան ճանապարհին հետամուտ եղողները և ալժմ կարող են օրինակներ գտնել, թէ՝ ինչպէս Աստծուած ծնողներին յարգող որդոց կեանքը պահպանում է, ժամանակաւոր բարօրութիւն տալիս և երկնքում լիակատար պարզե պատրաստում։ Ալդ միենովնը վկալում է և Սիրաք իմաստունը (Յ-_{5,12}, 7-_{23,30}].

Անկեղծ սրտով ծնողներին յարգելով և պատուելով, որդիք —ա) պէտք է միշտ հեղ, խոնարհ և անկեղծ լինին իրանց ծնողների առաջ։ Լաւ, որդոց բերանից ծնողների համար ոչ մի անպատիւ խօսք չ'պէտք է դուրս թռչի. — «Ով իւր հօր և մօր մասին չարախօսութիւն կանէ, նա մահով կ'մեռնիւ —ինչպէս Աստծուած պատուիրում է Մովսիսի օրէնքում, «Անիծուի նա, ով իւր հօրը և իւր

մօրը կ'հայովէ» (Երկ. օր. 27-₁₆): «Ծնողներին որդիք բոլորովին պէտք է լարգեն մինչև անդամ և՝ ալն դէպքում, եթէ դոքա որևէ հոգեկան և մարմնական թուլութիւն կամ պակասութիւն կ'ունենան: Ճթէ ճնողդ խելքի պակասութիւն ունեցաւ, ներողամիտ եղիր և մի անպատուիր նորան քո բոլո՞ր ուժովիս (Սիր. 3-₁₂₊₁₃): Երեխաների համար յաւիտեան խրատական դաս պէտք է մնալ նոյն կեանքից վերցրած այն դէպքը, որ նորա որդկերանցից մէկը, հօր անըզգութիւնից արբեցած ժամանսկ, նորան ծաղրեց: Քամի ամբողջ տոհմի վերայ արտայալտուեց ալդ յանցանքի հետեանքը և նորա անունն էլ մնաց ամբողջ մարդկութեան մէջ իրեւ անարժան որդի: Ազդ պատմառով՝ թ) — նոքա պէտք է բոլորովին ուշագրութիւն դարձնեն նոցա խրատաների վերայ և անկեղծ ու հլու հնաղանդութիւն ցոյց տան ամեն բանում, ինչ որ Աստուածային ու քաղաքացիական օրէնքին հակառակ չէ:

— «Որդիք», խրատումէ Առաքեալը, «հնաղանդ եղէք ձեր ծնողներին ամեն բանում, որովհետեւ ալդ հաճելի է Աստծուն» (Կող. 3-₂₀): մի ուրիշ տեղ էլ ասում է՝ «որդիք, հնաղանդ եղէք ձեր ծնողներին Աստծու անունով, որովհետեւ արժանին ալդ է» (Եփ. 6-₆): Առաքեալն, Աստծուն օրինակ բերելով, թէ հնաղանդութիւնն է հաստատում և թէ նոյնը սահմանափակում նորանով, որ իշխցնում է և ծիրոջ ալս ասածը, թէ՝ «ով իւր հօրը կամ մօրը ինձանից աւելի կ'սիրէ, նա ինձ արժանի չէ» (Մատթ. 10-₃₇): Լինում են դէպքեր, երբ ծնողներն իրանց որդկերանցից Աստծու օրէնքի հակառակ բան են պահանջում, ալդ դէպքում նոքա պէտք է կատարեն Աստծու և ոչ թէ ծնողների կամքը, որովհետեւ Աստծուն աւելի պէտք է հնաղանդուիլ, քան թէ՝ մի ուրիշի (Գործ. 4-₁₉₊₂₀): Միայն պէտք է ամեն կերպ զգուց կենալ, որ ծնողներին հնաղանդ լինելու ալդ սահմանափակող պատուէրը չարագործութեան չ'հասցնուի, որպէսզի նոքա էլ դորանից իրանց համալականութեան և յամառութեան համար պատնէշ չ'շինեն: Որոշ դէպքում ծնողների կամքը չ'կատարելով՝ մինչոյն ժամանակ նոքա պէտք է նոցա ամեն մի պահանջը կատարեն, որոնք Աստծու օրէնքին հակառակ աղքատութեան, հիւանդութեան և ծառականութեան մասին հոգալով, մնաց պատրաստում են կեանքի համար, դարձնում են հասարակութեան ընտիր անդամներ և ալդպիսով նպաստում են ինչպէս մեր ժամանակաւոր երջանիկ կեանքի կաղմակերպութեան, այնպէս էլ չաւիտենական վրկութեանը լաջողութեամբ հասնելուն: Քաղաքացիական գլխաւորները մեզ պահպանում են հասարակութեան մէջ պատահած անկարգութիւններից, զատարանի մեծաւորները օրէնքով մեղ պաշտապանում են մեղ հասցրած անպատութիւններից, արմատահան են անում հասարակութեան մէջ երևցած չարութիւնը և նպաստում ալն ձգտմանը, որ բարութիւնը չարութեան լաղթող հանդիսանալ: զինւորական գլխաւորները պահպանում և պաշտապանում են հալրենիքը թէ՝ ներքին և թէ՝ արտաքին թշնամիներից, որոնք մեր բարօրութեանը վես են հասցնում, միւս մեծաւորներն էլ իրանց ստորագրեալներին, թէ՝ հասարակական և թէ՝ քաղաքալին պաշտօններում, հալրաբար են գլխավարում և առաջ տանում, միշտ զիջողաբար վարուելով առաջին անփորձութիւններին և՝ վերջապէս՝ տէրերն

թեան, աշխատանքների, հիւանդութիւնների և վշտերի ժամանակ: Իսկ ալդպիսի ջանքի համար նոքա կ'միտթարուին իրանց որդոց երախտաղիտութիւնով և չեն էլ զրկուիլ նոյն իսկ Աստծու ողորմութիւնից, որովհետեւ, Սիրաքի վկայութեամբ, «Հօրը ցոյց տուած ողորմութիւնը չի մոռացուիլ և որդոց վշտերի ժամանակ էլ Աստծու առաջ կ'իշուի: Զօրը պատողը կ'ուրախանակ որդկերանցով և իւր աղերսի ժամանակ էլ լսելի կ'լինի» (Սիր. 3-₁₄₊₁₅): դյուքա միշտ պէտք է երախտապարտ լինին և չնորհակալ իրանց ծնողներին այն բոլոր անթիւ բարիքների համար, որոնք արուած են ծնողների կողմբց իրանց որդոց համար (Ոիր. 7, 29-30): Ալդ պարտառկանութիւնն իւր մէջն է պարունակում և վերև լիշած բոլոր պարտականութիւնները, որովհետեւ ոչ մի կերպ անպէս՝ պարզ չի հաստատուիլ զէպի ծնողներն ունեցած չնորհակալութիւնը, ինչպէս սէր, լարգանք, պատիւ, խոնարհութիւնն և նոցա կամքին հնաղանդութիւն ցոյց տալով: Վերջապէս՝ ե) — որդիք պարտաւոր են աղօթել իրանց ծնողների համար ինչպէս կենդանութեան ժամանակ, այնպէս էլ մահից իւտ, և ծառութեամբ կատարել նոցա այն բոլոր պատուէրները, որոնք աստուածային ու քաղաքացիական օրէնքին հակառակ չեն—(Մակ. Բ. 12-₄₃₊₄₄. Երեմ. 35-₁₈₊₁₉):

3) — Գլխաւորներին եւ ըլլոյը մեծերին: Գլխաւորները զանազան լարաբերութիւններում, Աստծու կամքով, ծնողների տեղ են բոնում, Օրինակ՝ ուսումնարանների կառավարիչներն ու դաստիարակները, մեր կրթութեան և դաստիարակութեան մասին հոգալով, մնաց պատրաստում են կեանքի համար, դարձնում են հասարակութեան ընտիր անդամներ և ալդպիսով նպաստում են ինչպէս մեր ժամանակաւոր երջանիկ կեանքի կաղմակերպութեան, այնպէս էլ չաւիտենական վրկութեանը լաջողութեամբ հասնելուն: Քաղաքացիական գլխաւորները մեզ պահպանում են հասարակութեան մէջ պատահած անկարգութիւններից, զատարանի մեծաւորները օրէնքով մեղ պաշտապանում են մեղ հասցրած անպատութիւններից, արմատահան են անում հասարակութեան մէջ երևցած չարութիւնը և նպաստում ալն ձգտմանը, որ բարութիւնը չարութեան լաղթող հանդիսանալ: զինւորական գլխաւորները պահպանում և պաշտապանում են հալրենիքը թէ՝ ներքին և թէ՝ արտաքին թշնամիներից, որոնք մեր բարօրութեանը վես են հասցնում, միւս մեծաւորներն էլ իրանց ստորագրեալներին, թէ՝ հասարակական և թէ՝ քաղաքալին պաշտօններում, հալրաբար են գլխավարում և առաջ տանում, միշտ զիջողաբար վարուելով առաջին անփորձութիւններին և՝ վերջապէս՝ տէրերն

էլ իրանց ծառաների բարօրութեան մասին են հոգում, որի համար Ա. Գրքում ասուած—«Տէրեր, ձեր ծառաներին իրաւունք և հաւասարութիւն տուէք, զիտենալով, որ դուք էլ երկնքում Տէր ունիք» (Կող. Ա. 4-1): Ազդպիսի սիրով, ուշադրութեան, համակրութեան և զիջողութեան փոխարէն ստորադրեալներն էլ պարտաւոր են իրանց մեծերին աւելի սիրել, լարգել, պատուել և անձնուրացութեամբ ծառափել հասարակական գործերին: Ազդպիսի սէր է յորդորում և ինքն Աստուած.—«Ամեն մարդ իւր վերայ եղած իշխանութիւններին թող հնազանդուի, որովհետեւ իշխանութիւն չկայ, որ Աստծոց չը լինի, և նոքա, որոնք կան, Աստծոց են նշանակուած, ուրեմն՝ ով որ իշխանութեան դէմ կ'կենալ, նա էլ Աստծու հրամանին դէմ կ'կենար» (Հռովմ. 13-_{1,2}): «Ամենին վճարեցէք հարկաւոր եղածը, որին արուելու է տուրք—տուրքը տուէք, որին մաքս—մաքսը, որին երկիւղ—երկիւղը, որին պատիւ—պատիւը» (Հռովմ. 13-7): «Մառաներ, ձեր տէրերին ահով ու դողով և ձեր սրտին էլ պարզութեամբ՝ իրեն Քրիստոսին—հնազանդ եղէք. ան էլ ոչ թէ՛ մարդահանոյի պէս, աչքի առաջ աշխատելով, ալ՝ ինչպէս Քրիստոսի ծառաներ, Աստծու կամքը սրտանց կատարելով» (Եփ. 6-_{5,6}):

Վերջապէս՝ սիրելը, լարգելն պատուելը մենք ընդունում ենք՝ հետեւալ դատողութիւններով—1) Ծերերը մեզանից առաջ են կեանքի մէջ մտել, կեանքի ուսումնարանն անցկացել և փորձով հասունացել. հետեւապէս՝ նոքա իրաւունք ունին մեզանից պահանջելու, որ մենք նոցա լարգենք ու պատուենք, որովհետեւ նոքա մեզանից աւելի լաւ են ճանաչում կեանքը և փորձառութիւնները. Նոքա ամեն բանում մեզ լաւ կեանքի և բարուական վարուեցողութեան օրինակ են տալիս. կեանքի դժուար հանգամանքներում նոքա կարող են մեզ խելացի խրաներ տալ և զանազան թիւրիմացութիւններից ու գայթակղութիւններից զգուշացնել: 2). Դոցա վաւելուչ կերպով լարգել և պատուել է յորդորում մեզ և՛ ինքն—Աստծու Խօսքը. Պողոս առաքեալը գրում է Տիմոթէոսին—«Ծերին սաստիկ մի լանդիմանիր, ալ հօր պէս լորդորիր նորան,—երիտասարդներին՝ եղբայրների պէս, պառաւներին՝ մայրերի պէս, և ալն» (Տիմ. Ա. 5-_{1,2}): «Մազը սպիտակածի առաջ ոտքի կանդնիր, ծերին պատուիր և քո Աստծուցդ վախեցիր» (Պատ. 19-_{2,2}):

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ԶՈՀ ԵՒ ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՆ-
ԶՈՂ, ՍԵՐ.

«Հայրենիք» ասելով պէտք է համականանք ոչ թէ այն երկիրը՝ որտեղ մէկը ծնուել է և ապրում է, ալ այն հասարակութիւնը—իւրկառավարութիւնով, լեզով, հաւատով, բարքերով, սովորութիւններով, և ալն, որին ինքը պատկանում է իրեւ նորա անդամ: Հայ—քրիստոնեան պարտաւոր է հայրենիքին աւելի եռանդուն սէր ցոյց տալ. նա պէտք է սիրէ այն բոլորը, ինչ որ իւր ազգի լատուկ զծարութիւններն են կազմում, ի հարկէ լաւերը, որոնց մէջ է թափնուած՝ ինչքան որ իւրածն, անքան էլ պտղաւէտ՝ զործունէութեան սկզբունքը. Այդ պատճառով, եթէ, օր. հայը չի կամենում նմանուիլ բուն հային—չի միրում նորա պարզութիւնը, վեհանձնութիւնը, բարեսրատութիւնը, կրօնը և լեզուն, որոնք նորա հարազատ ազգի բարուական կողմն են նկարագրում,—չի ընդունում նորա աղնիւ համոզմունքները, չի համակրում նորա ազգակին պահանջներին և ձգտումներին—նա ոչ մի դէպքում, բառիս բուն նշանակութեամբ, հայրենիքի զաւակ չի կարող համարուիլ. Հայրենիքին ազգիսի բուռն սէր ցոյց տալը այնքան է մարդուս համար, ինչքան որ բնական է մօրը և հօրը, եղբայրներին և քոլերին, մերձաւորներին և ուրիշներին՝ սիրելը. Նա շատ խոր կերպով է արմատացած նորն իսկ մարդուս ընութեան մէջ և համաձան է այն Արարչի Ծալրազոյն կամքի հետ, Որը «բոլոր մարդկալին ազգերը մէկ արիւնից ստեղծեց՝ ամբողջ երկրիս վերայ բնակուելու նպատակով, հաստատելով նոցա համար նախապէս որոշուած ժամանակները և բնակութեան սահմանները» (Գործ. 17-_{2,6}): Հայրենիքին այդպիսի սէր ցոյց տուեց և՛ ինքը՝ Յիսուս-Քրիստոսը. Նա թէն եկաւ միան մարդկալին ազգը փրկելու, բայց ամենից առաջ Աստծու թագուորութիւնը քարոզեց հրէից ազգին և սկսեց իւր փրկարար քարոզութիւնը Պալիլիայում, որտեղ անցկացրեց իւր մանկութիւնը և պատանեկութիւնը: Եոլորին բարիք անելով՝ նա ամենից առաջ իւր բարեգործութիւնները ցոյց տուեց իւր մին հայրենիքին, որի մէջ նորան հաճելի էր աշխարհիս երեսին երեալ, [«Ես ուրիշի համար չուզարկուեցալ, ալ միան Խորաէլի տան կորած ոչսարների համար» (Մատթ. 15-_{2,1})]. 12 աշակերտներին Յիսուս-Քրիստոսն ուղարկեց և պատուիրեց՝ ասելով—«Եթանոսուների մանապարհով մի զնաք և Սամարացիների քաղաք մի մտնէք, ալ աւելի Խորաէլի տան կորած ոչսարների համար գնացէք» (Մատթ. 10-₅₋₆). «Եւ երբոր մօտեցաւ,

քաղաքը տեսնելով, լաց եղաւ նորա վերալ և ասաց. — «գոնեան խաղողութիւնը քո օրումդ համկանալիր, միայն ալժմ քո աչքերից արդ ծածկուեցաւ, որովհետեւ քեզ վերալ պէտք է օրեր գան, որ թշնամիները քո բոլոր կողմերը պատճէց շինեն, քեզ պաշարեն, ամեն-կողմից նեղ տեղ ձգեն, ոչնչացնեն քեզ և քո մէջ եղած զաւակներիդ, և քո քարը քարի վերալ էլ ամենակին չ'թողուն, — նորա համար միայն՝ որ դռւն քո ալցելութեան ժամանակը չ'հասկացար» (Պուկ. 19 41-44)], իսկ հարսանիքի առաջին հրաշքն էլ Գալիլիալի Կանա քաղաքում արեց. Պօղոս առաքեալը ևս իւր հալրենակիցներին այնպէս էր սիրում, որ Քրիստոսից նզովուած կամցաւ լինիլ մրանին նոցա փրկութեան համար (Հու. 9-2), որից դրդուած միշտ խրատում էր, թէ պէտք է «բոլորին բարութիւն անենք, մանաւանդ մեր հաւատակիցներին» (Դաշ. 6-10), իսկ մի ուրիշ տեղ էլ ասում է — «Աթէ մէկը իւրավինների, մանաւանդ ընտանիքի՝ մասին հոգս չի տանիլ նա հաւատից հրաժարուած և անհաւատից էլ վատ մարդ կ'համարուի» (Տիմ. Ա. 5-8). Գերի զնացած Հրէից ժողովուրդը իւր հալրենիքը ամեն ուրախութիւնից բարձր էր դասում: «Աթէ քեզ մոռունամ, Երուսաղէմ, թռղ ինձ իմ աջը մոռանալ. թռղ լեզուս կցուի իմ քըրմքին, եթէ քեզ չ'իշեմ, կամ եթէ քո մասին, Երուսաղէմ, իմ ուրախութիւնից առաջ չ'նուագեմ» (Սաղմ. 136 5-6): Այս հոգեբուզդան ակտուածքը իշեցնում է մեզ և՛ ներկայիս մեր ժողովրդական բանիւստեղներից մէկի սիրտ կտրատող հետեւել նզովքը. — «Ով իւր ազգն ուրանալի, երկու աչքով կուրանալի, իտանեալ աղքատի նման դռնէ՝ ի դուռն մուրանալի, կշտին դիպչի զեղարդը, սրտից թափուի լեարդը, գժոխսքի բանցկելիք լինի ազգուրաց մարդը»: Եւ հալրենիքըն աւելի բնչպէս չսիրել, երբ մենք բոլորս նորան պարտական ենք — հալրենիքի սրտի մէջն ենք մեր կեանքի առաջին ուրախութիւնների համն առել և առաջ է տուել և տալիս է մեզ ոչ թէ միայն զոյտութիւն, առ և ազգալին դաստիարակութիւն, ազգային ողի. հայրենիքը պաշտպանում է մեր իրաւունքները և սեպհականութիւնը. այսուեղ է մեր հասարակական զործունէութեան ասպարէզը, ալտանեղ ևն բացուած մեզ համար կեանքի միջոցները և լարմարութիւնները. ալստեղ են մեր ծնողները, եղբայրները, քուրերը, ազգականները և ցեղակիցները, որոնց հետ սերտ կերպով կպած ենք մեր ծագումով, հաւատով, օրէնքներով, լեզուով, բարքերով, սովորութիւններով և ուրիշ լատկութիւններով. ալստեղ են մեր անմոռանալի պապերի աճիւնները և փառքի ու զոյտութեան անմահ լիշտատակները. ժամանակով ալստեղ է հանգստանալու և՛ մեր փոշիացած մարմնը.

Սիրեզով հալրենիքը, ցանկանալով նորան ամեն տեսակ բարիք և բաղդաւորութիւն, հայ քրիստոնեան պէտք է իւր հալրենիքի հակատագրի մէջ մնե գործունէութիւն ցուց տալ և ամեն կերպ աշակցէ նորա զրութիւնը լաւացնելու և բարձրացնելու գործում:

1.). Ալգալիսի մասնակցութիւն և աջակցութիւն երեան կ'դան
այն ժամանակ, երբ աղաս կամքով և աղնուութեամբ կ'կատարուին ի-
րանց հալրենիքի ընդհանուր օգտին նշանակուած բոլոր պարտա-
կանութիւնները, օրինակ՝ հարկերը, հասարակական և զինուորական
ծառակութիւնները, և այլն. Ով կ'խուսափի ալգալիսի պարտակա-
նութիւններից, նա դորանով հաւասարապէս ունասուակ կ'ասալ ինչ-
պէս քաղաքացիական, այնպէս և՛ բարուական—քրիստոնէական
օրէնքը, որ ասում է. «ամենին հարկաւոր եղածը վճարեց՛ք —մէկին
առուք, մէկին մաքս...» և այլն (Հռով. 13:).

2). Հայրենիքի բարօրութիւնը և երջանկութիւնը պահանջում
է իւր ամեն մը անդամրց, լինի նա տղամարդ կամ կինարմատ,
և առանձին զոհաբերութիւն հայրենիքի ամենալգուար և ամե-
նածանը հանգամանքներում, օրինակ-թշնամիների դէմ հայ-
րենիքի աղասութիւնը պաշտպանելու, հասարակական թշուառու-
թիւնների դէմ կոփւ մղելու և այլ անհրաժեշտ կարիքները հոգալու
ժամանակ: Զոհաբերութիւնները պէտք է մինչև անձնազոհութեան
հասնին: «Սորանից աւելի մեծ սէր ոչոք չի կարող ունենալ, եթէ
մէկը իւր բարեկամների համար իւր անձը իւս դնէ» (Յովհ. 15₁₈),
ասաց Փրկիչը և զորանով ցոյց առւեց, որ մերձաւորների և աւելի
իւր ազգի, հայրենիքի՝ մասին ունեցած սէրը, այն էլ անձնուէր
սէրը, վսիմ բարովական քաջագործութիւն պէտք է համարուի: Դո-
րան իւրեւ հրաշալի օրինակ մներ Ազգակին պատմութիւնից Վարդան
Մամիկոնեանն է առաջ գալիս, որը՝ պարսից հալածանքներից ճըն-
շուած՝ ընտանիքով կամնում էր Յունաստան փախչի՛ թերես ա-
ւելի փառաւոր դիրք ստանալու, միայն նորան իւր բարովական
վսեմ պարտականութիւնը լիտ կանգնեցրեց, որից իւսով դարձաւ
ազգակին անձնուէր զօրքի առաջնորդ, դիմազրեց ազգակործան ար-
շաւանքին և մարտիրոսական մահ ստացաւ կուփի մէջ՝ իրան պէս
անձնուէր ազգաւէրների նետ միասին:

Մի քանի Աթենացիք՝ դաւագրութիւն կազմելով, կամեցան հայրենիքը բռնաւորների լծից աղատել, դաւագիրների մէջ զտնուում էր և մի կի՞ն՝ Լէոնիա անունով, որը և՛ բռնուեցաւ. Բռնաւորը՝ բոլոր դաւադիրներին զտնելու նպատակով՝ հրամայեց սորան չարչարել և ստիպել մասնակցողների անունները բայտնել, բայց կի՞նը

համերութեամբ բոլորը տարաւ: Միայն տեսնելով, որ ովերը թու-
լացան, իւր լեզուն կծեց, որ գաղտնիքը չ'ասէ և իւր ընկերներին
չմատնէ: Բունաւորը հալածուեցաւ: Աթենացիք՝ երախտազիտու-
չմատնէ: Եթիւնիայի համար (մատակ առիւծ) մի ար-
թիւնից հարկադրուած է չոնիայի համար (մատակ առիւծ) մի ար-
ձան կանգնեցրին—մատակ առիւծ, առանց լեզուի, որի խարսխի-
վերաէ արձանագրեցին այս հետեւալ խորիմաստ պարբերութիւնը
Անոաքինութիւն յաղթական սեռին:

Հոռվամակեցոց և քաջ ու իւր ազգի ազատութեան համար
անձնուէր Միհրդատի մէջ պատերազմ բացուեցաւ: մի անդամ, մէկ
կռուի մէջ, մէկ զինւոր՝ գերի բռնուելով, տարուեցաւ Միհրդատի
կռուի մէջ, մէկ զինւոր՝ գերի բռնուելով, տարուեցաւ Միհրդատի
մօտ: Միհրդատը սորան հարցրեց—«եթէ քեզ արձակեմ, ինձ բարե-
կամ կ'զառնաս, թէ՝ ոչ»: զինւորը պատասխանեց—«եթէ Հոռվամա-
կեցոց հետ խաղաղութիւն կ'անես, իսկ եթէ ոչ, քեզ միշտ անհաշտ
թշնամի եմ»: Մօտիկ մարդիկ խորհուրդ տուին Միհրդատին՝ սպանել
զինւորին, բայց նա վեհանձնաբար ներեց և ասաց—«պէտք է թըշ-
ուառացած առաքինութիւնը յարգել»:

Հալրենիքի վերաբերեալ ունեցած ճշմարիտ անձնուրաց սէրը
երբէք չի մերժում ուրիշ ազգերին ևս սիրել ու համակրել: Նա պա-
հանջում է հալրենիքի որդիկերամնցից՝ ամեն մարդուն լարգելու,
պատուելու և եղբայրաբար սիրելու իրաւունքները ճանաչել: միայն
խորհուրդ տալով հալրենիքի պատիւը և բարօրութիւնը ունատատի
տուող թշնամիների դէմ ինքնապաշտպանութեան ամեն օրինական
միջոցները գործ դնել, որպէսզի հնարաւոր լինի դոցա չար կամքը
սանձահարել և օրինական ազատութիւնը ապօրինի բանաբարու-
թիւնից ապահովել և ուրիշ՝ ոչինչ: Ալդ պատճառով՝ այն մարդոց
չի կարելի հալրենիքի հարազատ զաւակներ համարել, որոնք՝ ի-
շանց հալրենիքը և հարազատ ազգը սիրելով, կ'ատեն ուրիշ ազ-
գերին:

Հալրենիքի վերաբերեալ ունեցած ճշմարիտ և անձնուրաց սի-
րով հակառակն է մի ուրիշ ծալրահեղութիւն, որ կոչում է «կոս-
մովոլիստութիւն» (համաշխարհակին քաղաքացիութիւն), որը
պահանջում է հալրենիքն աւելի չ'սիրել, այլ զորա հակառակ՝ բոլոր
մարդկութեանը միակերպ հաւասար սէր ցոյց տալ: Սէրը դէպի իւր
ազգը, մերձաւորը, իւրաինները՝ ընական է, ուստի և՛ զորանով էլ այ-
սուման կեղծութիւնը պարզում է: Այսան պէտք է աւելացնել և
այս, որ կոսմոպլիտութիւնը, իւր բուն նշանակութեամբ, գոյու-
թիւն չի կարող ունենալ: Ալդ ուստի ինքը՝ իւր սկզբնական հի-
մոնքներով, իւրան տապալում է իրք մի զատարկցնորք համարուե-

լով: Կոսմոպլիտը, որ բոլորին հաւասարապէս սիրում է և բարե-
ցանկանում, եթէ կամենում է, որ ինքն իւր սկզբունքներին հե-
տեղով և հաւատարիմ լինի, ոչ մի ժամանակ իւր գործերով, վարմունք-
ներով չի կարող սէր արտայալտել, որովհետեւ սիրու ամեն մի ար-
տավայտութիւնը ալդ սկզբունքը ոչնչացնող կ'համարուի: Միորեէ
բարի գործ կատարելով, նա, բնականաբար, ալդ կ'անէ որոշեալ
տեղում, որոշեալ ժամանակ և որոշ էլ անձանց համար, և ոչ թէ
բոլորին: Այն ինչ ամբողջ աշխարհում շատ մարդիկ կան, որոնք
ալզպիսի բարի գործերի կարեք ունին: Հետևապէս՝ լայտնի դէպ-
քում նա աւելի սէր է արտավայտում մէկին, քան թէ միւսերին: Այս
սկզբունքին խիստ հետեւով, պէտք է միանդամից կամ բոլո-
րին բարութիւն անել, որը մտածել անգամ չի կարելի և կամ ոչ-
ոքի: Ալսպէս ուրեմն՝ բոլորին հաւասարապէս սէր արտավայտելու
պատրուակով կոմմուոլիտութիւնը՝ մարդուս մէջ արմատացնում է
և զարգացնում միայն անտարբերութիւն, սապնաօրտութիւն և
անզգայութիւն թէ դէպի իւր ազգը, թէ դէպի իւրակինները և թէ
դէպի մերձաւորները: Ալզպիսի ուսումն, ի հարկէ, հակառակ է կրօ-
նական և բարուական պահանջներին, իսկ վնասակար մարդոց թէ
հասարակական և թէ քաղաքացիական կեանքին: Նա ինչպէս բո-
լոր հասարակական կապերը, այնպէս և ծնողների, որդոց, աղջա-
կանների, բարեկամների և բոլոր աղջալինների յարաբերութիւն-
ները թուլացնում է:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՐԱԿՈՒՆՔ-
ՆԵՐԸ:

Ոչ մի հասարակութեան մէջ չի կարող կարգ ու կանոն լի-
նիւ, եթէ նա կարդ պահող կամ ծալրագոյն իշխանութիւն չունի,
որ կարող լինի հասարակական զործունէութեանը լաւ ուղղութիւն
տալ, կենդրանացնելով նորան մէկ զիմաստակի մէջ, որաեղ
ծալրագոյն իշխանութիւն չ'կայ, ինչ ուղղութեան էլ լինի, այնտեղ
միշտ անկարգութիւններ և անսանձ ինքնակամութիւններ են լի-
նում, որոնք ընդհանուր կորուս են առաջ բերում: Ալդ վերա-
բերեալ շատ զարմանալի օրինակներ կան Սրբազան պատմութեան
մէջ, Գատաւորների շրջանից (Դատ. 17₃, 18₁, 19₁, 21₂₅ և ուրիշ):
Հրէանները երկար ժամանակ առանց թագաւորի էին ապրում, մի-
այն ներքին անկարգութիւնների շատանալը և հարեանների կող-
մից ճնշումը՝ զգալ տուին նոցա, որ իրանց հարկաւոր է ծալրագոյն

իշխանութիւն, ուստի և, չնայելով, որ ապագա թագաւորի կողմից կարող էին շատ հարստահարութիւններ սպասել, իրանց համար թագաւոր պահանջեցին (Թագ. Ա. 41-8): Նոյնը տեսնում ենք և մեր Հայոց պատմութեան մէջ, որ՝ ճայրագոյն իշխանութիւն չըլինելով միշտ ներքին պատերազմներ են եղել ինկ մէկին ընդունելով ժամանակապետ՝ երկրին տուել է անդորրութիւն և խաղաղութիւն, թէս այդ բաղը ևս երկար ժամանակ չէ ժպատակ մեր անմիտ անմիաբանութեամբ, որը տուել քանդել է մեր ինքնապոյութեան սիւներից ամենազօրեղը, իւր որդոցը ենթարկելով ճակատագրի խխատ հարուածներին, որոնց դառնութեան պառուղները ապագա սերտնդներս ենք վայերում: Այդ պատճառով՝ Ամենաբարի, Ամենիմաստ և Նախախնամող Աստուածը՝ մարդոց ինքնակամութիւնները սանձահարելու և նոցա ընդհանուր կեանքը կանոնաւորելու համար՝ ճայրագոյն իշխանութիւն էր չնորհում, որպէսզի «խաղաղ և հանդարտ կեանք վարենք՝ բոլորովին բարեպաշտութեանը և պարկեցութեանը նուիրուելով» (Տիմ. Ա. 2-2): Նա ինքն է նոցա ընտրում, կարգում և ղեկավարում: «Թագաւորներն ինձանով են թագաւորութիւն անում, իսկ նախարարներն էլ ինձանով են արդարութեան կանոններ գրում» (Առ. 8-13): Նոր-Ռւխտի մէջ Յիսուս-Քրիստոսը իւր պատասխանով Պիտասոսին ակսպէս հասկացրեց իշխանութեան վերին ծագումը. «Դուն Խնձ վերալ ոչ մի իշխանութիւն չէիր կարող ունենալ, եթէ քեզ պէտք բարձրից տրուած չ'լինէր» (Յով. 19-11): Պօղոս առաքեալն էլ գրում է. «Իշխանութիւն չկալ, որ Աստծոց չ'լինի» (Հո. 13-1): Թագաւորներին Աստուած այդպիսի մեծ ուժանը գործերի համար ընտրելով՝ տալիս է նոցա որժ և կարողութիւն, որ նոքա արժանավայել կերպով կարողանան ժողովրդին կառավարել: Այդպիսի ընտրութեան և անտեսանելի չնորհք ստանալու արտաքին նշանը Աստուած սահմանեց թագաւորների (Ժողովրդապետների) խորհրդաւոր օծումը (Թագ. Ա. 10-1, Սալմ. 88-21-30): Սաւուղը՝ թագաւոր օծուելու օրից սկսած, Աստծու հոգին ստանալով, ուրիշ մարդ զարձաւ (Թագ. Ա. 10-8): Դաւթի թագաւոր օծուելուց սկսած, Ա. Հոգին նորա մէջ էր բնակլում (Թագ. Ա. 16-13): Ա. Հոգին՝ օծուելու օրից սկսած իւր օծաների վերաբեր նոյն աստիճանուներին էր անուանութեան և անտեսանելի չնորհք ստանալու համար զօրք ունենալ (Թագ. Ա. 8-11-12): Նոյն հասարակութեան անհրաժեշտ կարիքները հոգալու նպատակով—հարկեր նշանակել և հաւաքել (Թագ. Ա. 8-14-17), իւր թագաւորութիւնն էլ արտաքուստ թշնամիների լարձակումներից ազատ պահելու համար՝ ուրիշ թագաւորութիւնների հետ զաշը կռել, զանազան պայմաններ կապել և հարկաւոր եղած ժամանակը սպատերազմով իւր ժողովրդին պաշտպանել ազգի անբարիշտ թըշնամիներից: Պատերազմը, որ մեծ չարութիւնը հեռացնելու անխուսափելի չարութիւն է համարւում և ուրիշների կողմից զործածած բռնութիւնների և անսրդարութիւնների զէմ անհրաժեշտ դիմադրութիւն, նոյն իսկ Աստուածաբին Խօսքի համեմատ ներելի է ճանաչում: Աստուած նորան թողլ է տալիս իրեն զործիք անարժաններին պատժելու՝ որոնք անարդարութեան դէմեն եղել (Յննդ:

րէութիւն էր համարում—«մարդարէութիւնը թագաւորի շրթունքներումն է»: Որովհետև թագաւորական իշխանութիւնը ազգիսի մեծ նշանակութիւն ունէր, իսկ թագաւորներն էլ ստանում են եղել Ա. Հոգու առաջ մատանի լինելով, նոյն իսկ նոցա երկնալին զահն էլ Տիրոջ զահ էր անուանում—ևս նստեց Սողոմոնը Տիրոջ Գահի վերաբերեալ թագաւորուց: Ինչպէս հին Խարակէլը, այնպէս էլ բոլոր քրիստոնեաները վաղուց ընդունում են, որ թագաւորն օծուելով մի այնպիսի զօրութիւն է ստանում, որը նորան իւր վեհ և շատ զժուար պաշտօնը ազնութեամբ կատարելու համար հարկաւոր է: Բոլորն էլ հաւատում են—«որ երկնքի թագաւորը օծում է երկրի թագաւորին Ա. Մեռոնովը, որ Ա. Հոգին ալդ օրից սկսած նորա վերաբ է սաւառնում» (Թագ. Ա. 16-13), ներշնչելով նորան ամեն տեսակ ճշմարտութիւն, առանց որի զահը խախուտ կարող է համարուիլ:

Հասարակական բարօրութեան համար իշխանութիւն և զօրութիւն ստանալով Վերին Տեսչութիւնից՝ ժողովրդապետը մեծ իրաւոնքներ և առաւելութիւններ ունի: Նա իւր հալեցողութեամբ կարող է հաստատել և թէ կատարել տալ ան բոլորը, ինչոր հասարակութեան բարօրութեան և ծաղկեցման նպաստել կարող է: Օր, նա իրաւոնք ունի (1) նոր օրէնքներ և վճիռներ հրատարակել, եղածները լրացնել և բացատրել, իսկ հասարակութեան վնաս բերող անմիտներն էլ հանել: (2) օրէնքների ճիշտ կատարելու վերաբ հսկողութիւն անել—քանդողներին դատապարտել, իսկ ոմանց քաջալերելու և ոմանց էլ ուղղելու նպատակով՝ պարզեներ և պատիժներ նշանակել (Հո. 13-3-4: համ. Պետ. Ա. 2-5). (3). Հասարակութիւնն անվտանգ պահպանելու համար զօրք ունենալ (Թագ. Ա. 8-11-12): Նոյն հասարակութեան անհրաժեշտ կարիքները հոգալու նպատակով—հարկեր նշանակել և հաւաքել (Թագ. Ա. 8-14-17), իւր թագաւորութիւնն էլ արտաքուստ թշնամիների լարձակումներից ազատ պահելու համար՝ ուրիշ թագաւորութիւնների հետ զաշը կռել, զանազան պայմաններ կապել և հարկաւոր եղած ժամանակը սպատերազմով իւր ժողովրդին պաշտպանել ազգի անբարիշտ թըշնամիներից: Պատերազմը, որ մեծ չարութիւնը հեռացնելու անխուսափելի չարութիւն է համարւում և ուրիշների կողմից զործածած բռնութիւնների և անսրդարութիւնների զէմ անհրաժեշտ դիմադրութիւն, նոյն իսկ Աստուածաբին Խօսքի համեմատ ներելի է ճանաչում: Աստուած նորան թողլ է տալիս իրեն զործիք անարժաններին պատժելու՝ որոնք անարդարութեան դէմեն եղել (Յննդ:

17₈₋₁₆. Երկ. 28-₁₅₋₂₅ և ուրիշները): Աստուած պատերազմի մասին խօսելով՝ նոցա չի դատապարտում (Ղուկ. 14 31-32), ալ հասկացնում է, որ զորանով Աստծու արդարադատութիւնը պատժում է անզգամներին (Ղուկ. 19 48-₄₄). Համ. 21 20-₂₁։ Մարկ. 13 7-8): Յով հաննէս Մկրտիչը ևս չէր դատապարտում զինուորներին, ալ ընդհակառակը, լորդորում էր ճշտութեամբ կատարել իրանց պարտականութիւնները (Ղուկ. 3-₁₄): Նոյնը տեսնում ենք և՛ առաքեալների ուսման մէջ: Պողոս առաքեալն ասում է.—«Զուր չէ, որ սուրբ է կապել մէջքին, որովհետեւ Աստծու սպասաւորն է և վրէժխնդիրը՝ պատժելու նորան, ով որ չար բան է ասում» (Հոռվմ. 13-4):

ՀՊԱՏԱԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՆՑ ԺՈՂՈՎՐԴԱ-
ՊԵՏԻ ՎԵՐՍՔԵՐԵԱԼ:

‘Յակրագոյն իշխանութեան վեհութեան և թէ մեծ իրաւունքներ ունենալու համեմատ հպատակներն էլ պարտաւոր են իրանց ժողովրդապետին—1՝ անկեղծ սրատվ սիրել և երկիւզածութեամբ լարգել (Պետր. Ա. 2-₁₇): Այս մասին Աստուած Խնքը մեզ աւսպէս է պատուիրում.—«Իմ օծածներիս մի դիմչէք (Սաղ. 10 4-₁₅, Համ. Ծընդնդ. 22-28), ալինքն՝ ոչ թէ նորա գէմ չ'ապստամբիք, ալ և՛ չ'դիմչիք նորան: «Խղճով հնազանդուեցէք», լարգելով նորա թագաւորական իշխանութիւնը, որ Աստծուց է ծագել. 2)՝ հպատակներն իրանց անկեղծ սէրը հետեւեալ կերպով պէտք է արտայալտեն—ա) նոքա պարտաւոր են ճշտութեամբ կատարել նորա բոլոր խելացի հրամանները և օրէնքները, և խոնարհութեամբ հնազանդուիլ նորա դատաստանական կարգադրութիւններին, որպիսի հնազանդութեան օրինակ ցոյց տուեց մեզ մեր Տէր Յիսուս-Քրիստոսը՝ ծովից հանած սատերով պահանջուած տուրքը վճարել տալով (Մատթ. 17 23-₂₇):

Ալդիսի հնազանդութիւն էին քարոզում իրանց հաւատացողներին և՛ առաքեալները: Պետրոս առաքեալը դրում է, —«Արդիկալին ամեն մի սահմանադրութեան հնազանդ եղէք Տիրոջ համար՝ թագաւորին—իրեն վեհապոյն անձն և կուսակալներին —իրեն նորանից ուղարկուածներ» (Պետր. Ա. 2-₁₃, Համ. Հոռվմ. 13-7): Միւս կողմից՝ նոքա խիստ տանդիմանում էին նոցա, որոնք հակառակ էին իրանց սեպհական ազատ իշխանութիւնն ունենալուն, աշխատելով իրանց ազգը մոլորեցնել և սուրկութեան հրէշաւոր ձգել (Պետր. Ա. 2-₁₀, 13-16, 18-19, Յով. 8. 16). բ) աղօթք

անել թէ թագաւորի և թէ այն մարդոց համար, որոնք ի խանութիւն ունին, որպէսզի «բոլորովին բարեպաշտութեամբ և պարկեցաւութեամբ խաղաղ ու հանդարտ կեանք վարենք» (Տիմ. Ա. 2 1,2): Այդ պարտական ենք անել, որովհետեւ զոքա պահպանում են թէ մեր հակունիքը և թէ մեր քրիստոնէական հաւատը, մանաւանդ որ այդ հաճելի է և՛ մեր Փրկչին (Նոյն-3). գ) հասարակական բարօրութեան համար հաւատարմութեամբ կատարել մեր հասարակական պարտականութիւնները, ամենքս մեր կոչման և դրութեան համեմատ, չ'խնայելով և՛ մեր կարողութեան չափ մեր սրաից ըղիսած զոհաբերութիւնները թէ փողով, թէ կարողութեամբ և թէ մինչև անդամ՝ անձնուիրութեամբ:

ԵՐԳՈՒՄ ԿԱՄ ԽՈՍՏՈՒՄ:

Մտնելով մի որ և է հասարակական պաշտօնի մէջ և կամցան-կանալով ինչ մի խեղաթիւրուած գործի ճիշդ պատկերը բաց անել, մարդիկ երգում են Աստծու առաջ՝ խոստացածը թէ ճշտութեամբ կատարելու և թէ լաւոնի գործի խսկ—ճշմարտութիւնը խոստվանուելու: Երգման պահանջը հաստատում է ալին, որ մարդիկ բարոյապէս դեռ այն բարձրութեան չեն հասել, որ ուրիշի «ալոն—այն», կամ «ոչն—ոչ» ասելուն հաւատան, հետեւալիս՝ դորա գործածութիւնը հասարակութեան մէջ երեւում է իրեն, մէկ կողմից, միմանց չ'հաւատալու արգասիք, խսկ՝ միւս կողմից՝ այնպիսի ենթագրութիւն, որ մարզու մէջ դեռ աղնաւութեան կալծը չի հանգել, լուսալով, որ՝ Ամենաստես Աստծու առաջ կանգնելով և նորան վկայ հրաւիրելով, ճշմարտութիւնը կ'պարզէ և սուտ չի խօսիլ: Ալսպէս ուրեմն՝ երգման նպատակն է մեր խօսքերին և խոստումներին ճշմարտութեան նշանակութիւն տալ և թէ՝ այդ խիստ միջոցով հասարակութիւնների մէջ արգարադատութիւնը լուր պահպանել և հարկադրել մարդոց ազնուութեամբ իրանց հասարակական պարտականութիւնները և խոստումները կատարել: Ուրիշ կերպ—երդման նպատակն է երկրիս վերալ—նախ՝ տարածել և հաստատել Աստծու թագաւորութիւնը, որը արգարութիւն, խաղաղութիւն և խնդութիւն է Ս. Հոգով (Հոռվմ. 14 17), և բ) քչացնել մոլութիւնները և խնցանքները («Ով չի կատարել այն բանը, ինչ որ երգումով խոստացաւ» ասում է Սիրաքը, «մեղքը իւր հետ կ'տանի, խսկ ով փուճ տեղը երգում կ'ուտէ, նա ինքն իրան մեղքից ազատ չի կարող համարել»):

Ավագիսի երդումն, իւր առաջ բերած նշանակութեամբ, Աստուած ոչ թէ միայն չ'արգելեց, ալլ և՛ հաստատեց և սրբացրեց նորանով, որ Ինքն էլ երդուեց: «Իմ Անձովս երդուեցի», ասում է Տէրը Արքահամին (Ծննդ. 22⁻¹⁶): Առաքեալն էլ Տիրոջ արդ Խօսքը երդման իրեւ օրինակ է առաջ բերում: «Աստուած Արքահամին խոստացաւ. բայց որովհետեւ Իրանից մեծը չկար, որ նորանով երդուէր, ալլ պատճառով իւր Անձով երդում տուեց» (Եթր. 6.⁻¹³): Հասկանալի է, որ Աստուած իւր ներողամտութեամբ աքստեղ իւր խոստմանը բուն մարդկալին վկայութեան կերպարանք է տալիս: Խրայելացոց նա մինչեւ անգամ օրէնքով հրամաքում է երդուելւախն էլ միայն իւր անունով—«Իմ անունովս երդուիր» (Ել. 22 8.⁻¹¹): Ինքը՝ Յիսուս-Քրիստոսը ևս, երբ հրէից քահանակապետը երդման տակ հարցրեց, երդումը լարգեց և ճիշտ պատասխան տուեց իւր Աստուածութեան մասին (Մատթ. 26.⁻⁶³⁻⁶⁴): Ս. Պօղոս առաքեալը Կորնթացի քրիստոնեաների առաջ երդուեց՝ ասելով—«Աստծուն վկայեմ բերում, որ ձեզ խնակելու համար Կորնթոս չ'եկաց» (Կորնթ. Բ.⁻¹⁻²³): Յովհաննու Յայտնութեան մէջ էլ պատմում է, որ «Հրեշտակը իւր ձեռքը դէպի երկինք բարձրացրեց և լաւիտեան կենդանի Աստծու անունով երդուեց» (Յայտն. Յովհ. 10 5.⁻⁶): Ինքն ըստ ինքեան պարզ հասկանալի է, որ ալդպիսի վեհ նշանակութիւն ունեցող երդումը պէտք է միայն ամենակարենոր դէպքերում գործածելի ախն էլ եղած գործի ճշմարտութիւնը ուղիղ լայտնելով կամ երդուողի խոստումը պնդելով: Ալդ բոլորին անհրաժեշտ է աւելացնել և՛ ալս, որ նա պէտք է լինի բոլորովին գիտակցական, ամենամեծ ուշադրութեամբ և ջերմեռանդութեամբ արտասանած և ալզատ, կրտորուկ վճռելով և երբէք երդմանը չ'զաւաճանելով: Երդուղները իրանց երդումն արտասանում են Քրիստոսի Ս. Կենսատու Խաչի և Ս. Աւետարանի առաջ սրբազնագործ հոգեռականի ներկալութեամբ, աջձեռքը վեր բարձրացնելով: Երդմիական խոստումից իսու՝ երդուղները համբուրում են Ս. Աւետարանը և Փրկչի Ս. Խաչը, որ նշան է, թէ իրանց արտասանած ճշմարտութեանը դոցա են վկաչ հրաւրում և ապա իրանց արդար զատը Աստծուն լանձնում կամ սուտի խօսելու և՛ կամ երդումն քանդելու դէպքում արժանաւոր պատի սպասելով:

ԸՆՏԱՆԻՔԸ. ՆՈՐԱ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Ընտանիք կազմում են հետեւեալ անձինք—ամուսիններ, որոնք ծնողներ էլ են կոչւում, և որդիք, իսկ շատ զերդաստաններում և՛ սպասաւորներ:

Ընտանիքը շատ կարևոր նշանակութիւն ունի թէ՝ եկեղեցու և թէ՝ թագաւորութեան համար: Իւրաքանչչւր մարդու վերաբերեալ, առանձնապէս՝ նա առաջին դրութիւնն է, որի մէջ մտնում է ամէն մէկը իւր ծնուելուց յետոր Ալսեղ նա, ծնողների և դաստիարակների ազգեցութեան տակ, զարդանում է և կատարելագործում ինչպէս մարմնապէս, ալնպէս և հոգեպէս, ալստեղ է նա առաջին անգամ զաղափար կազմում իւր Նշանակութեան, պարտականութիւնների և լարաբերութիւնների մասին—սովորում է կարգ ու կանոն, աշխատասիրութիւն, խոնարհութիւն և բարեպաշտութիւն: Ալսեղ և՛ վերջը, երբ արդէն հասարակութեան անդամ է զառնում և քաղաքացիական պարտականութիւններ կրում: Նա իւր համար հանգստութիւն, միսիթարութիւն և բաղդաւորութիւն է զանում:

Եկեղեցու վերաբերեալ նա երկրիս վերալ համարում է իբրև մի ուսումնարան Աստծու թագաւորութիւնը տարածելու և Քրիստոսի եկեղեցու անդամների թիւը շատացնելու նպատակով: Բարեպաշտ ընտանիքը, եկեղեցու համար ընտիր և բարեպաշտ անդամներ զաստիարակելով, նորան տալիս է լաւ կեանք քաշելու և ծաղկելու բոլոր անհրաժեշտ պայմանները: Սիրող բարեպաշտ ծնողները բարեպաշտ և սիրող, հնազանդ և անձնուէր որդիք են կըրթում: Դէպի ծնողներն ունեցած որդոց առաջին հիմնական երնական տրամադրութիւնները և զցացմունքները, ալսինքն՝ որդիական սէրը և անձնուէրութիւնը, անկեղծ հաւաաը և պարզութիւնը: Ալլն, մարդուս հոգու մէջ զարդացնում են և՛ համապատասխան կրօնական—բարովական առաքինութիւններ՝ քրիստոնէական հաւատ, լուս և սէր, խոնարհութիւն Աստծու Ս. Օքնքին և Աւետարանին: Քրիստոսի եկեղեցին, որի նպատակն է բոլոր ազգերը քրիստոնէութեամբ լուսաւորել, միայն ակն չափով կ'համանի ալդ զալպատիք ուղարկած իմաստի մէջ քրիստոնէական ուսման ողու ներս թափանցելուն կ'նպաստէ: Ընտանիքի վերալ է հիմնուում եկեղեցու ամրութիւնը և, հետեապէս, ազգի գոլութիւնը: Պատմութիւնը ցուց է տալիս, որ ակն ժամանակները, երբ կրօնա-

կան կեանքը հասարակութիւնների զանազան խաւերում թուլանում էր և մարում, ընտանիքի մէջ զեռ ևս ալդ սրբազան կրակը պահպանում էր, որի լոյսը և ջերմութիւնը աստիճանաբար թափանցում էին և' հասարակութեան մէջ, և արդպիսով կենդանացնում և նորոգում—բորբոքում հասարակութեան ալդ հանգած կրակը: Ընտանիքը և եկեղեցին, իրանց փոխադարձ աշակցութեամբ, ամբողջ բարուական աշխարհին հիմք և ամրութիւն են տալիս: Ժողովրդական կեանքի ամեն մի նորոգումը, ամեն մի արմատական փոփոխութիւնը, ամենից առաջ պէտք է կեանքի ալդ շրջանաներից դուրս գան:

Ընտանիքը թագաւորութեան համար ևս անխախտելի սկըզբունք է համարւում: Ընտանիքի կամ օջախի սէրը ընդարձակում է և դառնում կրակի պէս վառող հալրենիքի անկեղծ սէր, որը պատրաստ է, մինչև անդամ չ' խնայելով և' իւր կեանքը, ամենամեծ զոհեր մատուցանել հալրենիքի ազատութեան սուրբ Սեղանի վերալ իւր Աստծու և' կրօնի, ծնողների և որդոց, եղբայրների և' բոլոր արենակից հարազատ հալրենակիցների համար: Ընդհակառակն, եթէ նոյն իսկ ընտանիքի մէջ ազաւազուած են կեանքի հիմնական սկզբունքը, եթէ վշացած է հասարակական զարգացման և կարգաւորութեան ալդ սերմը, այն ժամանակ՝ ինչքան էլ արհեստական ձևեր ստեղծենք, նոքա իրանց հետ հասարակութեան համար առողջ կեանք չեն կարող ստեղծել և չեն էլ ամրացնել նորաբարօրութիւնը: Առանց ընտանիքի և առանց կրթութեան անհնարին է հաստատուն հիմունքների վերալ հասարակական և վարչական կարգաւորութիւն հիմնել:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՊԻ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ:

Ամուսնական կապը հաստատուած է և սրբացած նոյն իսկ Աստծու կողմէց: Ստեղծելով ալրամսւսնուն և կնոջը-Աղամին և Եւալին, Աստուած նոյա օրհնեց, ստեղով—«աճեցէ՛ք և շատացէ՛ք, լցրէք երկիրը և տիրեցէ՛ք դորան» (Ծննդ. 1-2):

Քրիստոնէական եկեղեցու մէջ ամուսնական կապը Քրիստոսի Եկեղեցու հետ հոգեոր միութեան ամենասրբազան խորհրդի օրինակն է համարւում: Ամուսնական խորհրդի մէջ ամուսինը և կինը, իրանց ամուսնական կապը օրհնող չնորհքը ընդունելով պատշաճաւոր կերպով իրանց կարեոր պարտականութիւնները կատարելու համար առանձին զօրութիւն և միջոցներ են ստանում (Եփ. 5-

5. 23-ը 2.): Քրիստոնէական ամուսնութեան մէջ բարձրացած են կընոջի իրաւունքները և կոչումը. քրիստոնէութեան զաղափարով—կինն ինչպէս այլը—ամուսնուց անպալման անարատութիւն և հաւատարմութիւն է պահանջում, ախնայէս էլ ամուսինն է նոյնը իւր կնոջից պահանջելու, և՝ բացի զորանից՝ կինը ոչ միայն մարդու օգնական պէտք է համարուի ժամանակաւոր կեանքի մէջ, այլ մ' յաւիտենական կեանքում նորան ժառանգակից: Առաքեալը ամուսնական կապի կարենրութիւնը վկալելով՝ նորան անուանում է՝ «մեծ խորհուրդ» (Եփ. 5. ղլ.), «պատուական և անխղելի կապ» (Եբր. 13. 4. Կորնթ. Ա. 7. 10-11) և նոցա, որոնք նորա պատիւը ատորացնում են, անուանում է՝ ստախօս, խղճմտանքով խանձուած և մոլորեցնող ոգի, իսկ նոցա ուսումը՝ զիւական (Տիր. Ա. 4. 1-7): Ամուսնութիւնը, օրինաւոր և սուրբ պահելով, ամենաբնական և լուսալի միջոցն է համարում որդոց քրիստոնէական դաստիարակութեան համար: Նոյն իսկ ամուսինների վերաբերմամբ այս պէտքէ մտքում ունենալ, որ նա վերջիններիս շատ փորձանքներից է ազատում, վաս հակումները ու կրքերը ոչնչացնելով կամ թուլացնելով և շատ աղնիւ առաջինութիւններ էլ առաջացնելով, որոնք նոցա Աստծու թագաւորութեան ժառանգորդներ են դարձնում:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՊԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ամուսնական կապի մաքրութիւնը և սրբութիւնը աւելի և աւելի բարձրացնելու նպատակով պէտք է, որ նոյն իսկ անուան ները թէ՝ Աստծու և թէ եկեղեցու ցոյց տուած իրանց պարտականութիւնները սուրբ պահեն, ինչպէս մըմեանց, ախնայէս և՛ իրանց որդոց վերաբերմամբ: Ալդ պարտականութիւնները հետեւալներն են—1) վկուսալարձ սէր, յարզանք և՛ համակրութիւն: Ամուսնական կապի յատկութեամբ ալր-ամուսինը և կինը պէտք է միմեանց սիրեն ախնայէս, ինչպէս իրանց անձը, որովհետն նոքա ոչ թէ երկու, ալլ մի սարմին են» (Մարկ. 10. 8): Ալդպիսի սէրը պէտք է միանալ փոխադարձ լարգանքի հետ, Պետրոս առաքեալը ստում է—«ալր-ամուսիններ, խոհեմութեամբ վարուեցէք ձեր կանանց հետ, ինչպէս ամենատկար անօթի հետ, և ցոյց տուէք նոցա պատիւ ինչպէս կենսատու շնորհքի ժառանգակիցներ» (Պետր. Ա. 3. 7): Միւս կողմից էլ կանանց պատուիրում է սիրել, լարգել և հնազանդուիլ իրանց ալր-ամուսիններին—«կանալք, հնազանդ եղէք ձեր ալր-ամուսիններին, ինչպէս որ վակել է Տիրոջ անունով» (Կող. 3

—₁₈— «ինչպէս եկեղեցին հնագանդ է Քրիստոսին, այնպէս էլ կանագը ամեն բանում պէտք է հնագանդ լինին իրանց ալր-ամուսիններին» (Նփ. 5-₂₄): Ընդունուած է և այս, որ «կինը պէտք է երկիւղ կրէ ալր-ամուսնուց»: Հնագանդութիւնը և երկիւղը չ'պէտք է լինին ստրկական, այլ ազատ ու անկեղծ: Իւր վերանց ալր-ամուսնու առաւելութիւնը ճանաչելով՝ երկիւղը կնոջ առաջ իրեն մի զգուշութիւն է կանգնում, որ նա ինչ մի բանով չ'վստահանալ իւր սիրելի ալր-ամուսնուն անպատուել: Այդ տեսակ փոխաղարձ վարմունքների և լարաբերութիւնների միջոցով կարելի է ամուսինների մէջ պահպանել փոխաղարձ համաձայնութիւն, լարաբերութիւն և սէր, որոնք նոցա կարող են փոխաղարձ բաղդաւորութիւն պատճառել:

2) Ամուսնական հաւատարմութիւն: Ամուսնական հաւատարմութիւնը պէտք է մինչև մահ անփոփոխելի լինի և բոլորովին հեռու չնութիւններից ոչ թէ միայն զործով, այլ և մաածողութեամբ և ցանկութեամբ (Մատ. 5-₂₇₋₂₈): Ամուսինները պէտք է միմեանց բարեն ինչպէս միմեանց պատկանած, մի մարմին կազմած անձնաւորութիւններ:

3) Ամուսնական հաւատարմութեան ընթացքում ամուսինները՝ պէտք է մաքրութիւն և անարաստութիւն պահպաննն, պէտք է իրանց զգալական ցանկութիւնները զսպեն և զգուշ լինին, որպէսզի «սատանան նոցա անժուժկալութեամբ փորձանքի մէջ չ'ձգէ» (Կորնթ. Ա. 7-₅), և՝ առհասարակ՝ պէտք է իրանց այնպէս սուրբ պահեն, ինչպէս վայել է իրանց հրաւիրող Սրբին (Թեսաղ. Ա. 4-₇):

4) Ամուսինների փոխաղարձ ուրը շատ անդամ թուլանում է և ոչնչանում միմեանց փոխաղարձաբար չ'հաւատալուց, կասկածելուց և զաղտնամիտ լինելուց: Ալստեղից են առաջ գալիս սրտի համար զանազան տնհանգուստութիւններ և մաշող վշտեր, թշնամութիւն, փոխաղարձ անպատւութիւններ և ուրիշ զառնութիւններ: Այդ, 'ի հարկէ, չ'պէտք է լինի քրիստոնեալ ամուսինների մէջ, ուստի և՛ նոքա ամեն իերապ պէտք է աշխատեն, որ միմեանց հետունցած փոխաղարձ հաւատը և պարզութիւննը պահպաննն: Անկեղծ և պարզ լարաբերութիւնների ժամանակ կասկածները բոյն չ'պէտք է դնեն, ինչպէս և՛ դոցանից ծագող զանազան անհանգուստութիւններ և անախորժութիւններ:

5) Բայց եթէ, հակառակ դէպքում, իրար մէջ անհամութիւններ են ծագել, այն էլ միմեանցից առաջացած մի քանի թուլու-

թիւնների և պակասութիւնների պատճառով, այն ժամանակ՝ նոռքա պէտք է աշխատեն զոցա հեռացնել—որի ամենալաւ միջոցն է՝ համբերութիւնը և զիջողութիւնը:

6) Վերջապէս՝ նոռքա ամեն ժամանակ պէտք է միմեանց օգնեն՝ ինչպէս նիւթական կարիքներում, այնպէս և, հոգեւոր պահանջներում: Այդ գէպքում՝ ալր-ամուսինը, ինչպէս կնոջ և ընտանիքի գլուխ, զլխաւորապէս՝ պէտք է հոգս քաշէ իւր ընտանիքի առողջութեան և արտաքին բարօրութեան մասին: Նորանից, իրեն ընտանիքի զլխաւորից, ամենից աւելի հեռու պէտք է լինին անհոգութիւնը և ծուլութիւնը: Առաքեալն ասում է—«եթէ մէկը իւրավինների, կամ իւր ընտանիքի՝ մասին հոգս չ'քաշէ, նա իւր հաւատը ուրացած և անհաւատից էլ վատ մարդ կ'համարուի» (Տիմ. Ա. 5-₈): Միս կողմից՝ կինն էլ պէտք է աջակցէ ընտանիքի բարօրութեանը—նորանից պահանջումը՝ ինալողութիւն, կարգ ու հանոն և մաքրութիւն: Խուսափելու է զատարկ պերճութիւնից և շըռավլութիւնից, որոնցով և՛ իւր ալր-ամուսնու հոգսերը կ'պակասեցնէ իւր ընտանիքի պահպանութեան միջոցները գտնելու զործում: «Շատ բազգաւոր է այն մարդը», ասում է Ֆողովողը, «որ հնազանդ և խաղաղասէր կին ունի: Եթէ որ մարդս կարող է անմահ լինիլ, այդ իւր կնոջ քաղցր կենակցութեամբ կ'լինի, կամ զոնեա կրկնապատիկ աւելի կ'ապրի: Առաքինի կնոջ սիրելի եղանակները (կերպերը), իւր ամուսնու սրտի մէջ և երեսին միշտ ուրախութիւնը և զուարթութիւնը անշէջ կ'պահեն: իսկ լաւ վարմունքը և տնական զործերի վերաց ունեցած զովանի հակումը ամուսնուն կ'աղատէ անհանգստութիւնից և զժուարութիւն քաշելուց, և մի այնպիսի բան էլ չկատ, որ նորան այնպէս զուարճացնէ, ինչ որ առաքինութիւնն է խոստանում իւր ողջախոն կնոջով:— «Սուրբ և ողջախոն կինը ամեն տեսակ չնորհքից մնե չնորհք է, որի հետ չի կարող ուկու արձէքը համեմատուիլ»: Ամուսինները, բացի վերեւ լիշած անհրաժեշտ պարտականութիւններից, միմեանց պէտք է օգնեն և՛ հոգեոր պահանջներում—նոքա պարտաւոր են՝ իրար սիրտ տալ ճշմարտութեան և առաքինութեան ասպարիզում, ազօթել թէ միմեանց համար և թէ իրար հետ, այնպէս որ իրանց փոքրիկ շրջանուս կազմելու են իրանց համար մի այնպիսի տնացին եկեղեցի, որը պէտք է անշուշտ զտնուի մեր Ազգային Հայաստանեալց Առաքելական եկեղեցու հովանու տակ: Այդպէս պէտք է վարուի աւելի այն ժամանակ, երբ ամուսինները որդիք կունենան:

ՈՐԴՈՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ:

Ամուսինները, ծնողներ դառնալով, բնականաբար՝ պարտաւոր են իրանց որդոցը սիրել—ինչպէս իրանց մարմինը և արիւնը, և դաստիարակել,—հոգալով նոցա սնունդը, կրթութիւնը, ճշմարիտ բարուական ուղղութիւնը, և, երբ որ ժամանակը հասնի, լաւ վիճակը: Եթէ նոքա իրանց որդոց ստացուածքը կ'փշացնեն, — զող և աւազակ կ'համարուին. եթէ նոցա կ'զալթակղեցնեն—որդեսպան կ'լինին, եթէ դաստիարակութեան մասին անփոյթ կ'զանուին,— մատնիչ են, պատճառելով ինչպէս իրանց, ախազէս ե՛ ամբողջ ընտանիքին անդարմանելի թշուառութիւններ: Շատ անդամ էլ նոցա համար անհաշիւ հարստութիւն դիզելու և հարուստ ժառանգութիւն թողնելու նպատակով, դաստիարակութեան վերալ պէտք եղած ծախքը խնայում են, չ'ողալով ախ ամենը, ինչ որ հարկաւոր է նոցա կրթութեան և լառաջաղիմութեան համար և, այսքանները անելով, աւելի վնաս են հասցնում նոցա, քան թէ այն օդուտը, որ կարող է առաջ զալ: Նոցա համար մեծ հարստութիւն թշունելով: Որդոց դաստիարակութիւնը զրւում է ծնողների վերալ նոյն իսկ Աստծու կողմից: «Հայրեր», պատուիրում է Աստծած, «ձեր որդոցը դաստիարակեցէք Տիրոջ խրատով և ուսումով» (Եփ. 6-4): Ոչ ոք այնքան մօտիկ չէ որդոց, ինչքան հալրը և մալրը, և ոչ էլ ախազէս լաւ չի կարող դաստիարակել նոցա, ինչպէս ծընողները, եթէ վերջիններս զորա համար բոլոր հնարաւոր միջոցները զոյ ծ կ'դնեն: Թէ զանազան հանգամանքներ կարող են այդ գործը շատ զժուարացնել, օր. անձնական կրթութեան և նիւթական միջոցների պակասութիւնը, պաշտօնը և որիշ զբաղմունքները, բայց և ախազէս՝ այդ կերպ զժուարութիւն շատ քիչ կ'պատահի: Վերև լիշած դաստիարակութեան և կրթութեան մասին կատարած աշխատութիւնը հարիւրապատիկ աւելի է վարձատրւում թէ ներկայ և թէ ապագայ կեանքում: Ընտիր դաստիարակուած որդիքը ամենալաւ մխիթարութիւնն են ծնողների համար՝ սոցա ծերութեան օրերին, և Աստծու զիտութեան զրաւականը ապագայ կեանքում: [«Եթէ իմաստուն ես, քեզ համար ես իմաստուն, եթէ ծաղր անող ես, նորա պատիմը միան զու կ'կրես» (Առակ. 9-12): Փիմաստուն որդին իւր հօրը կ'ուրախացնէ, բայց անմիտ որդին իւր մօր համար տրտմութիւն է»] (Ել. 8₁₆₋₁₈): «Որդիակ իմ», ասում է Սիրաք իմաստունը. «Հոգա քայիր հօրդ վերալ, նորա ծերութեան ժամանակ, և մի տիրեցներ նորան իւր կեանքի մէջ: Եթէ նորա

խելքը տկարանայ, համբերի՛ր և մի՛ արհամարհիր, որովհետեւ քոհը ցոլց տուած սէրը չի մոռացուիլ և Աստծուած էլ քեդ կ'վարձատրէ քո մօրդ պակասութիւններին համբերելու համար. քեզ դարութեան մէջ կ'ամրացնէ, քո ցաւերի և վշտերի օրերին քեզ կ'լիչէ և քո մեղքերդ էլ կ'ոչնչանան սառուցի պէս, որը պարզ օրը կ'հալուի: Ինչպիսի վատ անուն կ'վաստակէ նա, ով հօրը կ'թողնու, և բնչպէս Աստծուց կ'անիծուի նա, ով որ իւր սիրալ կ'քարացնէ իւր մօր վերալ]: Պօղոս առաքեալը ասում է, որ «որդոց դաստիարակութիւնը Աստծու առաջ համելի է» (Տիմ. Ա. 5): Քրիստոնեալ ծնողները պարտաւոր են իրանց որդոց քրիստոնէական հոգով դաստիարակել, ինչպէս իրանց ազգակին քրիստոնէական եկեղեցին է հրահանգում: Այդ պատճառով՝ նոքա Մկրտութեան խորհրդի միջոցով ամենից առաջ պէտք է իրանց որդոցը Քրիստոսի եկեղեցի մտցնեն (Յովէ. Յ₅₋₆) և Քրիստոսի մարմնի անդամներ գարձնեն: Գորանից լետո՛ պէտք է երեխաներին շրջապատող անձերի անմիջական աղղեցութեան վերալ մեծ ուշադրութիւն դարձնել: Ծնողների և թէ ընտանիքի միւս անդամների բարեպաշտարամադրութիւնը, որ արտաշակտում է անկեղծ սրտից բղիած ազօթքով, բարերար աղղեցութիւն է անում երեխաների կրօնական դաստիարակութեան վերալ: Մայրը, օրինակ, չոքում է և ջերմեռանգութեամբ աղօթում, որդին էլ, մօրը նմանուելով, չոքում է, երեսին խաչ է հանում և զլուխը խոնարհեցնում, ինչպէս որ կարող է Աղօթքի խօսքերը մօր հետ կրկնելով, նա մեքենապար կրկնող չի հանդիսանում, եթէ մօր աղօթքը իսկապէս անձողի չէ արտաշակտուած: Նորա մէջն է արդէն Աստծու Հոգու զրաւականը, Որը, «մեր հոգուն վկայում է, թէ՝ մենք Աստծու որդիքն ենք» (Հո. 8-16), և երեխակի աղօթքն էլ, թերեւ նորա մէջ այդ Հոգու արտակտութիւնն է համարւում, եթէ նա զրաւակում է աղօթող մօր աղնիւ զդացմունքով: Երբ երեխան մկում է պատմութիւն լսել, թնդ մալրը, ծծմալրը, կամ մի ուրիշը՝ նորան մանկական լեզւով Սրբազն պատմութիւնից, աւելի Նոր կտակարանից, ընտիր գէպքեր պատմեն: Հայրը այդ միջոցին այնքան էլ մօտիկ չի կարող երեխակի դաստիարակութեան մէջ մտնել, ինչպէս մալրը, բայց և ախազէս՝ նա ևս չ'պէտք է այդ զործից խուսափի, մանաւանդ տնալին աղօթքների ժամանակ, որոնք որոշակ ժամերին պէտք է կատարուին ոչ թէ միայն նորա ներկալութեամբ, այլ և ախազէս, որ նա ինքն էլ աղօթքի մասնակցէ, որը

մեծ նշանակութիւն ունի ամբողջ ընտանիքի կրօնական տրամադրութեան համար:

Երեխաներին քրիստոնէական զարգացում տալու համար աւելի լաւ կ'լինի լաճախ նոցա եկեղեցի տանել, համբուրել տալ Ս. Խաչն և Աւետարանը,—որովհետեւ եկեղեցում ազօթողների ազօթական տրամադրութիւնը և նոյն իսկ Աստուածպաշտութեան ծէսը արասպիւլի կերպով և՛ զրգուում են ճշմարիտ կրօնական զգացմունքը: Յետո՞յ անհրաժեշտ է շուտ-շուտ երեխաներին Ս. հաղորդութեանը արժանացնել, իսկ՝ հասակի համեմատ՝ աստիճանաբար զանազան կրօնական պահանջներ կատարել տալ օրապաշխարել, որոնց եկեղեցին իւր անդամների համար է նշանակել: Ամեն ծնող չի կարող իրանց որդոց հաւատի ուսումն աւանդել, ալդ պակասութիւնը լրացնելու է ուսումնաբանը, կամ եկեղեցին: Քայլց եթէ ծնողները ալդ դէպքում մի քիչ բան են հաղորդում, այն էլ լինում է ամենազլիսաւորը, որը ծնողներն ամենալաւ ձնով են աւանդում: Նոքա իրանց որդոց սովորեցնում են սրտով և հաստատուն կերպով Աստծուն, Փրկչին, և Նորա Ս. Եկեղեցուն հաւատաւուն կ'աւատից էլ չնորհալի կեանքի համար ոգեսրութիւն և օգնութիւն քաղել:

Առասարակ՝ ծնողները իրանց կրօնական զիտութիւնները, ձգտումները և զգացմունքները զարգացնելու և ամրապնդելու համար պէտք է Աստծու տուած բոլոր միջոցներից օգտուին, որոնք լաւանի են բնական և գերբնական օրէնքներում: Աւելի բարերար ազդեցութիւն կարող են նոցա վերաբ ունենալ Աստուածալիին Դմաստութեան, Սրբութեան, Ամենազօրութեան, Արդարադատութեան և Աստուածալին չնորհքի գործողութիւնները—մարդկալին կեանքի ճակատագրերի մէջ: Ալդ դէպքում ծնողների պարտականութիւնն է իրանց երեխանց հասկացնել Աստուածալին Նախախնամութեան ճանապարհները և ուշադրութիւն դարձնել տալ թէ իրանց և թէ հասարակական կեանքի ճակատագրերի վերաբ: Դէպքերը այստեղ շատ կարող են լինել: Առանձին նշանակութիւն ունեցող բոլոր հանդամանքները—բաղդի մէջ բարձրանալը, վտանգուներից հեռանալը, կարիք եղած ժամանակ պաշտպանութիւն և հոգանաւորութիւն գտնելը, թշնամիներից ազատուիլը, սկսած գործեղանացած լաջողութիւնը կամ անլաջողութիւնը, զանազան հասարակական թշուառութիւնները և ուրիշ դէպքերը,—բոլորն էլ խիստ մտածել են տալիս միան Աստծու և Նորա Նախախնամութեան մասին (Ելից. 13-8. Երկ. 6. 4-8. 32-4. Սաղմ. 77 3-8 և ութեան մասին)

րիշներ): Իրանց բոլոր խրատները նոքա պարտաւոր են երեխաներին աւանդել աստիճանաբար, որքան որ վերջիններս հասունացած կ'լինին ըմբանելու, այն էլ միշտ սիրութեամբ աշխատեցնելով, որաբէսղի երեխաները բաւականութիւն ստանան Աստծու մասին մատելիս, խօսելիս, լսելիս և Նորան հնազանդուելիս, որ նոքա ջերմեռանդ երկիւղ զգան իրանց սրտի մէջ, զգուշանալով ինչ մի կերպ և ինչ մի բանով Նորան անդամուելուց: Պէտք է երեխաներին այն կետի հասցնել, որ նոքա միշտ Աստծուն համելի բաներ անեն, հասկանալով, որ ամեն զործ Աստծով սկսում է և Աստծով էլ պէտք է վերջանալ, լիշելով, որ ասանց Աստծու ոչ մի բարի բան չենք կարող անել: Երբ նոքա ձշմարիտ ճանապարհից կ'շեղուին և բարոգապէս կ'փշանան, այն ժամանակ ծնողները պէտք է նոցա օղնեն բարոլական անկումից կանգնելու և կրկին ճշմարիտ ճանապարհի կողմն գառնալու, որի համար նոքա պարտաւոր են միշտ ալդ շեղումները և բարոյական պակասութիւնները զգուշացնել և ալդպէս շարունակել տալ, մինչեւ որ նոքա բարոյական լաւ բան անել կ'սովորին: Դորա համար կան զրական և բացասական միջոցներ:

Դրական միջոցները ուղղակի աջակցում են և օգնում երեխաներին իրանց բարոյական պարտականութիւնները կատարելու: Երբ, օր, նկատում է, որ երեխաները հաւատի վերաբերեալ իրանց պարտականութիւնները կատարելում սառել են, բարոյական լոգնածութիւն և թմրութիւն ստացել, որոնց մասին մատնացոց են անում: ինչպէս ծնողները, այնպէս և զաստիարակները, այն ժամանակ ծնողները կարող են նոցա իրանց անձնական և անկեղծ մասնակցութեամբ ողերել: Երբ ուրիշների վերաբերեալ իրանց որդոց մէջ նկատում է անհամբերութիւն, զրգումն և ալլ վրդովմունք, այն ժամանակ ծնողները խելացի կերպով, իրանց սրտանց մասնակցութեամբ, կարող են հանգամանքները փոխել և նոցա ըզգացմունքներին ու արամազդրութիւններին աւելի լաւ ուղղացնելու տալ: Բացասական միջոցներին պատկանում են արտաքին շարժառիթները, որոնցով կարելի է երեխաների վերաբ ազգեցութիւն անել՝ միշտ բարի և զովելի զործ կատարելու ձգտումն նոցա մէջ պահպանելու նպատակով, որոնք են—գովասանքը և լանդիմանութիւնը, պարզեց և պատիժը, հաճելի խօսումը և սպառնալիքը:

Նկատի ունենալով, որ արած բարութիւնը զովելի է համարում միայն մամանակ, երբ նա բոլորպին ազատ կերպով է կատարուած, առանց որեւէ հարկադրութեան, պէտք է ընդունել,

որ լիշեալ միջոցներից միան առաջնները էական նշանակութիւն ունին, իսկ վերջինները ոչինչ չեն կարող տալ բարովական բնաւորութեան դրական կրթութեան համար, ուստի և առանձին էլ զին չունին, Հաղուագիւտ դէպքերում՝ նոքա մեծ զգուշութեամբ կարող են գործածուիլ սանիկին չար բանից լեռ կանգնեցնելու և կամ դէպի բարին մի որեէ փոփոխութիւն անելու նպատակով։ Միան թէ այդ բացասական միջոցներից լեռու անպատճառ պէտք է դրական միջոցները առաջ գան, ալլապէս՝ առաջններից աւելի շուտ վնաս կ'ստացուի, քան թէ օգուտ։ Առասարակ քրիստոնէական զաստիարակութիւնը պէտք է տոգորուած լինի հեղութեան և սիրու հոգով։ Աէրը պէտք է բոլոր հալրական միջոցների մէջ թափանցի, որոնք երեխաների կրօնական-բարովական դաստիարակութեանն են վերաբերում։

Վերջապէս, իրանց որդոց ճշմարիտ դաստիարակութեան համար իրանց կողմից ամեն բան անելով, ծնողները միշտ պէտք է Աստծուն աղօթքով զիմեն և խնդրին, որ նա իրանց որդոց զարգանէ Աստուածակին երկիւղով, միանգաման ընդունելով, որ «իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է»։

Որովհետեւ երեխաներին շրջապատողների մէջ, ծնողներից լեռոյ, առաջին տեղն են բռնում սպասաւորները, որոնց ապղեցութիւնը որդոց դաստիարակութեան վերալ մեծ է, մանաւանդ մինչ — ուսումնարանական շրջանում, օրօրոցից սկսած, ուստի՝ չպէտք է թողլ տալ նոցա—այսինքն՝ ծծմալրներին, դաիեակներին, նաժիշտաներին, աղախիններին, խոհարարուհիներին և ծառաներին, որ նոքա անմիջապէս որդոց դաստիարակութեան մէջ խառնուին, միշտ մոքում ունենալով, որ այդ կերպ աղղեցութեան տակ դաստիարակուած որդիք մանրմնով ծնողների դաւակներ կ'համարուին, իսկ հոգով՝ սպասաւորների, որը շատ տխուր և անբնական երեսով կ'լինի մեր կանոնաւոր կեանքի համար։

ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ Մէջ ԵՂԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Եղբայրների, քոլրերի և միւս աղղականների փոխադրձ լարաբերութիւնները պէտք է ամենամտերիմ, անկեզծ և սրտանց վենին, նոքա, որքան հնարաւոր է, պարտաւոր են միմեանց փոխադ օգնութիւն և ծառալութիւն մատուցանել, համակրական ուղարձ գարնութիւն դարձնել և զանազան ձախորդութիւններից զգուշացնել։ Աւագ եղբայրները և քոլրերը, փոքրերի դաստիարակութեան

մէջ և թէ՝ առհասարակ՝ ամեն բանում, ինչ որ տնալին կեանքի բարեկազմութեանն է վերաբերում, պէտք է ծնողներին օգնին, իսկ վերջիններիս մեռնելոց լետոյ էլ՝ տան մէջ նոցա տեղը բռնեն։ Պօղոս առաքեալը ասում է — «ով իւրաքինների՝ աւելի տնալինների՝ մասին հոգս չիքաշել, նա հաւատից հրաժարուած և անհաւատից էլ վատ մարդ կ'համարուի»։

ՀԱՅ—ՔՐԻՍՏՈՆԷԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՑԵՐՈՒՄ ԵՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ Ս. ԳՐԲԻ ԵՒ ԱԶԳԱ-ՑԻՆ Ս. ԵԿԵՂԵՅՅՈՒ ՈՒՍՈՒՄՈՎ, ՀՐՈՀԱՆԳՈՒԵԼՈՒ։

Ս. Գիրքը, իրեւ Ամենաղէտ, Ամենիմաստ և Ամենաբարի Աստծու Խօսք, ամեն մի մարդու վրկութեան դործում խորհուրդ։ Ներ է տալիս (Մատթ. 4-4, Պետր. Ա. 2-2, Տիմ. Բ. 3 ₁₅₋₁₇): Նորա մէջ Ամենաբարի և Ամենիմաստ Աստուածը տուել է ան բոլորը, ինչ որ անհրաժեշտ է և օյտակար ամեն մի մարդու ճշմարիտ առաքինի կեանքի համար, որ նա լինի կատարեալ մարդ և ամեն տեսակի բարեգործութիւն անելու համար սպատրաստ և ընդունակ անձնաւորութիւն (Տիմ. Բ. 3 ₁₀₋₁₇): Ս. Գիրքը բաւականութիւն է տալիս մարդկաբին հոգու բոլոր զիմաւոր պահանջներին, որոնք պարունակուում են ճշմարտութեան, բարութեան և զեղեցկութեան մէջ։ Նա զաղափար է կազմում և՛ Աստծու մասին, Որն է ամենակատարեալ ծշմարտութիւն, բարութիւն եւ զեղեցկութիւն։ պատկերացնում է մեզ մարդուն վերաբերեալ Աստծու և Աստծուն վերաբերեալ մարդու բոլոր լարաբերութիւնները, բաց է անում վերջինիս առաջ իւր կեանքի և նշանակութեան ճշմարիտ նպատակը (Մատթ. 5-₄₈ .Յովէ. 17. ₂₁₋₂₃₋₂₄), զորա հետ և՛ այն միջոցները, որոնցով հասնելու է ալդ նպատակին (Յովէ. 3-₅, 15-₄₋₅ 17-₃ .Մատթ. 22 ₃₇₋₄₀ Մարկ. 8-₃₄ .Փիլ. 2-₁₅, Գաղ. 5 ₂₂₋₂₃, և ուր.), հասկացնելով՝ որ մեր «Հալաստանեացց» Եկեղեցին աղղաքին զորութեան ամենազօրեղ զործոններից մէկն է համարում, որի հոգով ամեն մի ճշմարիտ հալքրիստոնեալ պէտք է ամեն մի քալափոխում հրահանգուի, եթէ ինքն կամենում է իրեւ իսկական—հայ ապրել։

Մեր Քրիստոնէական Եկեղեցին ճշմարտութեան սիւնն է և հաստատութիւնը» (Տիմ. Ա. 3 ₁₅): Առաքեալները նորա մէջ են մտցրել այն բոլորը, ինչ որ ճշմարտութեանն է վերաբերում, ալն-պէս որ ամեն մարդ կարող է աբնաւղից նոր կեանք ստանալ։ Նա արդարեւ, լիապէս իւր մէջն է ամփոփում Աստուածաբարտնու-

թեան ամբողջ ձշմարտութիւնը։ Ս. Հոգով անմիջապէս զեկավարուե՛
լով (Յովէ. 14.16.26), Նա իւր հոգեոր հովիւների և ուսուցիչների
միջոցով բացատրում է այդ ձշմարտութիւնները և իւր հաւատացող-
ներին իբրև խրատ և մխիթարութիւն առաջարկում, որ «նոքա
սորանից լետով մանուկներ չ'մնան, երերած և՝ վարդապետութեան
ամեն տեսակ հովերից այս և այն կողմն՝ տարուբերուած՝ մարդոց
խարեբալութեան պատճառով, որոնք խորամանկութեամբ այդ բո-
լորը մոլորեցնելու համար են կատարում, ալլ սիրով, ձշմարտու-
թեանը հետևելով, ամեն բան Քրիստոսով ամեցնեն, Որը զլուխ է»
(Յի. 4. 5-15): Դորա նետ միասին Նորան պարզեցուած են Ակեանք և
բարեպաշտութիւն» ձեռք բերելու բոլոր միջացները։

Այդ պատճառով՝ ամեն մի հայ-քրիստոնեալ, քնականաբար,
իւր կեանքի բարոր հանգամանքներում, բալոր թշուառութիւննե-
րում և նեղութիւններում, բաղդաւորութեան և անբաղդութեան մէջ
պէտք է զեկավարուի Ս. Գրքով և Ազգափին Ս. Եկեղեցով։ Այդ
Վարդապետութիւնով հրահանգուած՝ նա կարող է և՛ մին բոլոր կաս-
կածները փարատել, որոնք կ'ծագեն նորա հպարտ մտքի մէջ։ Աստ-
ծու Խօսքը և Եկեղեցու Վարդապետութիւնը կեանքի բոլոր դժուար
հանգամանքներում կարող են մարդուն խրատ տալ փրկութեանը
յաջողութեամբ համանելու և բոլոր գֆբաղդութիւններում նորա վըշ-
տացած սրտին մխիթարութիւն պատճառելու հպատակով։ Այսպէս,
օրինակ, թշուառութիւնները և անբաղդութիւնները, որոնց լաճախ
ենթարկում են բարի և առաքինի մարդիկ, դժուար հանելուկնե-
րից մէկն են համարում, որը զանազան կասկածներ և ենթադրու-
թիւններ է ծագեցնում ամեն մի մտածող մարդու հոգու մէջ։ «Յալո-
նութեան Վարդապետութիւնը» այդ տեսակ մաշող հանելուկներից
մեզ բոլորովին ազատում է։ Եկեղեցու և լիչեալ Վարդապետու-
թեան լուսով մնաք ընդունում ենք մեզ հասած թշուառութիւնը ոչ
թէ իբրև թշնամութիւն, կամ չարչարանք, ալլ իրու մեր մեզքերի
ձշմարիտ պատիփ, հոգեկան հիւանդութիւնների բժիշկ, և մեզ բա-
րութիւն անելու, շնորհք և սիրտ տալու համար Աստծուց եկած
աւետարեր հրեշտակ (Յիր. 12. 6-15), ուրիշութիւն՝ անցած փորձերից
ապագայ ազատ, ինքնուրովն կեանքի համար բնտիր խրատներ հանել։



Ա Զ Դ

Սոյն «Քրիստոնէական Բարոյագիտութեան» նիւթերը
աւանդել եմ, մի քանի յապաւումներով, Տփխիսի երկրորդ
արական զիմնազիօնի է և Ը զասատան հայ աշակերտներին,
ուստի և՛ ներկայ տպագրուած ուղեցոյց գրքոյիս նոցա եմ
նուիրում, յորդորելով՝ միշտ իրանց սրտում վառ պահել սո-
րանից ստացած ընտիր-բարդական հրահանգները։

Դրիգորիս քահանայ երգնկեանց։

Ց Ա Ն Կ

- | | |
|--|----|
| Աղբիւրներ | 3 |
| Քրիստոնէական բարոյագիտութեան կազը քրիստոնէա- | |
| կան հաւատի ուսման հետ | 5 |
| Ա. Աստուածալին օրէնք | 6 |
| Բնական բարոյական օրէնք | 6 |
| Արտաքին կամ Աստուածալին Յալունութեան օրէնքի մա- | |
| սին, Հ Հին-Ուխտի Մովսիսական օրէնք | 8 |
| II. Քրիստոսի կամ Աւետարանի օրէնքը Նորա առաւելու- | |
| թիւնը Հին-Ուխտի Մովսիսական և ամեն տեսակ զը- | |
| րական օրէնքի առաջ | 10 |
| Բարոյական օրէնք կատարելու շարժառիթները | 17 |
| Բարոյական վարձատրութիւն | 20 |
| Քրիստոնէական առաքինութեան լատկութիւնները կա- | |
| րերութիւնը և անհրաժեշտութիւնը, նորա գերազան- | |
| ցութիւնը հեթանոսական առաքինութիւնից | 24 |
| Շնորհք և աղատութիւն, Շնորհքի անհրաժեշտութիւնը և | |
| նորա լարաբերութիւնը ազատութեան հետ | 28 |
| Աստուածալին շնորհքի աղդեցութիւնը մարդուս վիրայ, | |
| Աստծուն զիմնելու միջոցին | 30 |
| Աստուածալին շնորհքի աղդեցութիւնը մարդուս վերայ, | |
| Աստծուն զիմնելուց իւս, հոգեոր—բարդական կեան- | |
| քի աստիճանները | 33 |
| Մեղք. | 34 |

Մեղանչականութիւն, հրապոլը, թուլութիւն և մոլութիւն	35
Աստծու ներողամտութիւնը	37
Քրիստոնէի պարտականութիւնների գլխաւոր տեսակները	39
Աստծու վերաբերեալ ունեցած պարտականութիւնները	39
Ներքին և արտաքին Աստուածպաշտութիւն	40
Ներքին Աստուածպաշտութեան պարտականութիւնները	41
Ներքին Աստուածպաշտութեան պարտականութիւնների հակառակ մեղքեր	42
Արտաքին Աստուածպաշտութեան զլխաւոր տեսակները	44
Արտաքին Աստուածպաշտութեան պարտականութիւնների հակառակ կատարած մեղքեր	45
Հասարակական Աստուածպաշտութեան մէջ ունենալու մասնակցութիւնը.	46
Աստծու տաճարների վերաբերեալ պարտականութիւնները . տաճար, խաչ, աւետարան, պատկերներ և մասունք (հշիարներ)	47
Տաճարում վակելու պահելու պարտաւորութիւն	50
Խաչակնքելու, զլուխ տալու և ծունը զնելու պարտաւորութ.	51
Տօնալարպութիւն, Տօնական հանգստութիւն և պարապութիւն	52
Պահեցողութեան (պահքի—պասի) նշանակութիւնը	53
Ք. Քրիստոնէի ընդհանուր պարտականութիւնները իւր վերաբերեալ .	56
Խւր անձին ցոյց տուած ծշմարիտ լարգանքը և քրիստոնէի խոնարհութիւնը.	57
Անձնութեացութեան պարտականութիւնը	59
Քրիստոնէի մասնաւոր պարտականութիւնները իւր վերաբերեալ: Խնքնակրթութիւն	59
Մտքի կրթութիւն.	60
Կամքի կրթութիւն	61
Սրտի կրթութիւն	62
Հոգացողութիւն խղճանանքի մաքրութեան մասին	65
Առողջութիւնը՝ իրքն հոգացողութեան առարկան	66
Մարմնաւոր կեանքը և առողջութիւնը պահպանելու միջոցն	69
Քրիստոնէի վարմունքը հիւանդութեան ժամանակ	76
Անձնասպանութեան լանջաւորութիւնը	71
Քրիստոնէի հակեացքը արտաքին բարօրութեան և բաւականութեան մասին.	73
Սրիութիւնը դժբաղդութիւնների ժամանակ	76

Լաւ անուն.	77
Փառասիրութեան և շահասիրութեան զէմ նախազգուշութ.	79
Գ. Քրիստոնէի ընդհանուր պարտականութիւնները մերձաւորների վերաբերեալ	81
Մերձաւորներին սիրելու տեսակները և գործողութիւնները —արդարութիւն և ներողամտութիւն, խաղաղասիրութիւն, քաղաքավարութիւն և քաղցրութիւն, աղնութիւն. ծմբարտախօսութիւն	84—89
Ստախօսութեան լանցաւորութիւնը, ուրիշներին համակրութիւն, նախանձ, չարախնդութիւն, մերձաւորին բարութիւն անելու պատրաստակամութիւն, անպատւութիւն	89—96
Մենամարտութիւն	96
Քրիստոնէի մասնաւոր պարտականութիւնները մերձաւորների մասին. նոցա մտքի լուսաւորութիւնը, մերձաւորների կամքի և սրտի կրթութիւնը, մերձաւորների առողջութեան և կեանքի մասին հոգացողութիւն, մարդասպանութեան լանցաւորութիւնը, մերձաւորի պատուի և լաւ անուան մասին հոգացողութիւն, մերձաւորների կարողութեան մասին հոգացողութիւն .	97—103
Քրիստոնէի պարտականութիւնները հողեսր անձերի, ծընողների, զլամաշնիքի համար զոհ և անձնուրացութիւն պահանջող սէր. համաշխարհալին քաղաքացյութիւն (կոսմոպոլիտիւն)	105
Ծալրագոյն իշխանութեան կարևորութիւնը և իրաւունքները, հպատակների պարտականութիւնները իրանց ժողովրդապետի վերաբերեալ. երդումն կամ խոստումն	111
Ընտանիքը, նորա կարեորութիւնը և նշանակութիւնը, ամուսնական կապի սրբութիւնը, ամուսինների փոխադարձ պարտականութիւնները, որդոց զաստիարակութիւնը, ազգականների մէջ եղած լարաբերութիւնները	130
Հալքրիստոնէի պարտականութիւնը կեանքի բոլոր հանգամանքներում և զժուարութիւններում Ս. Գրքի և Ազգալին Ս. Եկեղեցու ուսումնալ հրահանգուելու.	131
Ազգ	133

Ն Կ Ա Տ Ո Ւ Ա Ծ Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Բ .

Երես.	առզ վերելից	տպուած է.	պէտք է լինի.
	և ներքելից		
1	7 վեր.	Միխաղի	Միխաղի.
13	10 վեր.	տիպուրը	տիպուրը
15	3 ներք.	նորա	նորա.
17	1 վեր.	կազմը	կազմը.
17	5 ներ.	զնով	զնով.
24	5 ներ.	առաքինութեան	առաքինութեան.
30	14 ներ.	իւր	իւր.
30	13 "	Աստուծալին	Աստուծալին.
44	9 վեր.	Գլխաւոր	Գլխաւոր.
50	5 ներ.	յուց	յուց.
52	14 վեր.	օրերերին	օրերին.
52	10 վեր.	քրիստոսի	Քրիստոսի.
52	13 ներք.	անհրաշեմտ	անհրաժեշտ.
53	5 վեր.	ասում	ասում է.
53	11 ներք.	հասարակութիւն	հասարակութիւն.
54	6 "	լւացնելու	լւացնելու.
72	14 "	մերձաւորներին	մերձաւորներին.
96	10 վեր.	դիտէ	դիտէ.

Կան և՛ վրիպակներ, որոնք Տիալը պարզ չ' լինելուց և թէ տառերը միայն ջարդուած լինելուց են առաջացել:

ՀՀ Ազգային գրադարան



NL0163140

